

L.A. Care[®]
Medi-Cal

Անդամի տեղեկագիրք

Ինչ պետք է իմանաք Ձեր նպաստների մասին

L.A. Care Health Plan-ի (L.A. Care)
Ապահովագրության ապացույցի (EOC) և
բացահայտման միասնական ձևաթուղթ



2022 Լոս Անջելես վարչաշրջան

Ուրիշ լեզուներ և ձևաչափեր

Ուրիշ լեզուներ

Այս Անդամի տեղեկագիրքը և ծրագրի ուրիշ նյութեր կարող եք անվճար ստանալ ուրիշ լեզուներով:

Զանգահարեք **Անդամների սպասարկում՝**

1-888-839-9909 (TTY **711**): Հեռախոսազանգն անվճար է:

Այս Անդամի տեղեկագիրքը կարող եք նաև խնդրել ուրիշ լեզուներով և ձևաչափերով՝ մուտք գործելով L.A. Care Connect անդամների կայքամուտք՝ <https://members.lacare.org>:

Կարդացեք այս Անդամի տեղեկագիրքը՝ առողջական խնամքի լեզվական օգնության ծառայությունների, ինչպես՝ բանավոր թարգմանչի և թարգմանչական ծառայությունների մասին ավելին իմանալու համար:

Ուրիշ ձևաչափեր

Այս տեղեկությունն անվճար կարող եք ստանալ ուրիշ ձևաչափերով, ինչպես՝ բրայլյան այբուբենով, 20 չափանոց խոշոր տառատեսակով, ձայնագրված և մատչելի էլեկտրոնային ձևաչափերով: Զանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով: Հեռախոսազանգն անվճար է:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Բանավոր թարգմանչի ծառայություններ

L.A. Care-ը շուրջօրյա դրությամբ անվճար և՛ գրավոր, և՛ բանավոր թարգմանչական ծառայություններ է մատուցում որակյալ բանավոր թարգմանչի միջոցով: Պարտավոր չեք որպես բանավոր թարգմանիչ օգտվել ընտանիքի անդամից կամ ընկերից: Մենք չենք խրախուսում անչափահասներին որպես բանավոր թարգմանիչներ օգտագործելը, եթե դա չի ներկայացնում արտակարգ իրավիճակ: Բանավոր թարգմանչի, լեզվական և մշակութային ծառայությունները տրամադրվում են անվճար: Օգնությունը տրամադրելի է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Լեզվական օգնության, կամ այս տեղեկագիրքը ուրիշ լեզվով ստանալու համար զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Հեռախոսազանգն անվճար է:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Տրամադրելի են լեզվական օգնության անվճար ծառայություններ: Կարող եք խնդրել բանավոր թարգմանչական կամ թարգմանչական ծառայություններ, Ձեր լեզվով կամ տարբեր ձևաչափով տեղեկություն, կամ օժանդակ օգնություններ և ծառայություններ: Զանգահարեք L.A. Care **1-888-839-9909 (TTY 711)** համարով, օրը, 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

English

ATTENTION: If you need help in your language call **1.888.839.9909** (TTY: 711). Aids and services for people with disabilities, like documents in braille and large print, are also available. Call **1.888.839.9909** (TTY: 711). These services are free of charge.

Spanish

ATENCIÓN: Si necesita ayuda en su idioma, llame al **1.888.839.9909** (TTY: 711). También ofrecemos asistencia y servicios para personas con discapacidades, como documentos en braille y con letras grandes. Llame al **1.888.839.9909** (TTY: 711). Estos servicios son gratuitos.

Arabic

يُرجى الانتباه: إذا احتجت إلى المساعدة بلغتك، فاتصل بـ **1.888.839.9909** (TTY: 711). تتوفر أيضًا المساعدات والخدمات للأشخاص ذوي الإعاقة، مثل المستندات المكتوبة بطريقة بربيل والخط الكبير. اتصل بـ **1.888.839.9909** (TTY: 711). هذه الخدمات مجانية.

Armenian

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Եթե Ձեզ օգնություն է հարկավոր Ձեր լեզվով, զանգահարեք **1.888.839.9909** (TTY: 711): Կան նաև օժանդակ միջոցներ ու ծառայություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար, օրինակ՝ Բրայլի գրատիպով ու խոշորատառ տպագրված նյութեր: Չանգահարեք **1.888.839.9909** (TTY: 711): Այդ ծառայություններն անվճար են:

Cambodian

ចំណាំ: បើអ្នក ត្រូវ ការជំនួយ ជាភាសា របស់អ្នក សូម ទូរស័ព្ទទៅលេខ **1.888.839.9909** (TTY: 711)។ ជំនួយ និង សេវាកម្ម ស្រមាប់ ជនពិការ ដូចជាឯកសារសរសេរជាអក្សរធំ ស្រមាប់ជនពិការភ្នែក ឬឯកសារសរសេរជាអក្សរព្រមព្រីន ក៏អាចរកបានផងដែរ។ ទូរស័ព្ទមកលេខ **1.888.839.9909** (TTY: 711)។ សេវាកម្មទាំងនេះមិនគិតថ្លៃឡើយ។

Chinese

请注意：如果您需要以您的母语提供帮助，请致电 **1.888.839.9909** (TTY: 711)。另外还提供针对残疾人士的帮助和服务，例如文盲和需要较大字体阅读，也是方便取用的。请致电 **1.888.839.9909** (TTY: 711)。这些服务都是免费的。

Farsi

توجه: اگر می‌خواهید به زبان خود کمک دریافت کنید، با **1.888.839.9909** (TTY: 711) تماس بگیرید. کمک‌ها و خدمات مخصوص افراد دارای معلولیت، مانند نسخه‌های خط بربیل و چاپ با حروف بزرگ، نیز موجود است. با **1.888.839.9909** (TTY: 711) تماس بگیرید. این خدمات رایگان ارائه می‌شوند.

Hindi

ध्यान दें: अगर आपको अपनी भाषा में सहायता की आवश्यकता है तो **1.888.839.9909** (TTY: 711) पर कॉल करें। अशक्तता वाले लोगों के लिए सहायता और सेवाएं, जैसे ब्रेल और बड़े प्रिंट में भी दस्तावेज़ उपलब्ध हैं। **1.888.839.9909** (TTY: 711) पर कॉल करें। ये सेवाएं नि: शुल्क हैं।



Չանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY 711):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք www.lacare.org:

Hmong

CEEB TOOM: Yog koj xav tau kev pab txhais koj hom lus hu rau **1.888.839.9909** (TTY: **711**). Muaj cov kev pab txhawb thiab kev pab cuam rau cov neeg xiam oob qhab, xws li puav leej muaj ua cov ntawv su thiab luam tawm ua tus ntawv loj. Hu rau **1.888.839.9909** (TTY: **711**). Cov kev pab cuam no yog pab dawb xwb.

Japanese

注意日本語での対応が必要な場合は **1.888.839.9909** (TTY: **711**) へお電話ください。点字の資料や文字の拡大表示など、障がいをお持ちの方のためのサービスも用意しています。 **1.888.839.9909** (TTY: **711**) へお電話ください。これらのサービスは無料で提供しています。

Korean

유의사항: 귀하의 언어로 도움을 받고 싶으시면 **1.888.839.9909** (TTY: **711**) 번으로 문의하십시오. 점자나 큰 활자로 된 문서와 같이 장애가 있는 분들을 위한 도움과 서비스도 이용 가능합니다. **1.888.839.9909** (TTY: **711**) 번으로 문의하십시오. 이러한 서비스는 무료로 제공됩니다.

Laotian

ປະກາດ: ຖ້າທ່ານຕ້ອງການຄວາມຊ່ວຍເຫຼືອໃນພາສາຂອງທ່ານໃຫ້ໂທຫາເບີ **1.888.839.9909** (TTY: **711**). ຍັງມີຄວາມຊ່ວຍເຫຼືອແລະການບໍລິການສໍາລັບຄົນພິການ ເຊັ່ນເອກະສານທີ່ເປັນອັກສອນນູນແລະມິໂຕພິມໃຫຍ່ ໃຫ້ໂທຫາເບີ **1.888.839.9909** (TTY: **711**). ການບໍລິການເຫຼົ່ານີ້ບໍ່ຕ້ອງເສຍຄ່າໃຊ້ຈ່າຍໃດໆ.

Mien

LONGC HNYOUV JANGX LONGX OC: Beiv taux meih qiemx longc mienh tengx faan benx meih nyei waac nor douc waac daaih lorx taux **1.888.839.9909** (TTY: **711**). Liouh lorx jauvlouc tengx aengx caux nzie gong bun taux ninh mbuo wuaaic fangx mienh, beiv taux longc benx nzangc-pokc bun hluo mbiutc aengx caux aamz mborqv benx domh sou se mbenc nzoih bun longc. Douc waac daaih lorx **1.888.839.9909** (TTY: **711**). Naaiv deix nzie weih gong-bou jauv-louc se benx wang-henh tengx mv zuqc cuotv nyaanh oc.

Panjabi

ਧਿਆਨ ਦਿਓ: ਜੇ ਤੁਹਾਨੂੰ ਆਪਣੀ ਭਾਸ਼ਾ ਵਿੱਚ ਮਦਦ ਦੀ ਲੋੜ ਹੈ ਤਾਂ ਕਾਲ ਕਰੋ **1.888.839.9909** (TTY: **711**). ਅਪਾਰਜ ਲੋਕਾਂ ਲਈ ਸਹਾਇਤਾ ਅਤੇ ਸੇਵਾਵਾਂ, ਜਿਵੇਂ ਕਿ ਬ੍ਰੇਲ ਅਤੇ ਮੋਟੀ ਛਪਾਈ ਵਿੱਚ ਦਸਤਾਵੇਜ਼, ਵੀ ਉਪਲਬਧ ਹਨ| ਕਾਲ ਕਰੋ **1.888.839.9909** (TTY: **711**). ਇਹ ਸੇਵਾਵਾਂ ਮੁਫਤ ਹਨ|

Russian

ВНИМАНИЕ! Если вам нужна помощь на вашем родном языке, звоните по номеру **1.888.839.9909** (TTY: **711**). Также предоставляются средства и услуги для людей с ограниченными возможностями, например документы крупным шрифтом или шрифтом Брайля. Звоните по номеру **1.888.839.9909** (TTY: **711**). Такие услуги предоставляются бесплатно.



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք www.lacare.org

Բարի գալուստ L.A. Care

Շնորհակալ ենք, որ միացել եք L.A. Care-ին: L.A. Care-ը առողջապահական մի ծրագիր է անձանց համար, ովքեր Medi-Cal ունեն: L.A. Care-ը նաև կոչվում է Lnu Անջելես վարչաշրջանի համար տեղական նախաձեռնության առողջապահական իշխանություն (Local Initiative Health Authority for Los Angeles County): Կարող եք մեզ անվանել «L.A. Care»: L.A. Care-ը Կալիֆորնիա նահանգի հետ գործելով, օգնում է, որ ստանաք Ձեզ անհրաժեշտ առողջական խնամքը: L.A. Care-ը տեղական բնույթի հանրային էություն է: Ի դեպ, մենք երկրում հանրորեն շահագործվող ամենից ընդարձակ առողջապահական ծրագիրն ենք: Մենք սպասարկում ենք անձանց, ովքեր բնակվում են Lnu Անջելես վարչաշրջանում (կոչվում է՝ մեր «սպասարկման տարածք»): L.A. Care-ը նաև գործում է չորս (4) Առողջապահական ծրագրի գործընկերների հետ (L.A. Care-ը համարվում է նույնպես «Առողջապահական ծրագրի գործընկեր»), մեր անդամներին առողջական խնամքի ծառայություններ մատուցելու համար: Երբ Medi-Cal-ի անդամը միանում է L.A. Care-ին, անդամը կարող է որոշել ծառայություններն ստանալ ստորև նշված Առողջապահական ծրագրի գործընկերներից որևէ մեկի միջոցով, քանի դեռ առկա է ծրագրի ընտրանքը:

- Anthem Blue Cross
- Blue Shield of California Promise Health Plan
- Kaiser Permanente
- L.A. Care

Անդամի տեղեկագիրք

Այս Անդամի տեղեկագիրքը Ձեզ բացատրում է Ձեր ապահովագրությունը L.A. Care-ի ներքո: Խնդրում ենք այն կարդալ ուշադիր և լրիվ: Այն կօգնի, որ հասկանաք Ձեր նպաստներն ու ծառայությունները և օգտվեք նրանցից: Այն նաև բացատրում է Ձեր իրավունքները և պարտավորությունները որպես L.A. Care-ի անդամ: Եթե ունեք հատուկ առողջական կարիքներ, անպայման կարդացեք Ձեզ վերաբերող բաժինները:

Այս Անդամի տեղեկագիրքը կոչվում է նաև Ապահովագրության ապացույցի (Evidence of Coverage, EOC) և բացահայտման միասնական ձևաթուղթ: Այն ամփոփումն է L.A. Care-ի կանոնների և քաղաքականությունների և հիմնվում է L.A. Care-ի և Առողջական խնամքի սպասարկման բաժնի (Department of Health Care Services, DHCS) միջև կնքված պայմանագրի վրա: Հավելյալ տեղեկություն ցանկանալու դեպքում զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Զանգահարեք **1-888-839-9909 (TTY 711)** համարով խնդրելու պատճենը L.A. Care-ի և DHCS-ի միջև կնքված պայմանագրի: Կարող եք նաև խնդրել Անդամի տեղեկագրի մի ուրիշ անվճար պատճեն կամ այցելել L.A. Care-ի կայքը՝ lacare.org, Անդամի տեղեկագիրքը աչքի անցկացնելու համար: Կարող եք նաև խնդրել Ձեզ համար անվճար պատճենը L.A. Care-ի ոչ-սեփականատիրական կլինիկական և վարչական քաղաքականությունների և ընթացակարգերի, կամ իմանալ այս տեղեկությունը L.A. Care-ի կայքից ձեռք բերելու միջոցի մասին:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
 հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Դիմեք մեզ

L.A. Care-ն այստեղ է օգնելու համար: Եթե հարցեր ունեք, զանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով:

L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է:

Կարող եք նաև որևէ ժամանակ առցանց այցելել հետևյալ կայքը՝ lacare.org:

Շնորհակալություն,

L.A. Care Health Plan

1055 W. 7th Street, 10th Floor

Los Angeles, CA 90017



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Բովանդակություն

Ուրիշ լեզուներ և ձևաչափեր	1
Ուրիշ լեզուներ	1
Ուրիշ ձևաչափեր.....	1
Բանավոր թարգմանչի ծառայություններ	2
Բարի գալուստ L.A. Care.....	6
Անդամի տեղեկագիրք.....	6
Դիմեք մեզ.....	7
Բովանդակություն	8
1. Որպես անդամ սկսելը	10
Ինչպես ստանալ օգնությունը.....	10
Ով կարող է անդամակցել	11
Ճանաչողական քարտեր	11
2. Ձեր առողջապահական ծրագրի մասին	13
Առողջապահական ծրագրի ակնարկ.....	13
Ինչպես է գործում Ձեր ծրագիրը.....	15
Առողջապահական ծրագրեր փոխելը	15
Նոր վարչաշրջան կամ Կալիֆորնիայից դուրս փոխադրվող քոլեջական ուսանողներ	16
Խնամքի շարունակում	17
Ծախքեր	19
3. Ինչպես խնամք ստանալ	23
Առողջական խնամքի ծառայություններ ստանալը	23
Առաջնային խնամքի մատակարար (PCP).....	24
Մատակարարների ցանց	27
Ժամադրություններ	34
Ձեր ժամադրության հասնելը	35
Ջնջում և վերանշանակում	35
Վճարում	35
Ուղեգրեր.....	37
Նախավավերացում (նախօրոք լիազորում).....	38
Երկրորդ կարծիքներ.....	39
Զգայուն խնամք	40
Հրատապ խնամք	43
Շտապ օգնության խնամք	43



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
 հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ 45

Նախօրոք հրահանգներ 46

Օրգանի և հյուսվածքի նվիրում 46

4. Նպաստներ և ծառայություններ 47

Ինչ է ապահովագրում Ձեր առողջապահական ծրագիրը 47

L.A. Care-ի կողմից ապահովագրված Medi-Cal-ի նպաստներ 50

L.A. Care-ի կողմից ապահովագրված ուրիշ նպաստներ և ծրագրեր 70

Medi-Cal-ի ուրիշ ծրագրեր և ծառայություններ 73

Ծառայություններ, որոնք չեք կարող ստանալ L.A. Care-ի կամ Medi-Cal-ի միջոցով 77

Նոր և առկա տեխնոլոգիաների գնահատում 78

5. Երեխայի և պատանիների լավ խնամք 79

Մանկաբուժական ծառայություններ 79

Առողջ-երեխայի առողջության ստուգումներ և կանխարգելիչ խնամք 80

Արյան կապարից թունավորման ստուգում 82

Երեխայի և պատանիների լավ խնամքի ծառայություններ ստանալու օգնություն 82

Ատամնաբուժական ստուգումներ 82

6. Խնդիրների հաղորդում և լուծում 85

Գանգատներ 86

Բողոքարկումներ 87

Ինչ անել բողոքարկման որոշման համաձայն չլինելու դեպքում 89

Գանգատներ և Բժշկական անկախ վերանայումներ (IMR) Կառավարվող առողջական խնամքի բաժնի մոտ 90

Նահանգային լուծումներ 91

Խարդախություն, վատնում և չարաշահում 93

7. Իրավունքներ և պարտավորություններ 95

Ձեր իրավունքները 95

Ձեր պարտավորությունները 97

Ոչ խտրականության ծանուցագիր 98

Որպես անդամ ներգրավվելու եղանակներ 100

Գաղտնիության գործելակերպի ծանուցագիր 101

Օրենքների մասին ծանուցագիր 110

Ծանուցագիր Medi-Cal-ի՝ որպես վերջին ելքի վճարողի, այլ առողջապահական ապահովագրության և վնասի վերականգնման վերաբերյալ 110

Ծանուցագիր անշարժ գույքի միջոցով վճարված գումարի վերադարձման վերաբերյալ 111

Գործողության ծանուցագիր 112

8. Կարևոր թվանշաններ և բառեր, որոնք պետք է իմանալ 113

Կարևոր հեռախոսահամարներ 113

Բառեր, որոնք պետք է իմանալ 116



Ջանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
 հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

1. Որպես անդամ սկսելը

Ինչպես ստանալ օգնությունը

L.A. Care-ը ցանկանում է, որ գոհ լինեք Ձեր առողջական խնամքից: Եթե Ձեր խնամքի վերաբերյալ ունեք որևէ հարց կամ մտահոգություն, L.A. Care-ը ցանկանում է լսել Ձեզանից:

Անդամների սպասարկում

L.A. Care-ի **Անդամների սպասարկումը** այստեղ է Ձեզ օգնելու համար: L.A. Care-ը կարող է՝

- Պատասխանել Ձեր առողջապահական ծրագրին և ապահովագրված ծառայություններին վերաբերող հարցերին
- Օգնել, որ ընտրեք Առաջնային խնամքի մատակարար (Primary Care Provider, PCP)
- Բացատրել որտեղ ստանալ Ձեզ անհրաժեշտ խնամքը
- Օգնել, որ ձեռք բերեք բանավոր թարգմանչի ծառայություններ, եթե անգլերեն չեք խոսում
- Օգնել, որ ստանաք ուրիշ լեզուներով և ձևաչափերով տեղեկություն
- Օգնություն՝ ժամանակին ժամադրություններ ձեռք բերելու համար
- Փոխարինել Ձեր ճանաչողական քարտը
- Պատասխանել մատակարարի ուղարկած հաշվին վերաբերող հարցերի
- Պատասխանել Ձեր լուծել չկարողացած խնդիրների վերաբերյալ հարցերի
- Օգնել փոխադրական ժամադրության ապահովման

Օգնության կարիքի դեպքում զանգահարեք **1-888-839-9909 (TTY 711)** համարով: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: L.A. Care-ը պարտավոր է ապահովել, որ զանգահարելիս Ձեր սպասումը լինի 10 րոպեից նվազ:

Կարող եք նաև որևէ ժամանակ առցանց այցելել հետևյալ կայքը՝ lacare.org:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Ով կարող է անդամակցել

Դուք որակավորվում եք L.A. Care-ի համար, քանի որ որակավորվում եք Medi-Cal-ի համար և բնակվում եք Լոս Անջելես վարչաշրջանում: Եթե հարցեր ունեք Ձեր Medi-Cal-ի ապահովագրության վերաբերյալ կամ թե երբ պետք է թարմացնեք Ձեր Medi-Cal-ը, խնդրում ենք զանգահարել Լոս Անջելես վարչաշրջանի Հանրային սոցիալական սպասարկման բաժին (Department of Public Social Services) **1-866-613-3777** համարով: Թերևս նաև Medi-Cal-ի համար որակավորվեք Սոցիալական ապահովության միջոցով՝ քանի որ ստանում եք SSI/SSP:

Անդամագրման վերաբերյալ հարցերի համար զանգահարեք Առողջական խնամքի ընտրանքներ (Health Care Options) **1-800-430-4263** (TTY **1-800-430-7077** կամ **711**) համարով: Կամ այցելեք հետևյալ կայքը՝ <https://www.healthcareoptions.dhcs.ca.gov/>:

Անցումային Medi-Cal

Անցումային Medi-Cal-ը (Transitional Medi-Cal) կոչվում է նաև «Աշխատող անձանց Medi-Cal»: Անցումային Medi-Cal ստանալու հնարավորություն կարող եք ունենալ, եթե Medi-Cal-ով այլևս ապահովագրված չեք հետևյալ պատճառներով՝

- Սկսել եք ավելի շատ գումար վաստակել:
- Ձեր ընտանիքը սկսել է ստանալ երեխայի կամ կողակցի աջակցության ավելի խոշոր նպաստ:


Անցումային Medi-Cal-ի համար որակավորվելու վերաբերյալ հարցեր կարող եք տալ Ձեր տեղական վարչաշրջանի առողջապահության և մարդու ծառայությունների գրասենյակին՝ <http://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/CountyOffices.aspx> կամ զանգահարել Առողջական խնամքի ընտրանքներ **1-800-430-4263** (TTY **1-800-430-7077** կամ **711**) համարով:

Ճանաչողական քարտեր

Որպես L.A. Care-ի անդամ, Դուք կստանաք L.A. Care-ի ճանաչողական քարտ: Ձեր L.A. Care-ի ճանաչողական քարտը և Medi-Cal-ի նպաստների ճանաչողական քարտը (Benefits Identification Card, BIC), որը Ձեզ է ուղարկել Կալիֆորնիա նահանգը, պարտավոր եք ցույց տալ որևէ առողջական խնամքի ծառայություն կամ դեղատոմսային դեղ ստանալու պահին: Պարտավոր եք միշտ Ձեզ հետ կրել բոլոր առողջապահական քարտերը: Ահավասիկ BIC-ի և L.A. Care-ի ճանաչողական քարտերի նմուշներ, ցույց տալու համար, թե ինչպիսին կլինի Ձերը՝



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:



Ժամանակավոր ճանաչողական քարտ կարող եք տպել L.A. Care Connect կայքից՝ <https://members.lacare.org>:

Ձեր L.A. Care-ի ճանաչողական քարտը Ձեր անդամագրման ամսաթվին հաջորդող մի քանի շաբաթից չստանալու, կամ Ձեր քարտը վնասված, կորած, կամ գողացված լինելու դեպքում, անմիջապես զանգահարեք **Անդամների սպասարկում**: L.A. Care-ը Ձեզ անվճար մի նոր քարտ կուղարկի: Զանգահարեք **1-888-839-9909 (TTY 711)** համարով:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

2. Ձեր առողջապահական ծրագրի մասին

Առողջապահական ծրագրի ակնարկ

L.A. Care-ը առողջապահական ծրագիր է այս վարչաշրջաններում Medi-Cal ունեցողների համար՝ Լոս Անջելես վարչաշրջան: L.A. Care-ը Կալիֆորնիա նահանգի հետ գործելով, օգնում է, որ ստանաք Ձեզ անհրաժեշտ առողջական խնամքը:

Կարող եք **Անդամների սպասարկման** ներկայացուցիչներից մեկի հետ խոսելով ավելին իմանալ առողջապահական ծրագրի և այն հօգուտ Ձեզ օգտագործելու կերպի մասին: Զանգահարեք **1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Երբ է սկսվում և ավարտվում Ձեր ապահովագրությունը

Երբ անդամագրվեք L.A. Care-ին, մենք Ձեզ անդամի ճանաչողական քարտ կուղարկենք Ձեր անդամագրման ամսաթվին հաջորդող երկու շաբաթից: Ձեր L.A. Care-ի ճանաչողական քարտը և Medi-Cal-ի նպաստների ճանաչողական քարտը (BIC) պարտավոր եք ցույց տալ որևէ առողջական խնամքի ծառայություն կամ դեղատոմսային դեղ ստանալու պահին:

Ձեր Medi-Cal-ի ապահովագրությունը անհրաժեշտ կլինի թարմացնել ամեն տարի: Եթե Ձեր վարչաշրջանի տեղական գրասենյակը չի կարող թարմացնել Ձեր Medi-Cal-ի ապահովագրությունը էլեկտրոնային միջոցների օգտագործումով, վարչաշրջանը Ձեզ կուղարկի Medi-Cal-ի թարմացման ձևաթուղթ: Այս ձևաթուղթը լրացրեք և վերադարձրեք Ձեր տեղի վարչաշրջանի մարդու ծառայությունների գործակալության: Ձեր տեղեկությունը կարող եք վերադարձնել առցանց, անձամբ, կամ հեռախոսով կամ այլ էլեկտրոնային միջոցներով, եթե առկա են Ձեր վարչաշրջանում:

Ձեր ապահովագրությունն ուժի մեջ է մտնում առողջապահական ծրագրում անդամագրության լրացման հաջորդող ամսվա 1-ին օրը: Ստուգեք Առողջական խնամքի ընտրանքների կողմից Ձեր նամակը Ձեր ապահովագրության գործուն ամսաթվի համար:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

2| Ձեր առողջապահական ծրագրի մասին

Կարող եք որևէ ժամանակ խնդրել Ձեր L.A. Care-ի ապահովագրության դադարեցումը և ընտրել մի ուրիշ առողջապահական ծրագիր: Նոր ծրագիր ընտրելու օգնության համար զանգահարեք Առողջական խնամքի ընտրանքներ **1-800-430-4263** (TTY **1-800-430-7077** կամ **711**)
համարով: Կամ այցելեք հետևյալ կայքը՝ <https://www.healthcareoptions.dhcs.ca.gov>: Կարող եք նաև խնդրել Ձեր Medi-Cal-ի դադարեցումը:

L.A. Care-ը առողջապահական ծրագիրն է Medi-Cal-ի անդամների համար Լոս Անջելես վարչաշրջանում: Ձեր տեղական գրասենյակը գտեք հետևյալ կայքում՝ <https://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/CountyOffices.aspx>:

L.A. Care-ին իրավասու լինելը կարող է վերջ գտնել, եթե ճշմարիտ է հետևյալներից որևէ մեկը՝

- Տեղափոխվում եք Լոս Անջելես վարչաշրջանից դուրս
- Գտնվում եք բանտում կամ արգելափակման մեջ
- Այլևս Medi-Cal չունեք
- Եթե իրավասու դառնաք հրաժարման ծրագրի, որը Ձեզանից պահանջում է անդամագրվել FFS Medi-Cal-ի:

Եթե կորցնեք Ձեր L.A. Care Medi-Cal-ի ապահովագրությունը, կարող եք դեռ իրավասու լինել Վճարովի ծառայությամբ (Fee-for-Service, FFS) Medi-Cal-ի ապահովագրության: Եթե վստահ չեք, թե դեռ ապահովագրված եք L.A. Care-ի կողմից, խնդրում ենք զանգահարել **1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Կառավարվող խնամքում հատուկ նկատառումներ Ամերիկյան հնդկացիների համար

Ամերիկյան հնդկացիները որևէ ժամանակ և որևէ պատճառով իրավունք ունեն չանդամագրվել Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագրին կամ կարող են հեռանալ իրենց Medi-Cal-ի կառավարվող առողջապահական ծրագրից և վերադառնալ FFS Medi-Cal-ի:

Եթե Ամերիկյան հնդկացի եք, իրավունք ունեք առողջական խնամքի ծառայություններն ստանալու Հնդկացիների առողջապահական մատակարարի (Indian Health Care Provider, IHCP) մոտ: Դուք նաև կարող եք շարունակել անդամակցությունը L.A. Care-ին կամ ապանդամագրվել դրանից՝ միաժամանակ առողջական խնամքի ծառայություններ ստանալով այս վայրերից: Անդամագրման և ապանդամագրման մասին տեղեկության համար զանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Ինչպես է գործում Ձեր ծրագիրը

L.A. Care-ը DHCS-ի հետ պայմանագիր կնքած կառավարվող խնամքի առողջապահական ծրագիր է: L.A. Care-ը L.A. Care-ի սպասարկման տարածքում գործում է բժիշկների, հիվանդանոցների և ուրիշ առողջական խնամքի մատակարարների հետ, Ձեզ՝ անդամին, առողջական խնամք մատուցելու համար: Մինչ Դուք անդամ եք L.A. Care-ին, թերևս իրավասու լինեք ստանալու մի շարք հավելյալ ծառայություններ, որոնք մատուցվում են FFS Medi-Cal-ի կողմից: Սրանք ներառում են ամբուլատոր դեղատոմսեր, ոչ-դեղատոմսային դեղեր և մի շարք բժշկական պաշարներ FFS Medi-Cal Rx-ի միջոցով:

Անդամների սպասարկման ներկայացուցիչը Ձեզ կբացատրի, թե ինչպես է գործումը L.A. Care-ը, ինչպես կարող եք ստանալ Ձեզ անհրաժեշտ խնամքը, ինչպես ապահովել մատակարարի ժամադրությունները մատչելիության տիպական ժամանակամիջոցում, ինչպես խնդրել անվճար բանավոր թարգմանչական ծառայություններ և ինչպես պարզել, թե արդյո՞ք որակավորվում եք փոխադրական ծառայությունների համար:

Հավելյալ տեղեկության համար զանգահարեք **1-888-839-9909 (TTY 711)** համարով: Անդամների սպասարկման մասին տեղեկությունը կարող եք նաև գտնել առցանց հետևյալ կայքում՝ [lacare.org](https://www.lacare.org):

Առողջապահական ծրագրեր փոխելը

Կարող եք L.A. Care-ից հեռանալ և ուրիշ առողջապահական ծրագրի միանալ Ձեր բնակության վարչաշրջանում որևէ ժամանակ: Զանգահարեք Առողջական խնամքի ընտրանքներ **1-800-430-4263 (TTY 1-800-430-7077 կամ 711)** համարով՝ նոր ծրագիր ընտրելու համար: Կարող եք զանգահարել որևէ ժամանակ կ.ա. 8-ից կ.հ. 6-ը, երկուշաբթիից ուրբաթ: Կամ այցելեք հետևյալ կայքը՝ <https://www.healthcareoptions.dhcs.ca.gov>:

Մինչև 30 օր է պահանջվում L.A. Care-ից հեռանալու և Ձեր վարչաշրջանում մի ուրիշ ծրագրի անդամագրվելու Ձեր խնդրանքն ընթացքի մեջ դնելու համար, եթե չկան խնդրանքի հետ կապված հարցեր: Ձեր խնդրանքի կարգավիճակը պարզելու համար զանգահարեք Առողջական խնամքի ընտրանքներ **1-800-430-4263 (TTY 1-800-430-7077 կամ 711)** համարով:

Եթե ցանկանում եք L.A. Care-ից ավելի շուտ հեռանալ, կարող եք Առողջական խնամքի ընտրանքներից խնդրել արագացված (արագ) ապանդամագրում: Եթե Ձեր խնդրանքի դրդապատճառը համապատասխանում է արագացված ապանդամագրման կանոններին, կստանաք մի նամակ, որը Ձեզ կասի, որ ապանդամագրվել եք:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ [lacare.org](https://www.lacare.org):

Անդամները, ովքեր կարող են արագացված ապանդամագրում խնդրել, ներառում են՝ առանց դրանցով սահմանափակվելու՝ Խնամատարության կամ Որդեգրության օգնության ծրագրերի ներքո ծառայություններ ստացող երեխաները. հատուկ առողջական խնամքի կարիք ունեցող անդամները, և անդամները, ովքեր արդեն անդամագրվել են Medicare-ի կամ ուրիշ Medi Cal-ի կամ առևտրական եղանակով կառավարվող խնամքի ծրագրի:

Կարող եք L.A. Care-ից հեռանալը խնդրել անձամբ Ձեր տեղական վարչաշրջանի առողջապահության և մարդու ծառայությունների գրասենյակում: Ձեր տեղական գրասենյակը գտեք հետևյալ կայքում՝ <https://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/CountyOffices.aspx>: Կամ զանգահարեք Առողջական խնամքի ընտրանքներ **1-800-430-4263** (TTY **1-800-430-7077** կամ **711**) համարով:

Նոր վարչաշրջան կամ Կալիֆորնիայից դուրս փոխադրվող քուլեջական ուսանողներ

Եթե քուլեջ հաճախելու նպատակով Կալիֆորնիայում փոխադրվում եք մի նոր վարչաշրջան, L.A. Care-ը կապահովագրի շտապ օգնության կայանի և հրատապ խնամքի ծառայությունները Ձեր նոր վարչաշրջանում: Արտակարգ իրավիճակի ծառայությունները և հրատապ խնամքը տրամադրելի են Medi-Cal-ի բոլոր անդամներին նահանգով մեկ, անկախ՝ բնակության վարչաշրջանից: Սովորական և կանխարգելիչ խնամքը ապահովագրվում են միայն Ձեր բնակած վարչաշրջանում:

Եթե անդամագրվել եք Medi-Cal-ին և քուլեջ եք հաճախելու Կալիֆորնիայի մի ուրիշ վարչաշրջանում, պարտավոր չեք Medi-Cal-ի համար դիմել այդ վարչաշրջանում:

Երբ տնից ժամանակավորապես եք հեռանում քուլեջ հաճախելու համար Կալիֆորնիայի մի ուրիշ վարչաշրջանում, Ձեզ տրամադրելի է երկու ընտրանք: Դուք կարող եք՝

- Իմացնել Lnu Անջելես վարչաշրջանի Հանրային սոցիալական սպասարկման բաժնին զանգահարելով **1-866-613-3777** համարով, կամ այցելել <http://dps.lacounty.gov> կայքը՝ տեղեկացնելու, որ ժամանակավորապես տեղափոխվում եք քուլեջ հաճախելու համար և տալու նոր վարչաշրջանում Ձեր հասցեն: Վարչաշրջանը նահանգի սվյալների շտեմարանում կթարմացնի գործի արձանագրությունները Ձեր նոր հասցեով և վարչաշրջանի այլագրով: Այս ընտրանքն օգտագործեք եթե ցանկանում եք սովորական կամ կանխարգելիչ խնամք ստանալ Ձեր նոր վարչաշրջանում: Թերևս հարկադրվեք փոխել առողջապահական ծրագրերը, եթե L.A. Care-ը չի գործում Ձեր հաճախելիք քուլեջի վարչաշրջանում: Հարցերի և նոր առողջապահական ծրագրին անդամագրման ուշացումը կանխարգելելու համար զանգահարեք Առողջական խնամքի ընտրանքներ **1-800-430-4263** (TTY **1-800-430-7077** կամ **711**) համարով:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

ԿԱՄ

- Որոշեք չփոխել Ձեր առողջապահական ծրագիրը, երբ ժամանակավորապես փոխադրվում եք քոլեջ հաճախելու համար ուրիշ վարչաշրջանում: Նոր վարչաշրջանում Ձեզ մատչելի կլինեն միայն շտապ օգնության կայանի եւ հրատապ խնամքի ծառայությունները մի շարք վիճակների համար: Հավելյալ տեղեկության համար գնացեք 3-րդ Գլուխ, «Ինչպես խնամք ստանալ»: Սովորական կամ կանխարգելիչ առողջական խնամքի համար, պարտավոր եք օգտվել L.A. Care-ի մատակարարների սովորական ցանցից, որը գտնվում է Ձեր ընտանիքի բնակության վարչաշրջանում:

Եթե Կալիֆորնիայից ժամանակավորապես եք հեռանում ուրիշ նահանգում քոլեջ հաճախելու համար և ցանկանում եք պահել Ձեր Medi-Cal-ի ապահովագրությունը, կապ հաստատեք Lnu Անջելես վարչաշրջանի Հանրային սոցիալական սպասարկման բաժնի մոտ Ձեր իրավասության աշխատողի հետ: Քանի դեռ իրավասու եք, Medi-Cal-ը կապահովագրի արտակարգ իրավիճակի ծառայությունները և հրատապ խնամքը ուրիշ նահանգում: Մենք նաև կապահովագրենք շտապ օգնությունը, որը հանգեցնում է հիվանդանոցային բուժման Կանադայում և Մեքսիկայում, եթե ծառայությունը վավերացված է և բժշկն ու հիվանդանոցը բավարարում են Medi-Cal-ի կանոնները: Սովորական և կանխարգելիչ խնամքի ծառայությունները, ներառյալ՝ դեղատոմսային դեղերը, չեն ապահովագրվում Կալիֆորնիայից դուրս: Ուրիշ նահանգում Medicaid ցանկանալու դեպքում, պարտավոր կլինեք դիմել այդ նահանգում: Դուք իրավասու չեք լինի Medi-Cal-ի և L.A. Care-ը չի վճարի Ձեր առողջական խնամքի համար:

Խնամքի շարունակում

Որպես L.A. Care-ի անդամ, Դուք Ձեր առողջական խնամքը պիտի ստանաք L.A. Care-ի ցանցում գտնվող մատակարարներից: Մի շարք դեպքերում, թերևս կարողանաք գնալ մատակարարների, որոնք չեն գտնվում L.A. Care-ի ցանցում: Սա կոչվում է խնամքի շարունակում: Զանգահարեք L.A. Care և մեզ հայտնեք, եթե Ձեզ անհրաժեշտ է այցելել արտացանցային մատակարարի: Մենք Ձեզ կհայտնենք, եթե ունեք խնամքի շարունակում: Խնամքի շարունակումից կարող եք օգտվել մինչև 12 ամիս, կամ ավելի՝ մի շարք դեպքերում, եթե ճշմարիտ են բոլոր հետևյալները՝

- Ընթացքի մեջ գտնվող հարաբերություն ունեք ծրագրին չմասնակցող մատակարարի հետ՝ նախքան L.A. Care-ին անդամագրվելը
- Ծրագրին չմասնակցող մատակարարը կամենում է գործել L.A. Care-ի հետ և համաձայնում է L.A. Care-ի պահանջմունքներին



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
 հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

- Ծրագրին չմասնակցող մատակարարը Ձեզ տեսել է առնվազն մեկ անգամ L.A. Care-ին անդամագրվելուն նախորդող տասներկու (12) ամիսների ընթացքում ոչ-արտակարգ իրավիճակային այցի համար
- Ծրագրին չմասնակցող մատակարարը Ձեզ տեսել է առնվազն մեկ անգամ ծառայությունները Շրջանային կենտրոնից L.A. Care-ին փոխանցելուն նախորդող վեց (6) ամիսների ընթացքում
- L.A. Care-ը չունի խնամքի որակի փաստագրված մտահոգություն ծրագրին չմասնակցող մատակարարի վերաբերյալ

Եթե Ձեր մատակարարները L.A. Care-ին չմիանան 12 ամիսների ավարտին, չհամաձայնեն L.A. Care-ի վճարման սակերին կամ չբավարարեն խնամքի որակի պահանջմունքները, կհարկադրվեք անցնել L.A. Care-ի ցանցի մատակարարների կամ զանգահարել **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով՝ Ձեր ընտրանքները քննարկելու համար:

L.A. Care-ից հեռացող մատակարարներ կամ ծրագրին չմասնակցող մատակարարներ

Եթե որոշակի առողջական վիճակների համար բուժում եք ստանում մի մատակարարից, ով L.A. Care-ի մատակարար չէ կամ Ձեր մատակարարը դադարում է գործել L.A. Care-ի հետ, թերևս կարողանաք շարունակել ծառայությունների ստացումը այդ մատակարարից: Սա խնամքի շարունակման մի ուրիշ կերպ է: Խնամքի շարունակման համար L.A. Care-ի մատուցած ծառայությունները ներառում են, առանց դրանցով սահմանափակվելու՝

- Սուր վիճակներ (արագ ուշադրության կարոտ բժշկական վիճակ) – քանի դեռ վիճակը տևում է:
- Քրոնիկ ֆիզիկական և վարքագծային վիճակներ (բժշկական վիճակ, որն ունեք երկար ժամանակ) – այնքան ժամանակի համար, ինչքան պահանջվում է լրացնելու բուժման ընթացքը և դասավորելու անվտանգ փոխանցում L.A. Care-ի ցանցի նոր բժշկի:
- Հղիություն – հղիության ընթացքում և հետծննդաբերության անմիջական շրջանում:
- Մայրական հոգեկան առողջության ծառայություններ
- Ծննդյան և 36 ամսականի միջև ընկած ժամանակահատվածում նորածին երեխայի խնամքը մինչև 12 ամիս՝ սկսած ապահովագրության մեկնարկի ամսաթվից կամ L.A. Care-ի հետ մատակարարի պայմանագրի ավարտի օրվանից:
- Մահացու հիվանդություն (կյանքին սպառնացող բժշկական խնդիր) – քանի դեռ հիվանդությունը տևում է: Ապահովագրված ծառայությունների ամբողջացումը կարող է գերազանցել տասներկու (12) ամիսը, սկսած մատակարարի՝ L.A. Care-ի հետ գործելը դադարեցնելու պահից:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

- Վիրահատության կամ այլ բժշկական ընթացակարգի իրականացում ծրագրին չմասնակցող մատակարարից, քանի դեռ այն ապահովագրված է, բժշկականորեն անհրաժեշտ է և լիազորված է L.A. Care-ի կողմից որպես փաստագրված բուժման ընթացքի մաս և առաջարկվել և փաստագրվել է մատակարարի կողմից – վիրահատությունը կամ այլ բժշկական ընթացակարգ պետք է իրականացվի մատակարարի պայմանագրի ավարտի ամսաթվից 180 օրվա ընթացքում կամ նոր անդամի ապահովագրման ուժի մեջ մտնելու ամսաթվից 180 օրվա ընթացքում:

Հավանական որակյալ այլ վիճակների համար կապ հաստատեք **Անդամների սպասարկման** հետ **1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Եթե ծրագրին չմասնակցող մատակարարը չի կամենում շարունակել ծառայությունների մատուցումը, չի համաձայնում վճարման կամ խնամքի մատուցման այլ պայմանների, ապա Դուք չեք կարողանա շարունակվող խնամք ստանալ մատակարարից: Զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909** (TTY **711**) համարով պայմանագրված մատակարար ընտրելու օգնության համար, որպեսզի շարունակեք Ձեր խնամքը, կամ եթե հարցեր կամ խնդիրներ ունեք այլևս L.A. Care-ին մաս չկազմող մատակարարից ապահովագրված ծառայությունների ստացման վերաբերյալ:

L.A. Care-ը պարտավոր չէ խնամքի շարունակում մատուցել Medi-Cal-ի կողմից չապահովագրված ծառայությունների, տևական օգտագործման բժշկական սարքերի, փոխադրության, ուրիշ օժանդակ ծառայությունների և պայմանագրային ծառայության մատակարարների համար: Խնամքի շարունակման և իրավասության առանձնահատկությունների վերաբերյալ ավելին իմանալու և տրամադրելի բոլոր ծառայությունների մասին լսելու համար զանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Ծախքեր

Անդամի ծախքեր

L.A. Care-ը ծառայում է անձանց, ովքեր որակավորվում են Medi-Cal-ի համար: Շատ դեպքերում, L.A. Care-ի անդամները պարտավոր **չեն** վճարել ապահովագրված ծառայությունների, ապահովագների կամ հանելիների համար: Բացառությամբ շտապ օգնության, հրատապ խնամքի կամ զգայուն խնամքի, դուք պետք է նախավավերացում ստանաք L.A. Care-ի կողմից՝ L.A. Care-ի ցանցից դուրս մատակարարի տեսնելուց առաջ: Եթե չեք ստանում նախավավերացում և գնում եք ցանցից դուրս մատակարարի մոտ խնամքի համար, որը չի հանդիսանում շտապ օգնություն, հրատապ խնամք կամ զգայուն խնամք, թերևս հարկադրվեք վճարել արտացանցային մատակարարներից խնամքի համար: Ապահովագրված ծառայությունների ցանկի համար տեսեք «Նպաստներ և ծառայություններ» բաժինը:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Երկարաժամկետ խնամքով և ծախսաբաժնով անդամների համար

Թերևս ծախսաբաժին վճարեք ամեն ամիս Ձեր երկարաժամկետ խնամքի ծառայությունների համար: Ձեր ծախսաբաժնի գումարը կախված է Ձեր եկամուտից և միջոցներից: Ամեն ամիս կվճարեք Ձեր սեփական բժշկական հաշիվները, ներառյալ՝ առանց սահմանափակվելու՝ կառավարվող Երկարաժամկետ աջակցության ծառայության (Managed Long Term Support Service, MLTSS) հաշիվները, մինչև Ձեր վճարած գումարը հավասարվի Ձեր ծախսաբաժնին: Այնուհետև, Ձեր երկարաժամկետ խնամքը կհոգացվի L.A. Care-ի կողմից այդ ամսվա համար: Դուք L.A. Care-ի կողմից չեք ապահովագրվի մինչև վճարեք Ձեր երկարաժամկետ խնամքի լրիվ ծախսաբաժինը ամսվա համար:

Ինչպես է վճարվում մատակարարը

L.A. Care-ը մատակարարներին վճարում է հետևյալ եղանակներով՝

- Գլխահարկային վճարումներ
 - L.A. Care-ը մի շարք մատակարարների վճարում է յուրաքանչյուր ամիս մի սահմանված գումար L.A. Care-ի յուրաքանչյուր անդամի համար: Սա կոչվում է գլխահարկային վճարում: L.A. Care-ը և մատակարարները համագործակցաբար որոշում են վճարման գումարը:
- FFS վճարումներ
 - Մի շարք մատակարարներ L.A. Care-ի անդամներին խնամք մատուցելուց հետո L.A. Care-ին հաշիվ են ուղարկում իրենց մատուցած ծառայությունների համար: Սա կոչվում է FFS վճարում: L.A. Care-ը և մատակարարները համագործակցաբար որոշում են յուրաքանչյուր ծառայության արժեքը:

Ավելին իմանալու համար, թե ինչպես է L.A. Care-ը վճարում մատակարարներին, զանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Մատակարարներին խթանող ծրագրեր՝

L.A. Care-ը ունի մատակարարներին խթանող ծրագրեր՝ L.A. Care-ի մատակարարների մոտ Ձեր խնամքը և փորձառությունը բարելավելու համար: Այս ծրագրերն օգնում են բարելավել՝

- Խնամքի որակը
- Խնամքի և ծառայությունների մատչելիությունն ու առկայությունը
- Մատուցվող բուժումները
- Անդամի բավարարությունը

Այս ծրագրերի վերաբերյալ ավելին իմանալու համար զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909** (TTY **711**) համարով:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

L.A. Care-ից հաշվի վճարում խնդրելը

Ապահովագրված ծառայությունները առողջական խնամքի ծառայություններ են, որոնց վճարման համար պատասխանատու է L.A. Care-ը: Աջակից ծառայությունների վճարների, համավճարների կամ ապահովագրված ծառայության համար գրանցման վճարների համար հաշիվ ստանալու դեպքում, մի վճարեք հաշիվը: Անմիջապես զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

L.A. Care-ից ծախսերի համար հատուցում խնդրելը

Եթե վճարել եք Ձեր արդեն ստացած ծառայությունների համար և ուզում եք, որ L.A. Care-ը հատուցի Ձեզ (հետ վճարի Ձեզ), պարտավոր եք բավարարել **բոլոր** հետևյալ պայմանները՝

- Ձեր ստացած ծառայությունը ապահովագրված ծառայություն է, որի վճարման համար պատասխանատու է L.A. Care-ը: L.A. Care-ը Ձեզ չի հատուցի ծառայության համար, որը չի ապահովագրվում Medi-Cal-ի կամ L.A. Care-ի կողմից:
- Ապահովագրված ծառայությունը ստացել եք L.A. Care-ի իրավասու անդամ դառնալուց հետո:
- Խնդրում եք, որ Ձեզ հետ վճարեն ապահովագրված ծառայությունն ստանալու ամսաթվից մեկ տարվա ընթացքում:
- Ներկայացնում եք ապացույց, որ վճարել եք ապահովագրված ծառայության համար, ինչպես՝ մատակարարից մանրամասն ստացականը:
- Ապահովագրված ծառայությունն ստացել եք Medi-Cal-ին անդամակցող մատակարարից՝ L.A. Care-ի ցանցում: Պարտավոր չեք այս պայմանը բավարարել, եթե ստացել եք արտակարգ իրավիճակի ծառայություններ, ընտանիքի ծրագրավորման ծառայություններ, կամ մի ուրիշ ծառայություն, որի համար Medi-Cal-ը թույլատրում է, որ արտացանցային մատակարարներն առանց նախավավերացման կատարեն դրանք:
- Եթե ապահովագրված ծառայությունը սովորաբար պահանջում է նախավավերացում, Դուք ներկայացնում եք մատակարարի կողմից ապացույց, որը բժշկական անհրաժեշտություն է ցույց տալիս ապահովագրված ծառայության համար:

L.A. Care-ը հատուցման մասին իր որոշումը Ձեզ կհայտնի մի նամակում, որը կոչվում է Գործողության ծանուցագիր (Notice of Action): Եթե բավարարում եք բոլոր վերի պայմանները, Medi-Cal-ին անդամակցող մատակարարը պարտավոր է Ձեզ լրիվ հատուցել Ձեր վճարած գումարը: Եթե մատակարարը մերժի Ձեզ հատուցել, L.A. Care-ը Ձեզ կհատուցի Ձեր վճարած լրիվ գումարը: Եթե մատակարարը անդամակցում է Medi-Cal-ին, բայց չի գտնվում L.A. Care-ի ցանցում և մերժում է Ձեզ հատուցել, L.A. Care-ը Ձեզ կհատուցի, բայց միայն այնքան գումար, ինչքան կվճարեր FFS Medi-Cal-ը: L.A. Care-ը Ձեզ կհատուցի լրիվ գրպանից վճարված գումարը արտակարգ իրավիճակի ծառայությունների, ընտանիքի ծրագրման ծառայությունների, կամ մի ուրիշ ծառայության, որի համար Medi-Cal-ը թույլատրում է, որ արտացանցային մատակարարներ դրանք կատարեն առանց նախավավերացման: Եթե չեք բավարարում վերի պայմաններից մեկը, L.A. Care-ը Ձեզ չի հատուցի:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

L.A. Care-ը Ձեզ չի հատուցի, եթե՝

- Խնդրել և ստացել եք ծառայություններ, որոնք չեն ապահովագրվում Medi-Cal-ի կողմից, ինչպես՝ գեղարարական ծառայությունները:
- Ունեք Medi-Cal-ի չլրացված ծախսաբաժին:
- Գնացել եք մի բժշկի, ով Medi-Cal չի առնում և Դուք ստորագրել եք մի ձևաթուղթ, որն ասում է, որ այնուամենայնիվ ուզում եք, որ Ձեզ տեսնեն և Դուք ինքներդ կվճարեք ծառայությունների համար:
- Խնդրել եք, որ հատուցվեք Ձեր Medicare-ի D Մասի ծրագրի կողմից ապահովագրվող դեղատոմսերի համավճարների համար:

Ապահովագրված ծառայության համար հաշիվ ստանալու դեպքում անմիջապես զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Եթե վճարեք մի ծառայության համար, որը Ձեր կարծիքով L.A. Care-ը պետք է ապահովագրի, կարող եք պահանջ ներկայացնել: Զանգահարեք **1-888-839-9909 (TTY 711)** համարով L.A. Care-ից խնդրելու, որ վերանայի Ձեր պահանջը, որոշելու համար, որ կարո՞ղ եք փող հետ ստանալ:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

3. Ինչպես խնամք ստանալ

Առողջական խնամքի ծառայություններ ստանալը

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԴԱԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍՁԻ ԻՄԱՆԱՔ ՈՒՄԻՑ ԿԱՄ ՈՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԽՄԲԻՑ ԿԱՐԵԼԻ Է ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԱՄՔ ՍՏԱՆԱԼ

Առողջական խնամքի ծառայությունների ստացումը կարող էք սկսել Ձեր անդամագրության գործուն ամսաթվից: Միշտ Ձեզ հետ կրեք Ձեր L.A. Care-ի ճանաչողական քարտը, Medi-Cal-ի նպաստների ճանաչողական քարտը (BIC) և Ձեր ունեցած որևէ ուրիշ առողջական ապահովագրության քարտ: Երբեք թույլ մի տվեք, որ ուրիշ անձ օգտագործի Ձեր BIC-ը կամ L.A. Care-ի ճանաչողական քարտը:

Նոր անդամները պարտավոր են Առաջնային խնամքի մատակարար (PCP) ընտրել L.A. Care-ի ցանցում: L.A. Care-ի ցանցը կազմված է մի խումբ բժիշկներից, հիվանդանոցներից և ուրիշ մատակարարներից, որոնք գործում են L.A. Care-ի հետ: Պարտավոր եք PCP ընտրել L.A. Care-ի անդամ դառնալուց հետո 30 օրվա ընթացքում: Եթե Դուք չընտրեք մի PCP, L.A. Care-ը կընտրի այդպիսին Ձեզ համար:

L.A. Care-ում կարող եք նույն PCP-ն կամ տարբեր PCP-ներ ընտրել ընտանիքի բոլոր անդամների համար, քանի դեռ PCP-ն տրամադրելի է:

Եթե ունեք մի բժիշկ, որին ցանկանում եք պահել, կամ ուզում եք գտնել մի նոր PCP, կարող եք որոնել Մատակարարների հասցեագրքում: Այն պարունակում է ցանկը L.A. Care-ի ցանցում գտնվող PCP-ների: Մատակարարների հասցեագիրքը ունի PCP-ի Ձեր ընտրության օգնող այլ տեղեկություններ: Եթե կարիքը ունեք Մատակարարների հասցեագրքի, զանգահարեք **1-888-839-9909 (TTY 711)** համարով: Մատակարարների հասցեագիրքը կարող եք նաև գտնել L.A. Care-ի կայքում՝ lacare.org:

Եթե չեք կարող Ձեզ անհրաժեշտ խնամքը ստանալ L.A. Care-ի ցանցում գտնվող մասնակից մատակարարից, Ձեր PCP-ն պարտավոր է L.A. Care-ից վավերացում խնդրել, որպեսզի Ձեզ ուղարկի արտացանցային մատակարարի: Սա կոչվում է ուղեգիր: Ձեզ վավերացում անհրաժեշտ չէ արտացանցային մատակարարի մոտ գնալու համար՝ ստանալու զգայուն ծառայություններ, որոնք նկարագրվել են այս գլխի «Զգայուն խնամք» խորագրի ներքո:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Կարդացեք այս գլխի մնացած մասը, ավելին իմանալու համար PCP-ների, Մատակարարների հասցեագրքի և մատակարարների ցանցի մասին:

Դեղատան նպաստներն այժմ տնօրինվում են Վճարովի ծառայությամբ (FFS) Medi-Cal Rx ծրագրի միջոցով: Ավելին իմանալու համար կարդացեք «Medi-Cal-ի ուրիշ ծրագրեր և ծառայություններ» բաժինը 4-րդ Գլխում:

Առաջնային խնամքի մատակարար (PCP)

Պարտավոր եք PCP ընտրել L.A. Care-ին անդամագրվելուց հետո 30 օրվա ընթացքում: Նայած Ձեր տարիքի և սեռի, կարող եք որպես Ձեր առաջնային խնամքի բժիշկ (PCP) ընտրել ընդհանուր մասնագետի, Մանկաբարձ/Գինեկոլոգի (OB/GYN), ընտանեկան հիվանդությունների մասնագետի, ներքին հիվանդությունների մասնագետի կամ մանկաբույժի: Առաջնային խնամք տրամադրող բուժքույրը (Nurse Practitioner, NP), օգնական բժիշկը (Physician Assistant, PA) կամ վկայագրված բուժքույր-մանկաբարձը նույնպես կարող է գործել որպես Ձեր PCP: NP, PA կամ վկայագրված բուժքույր-մանկաբարձ ընտրելու դեպքում, թերևս Ձեզ համար նշանակեն Ձեր խնամքը վերահսկող բժշկի: Եթե անդամ եք և Medicare-ի, և Medi-Cal-ի, կամ եթե ունեք ուրիշ առողջապահական ապահովագրություն, պարտավոր չեք PCP ընտրել:

Կարող եք ընտրել Հնդկացիների առողջապահական մատակարար (IHCP), Դաշնային որակավորման առողջապահական կենտրոն (Federally Qualified Health Center, FQHC) կամ Գյուղական առողջապահական կլինիկա (Rural Health Clinic, RHC) որպես Ձեր PCP: Նայած մատակարարի տեսակի, թերևս կարողանաք ընտրել մեկ PCP Ձեր ամբողջ ընտանիքի անդամների համար, ովքեր անդամ են L.A. Care-ի, քանի դեռ PCP-ն տրամադրելի է:

Նշում՝ Ամերիկյան հնդկացիները կարող են մի IHCP ընտրել որպես իրենց PCP, նույնիսկ եթե IHCP-ն չի գտնվում L.A. Care-ի ցանցում:

Անդամագրվելուց հետո 30 օրվա ընթացքում PCP չընտրելու դեպքում, L.A. Care-ը PCP կնշանակի Ձեզ համար: Եթե Ձեզ համար նշանակել են PCP և ցանկանում եք փոխել այն, զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Փոփոխությունը կատարվում է հաջորդ ամսի առաջին օրը:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Ձեր PCP-ն կանի հետևյալը՝

- Կճանաչի Ձեր առողջական պատմությունը և կարիքները
- Կպահի Ձեր առողջական արձանագրությունները
- Կտա Ձեզ անհրաժեշտ կանխարգելիչ և սովորական առողջական խնամքը
- Կուղղորդի (կուղարկի) Ձեզ մասնագետի անհրաժեշտության դեպքում
- Կդասավորի հիվանդանոցային խնամքը անհրաժեշտության դեպքում

L.A. Care-ի ցանցում PCP գտնելու համար կարող եք նայել Մատակարարների հասցեագրքին: Մատակարարների հասցեագիրքը ունի ցանկը IHCP-ների, FQHC-ների և RHC-ների, որոնք գործում են L.A. Care-ի հետ:

L.A. Care-ի Մատակարարների հասցեագիրքը կարող եք առցանց գտնել հետևյալ կայքում՝ lacare.org: Կամ կարող եք խնդրել, որ Մատակարարների հասցեագիրքը փոստով ուղարկվի Ձեզ, զանգահարելով **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Կարող եք նաև զանգահարել պարզելու համար, որ արդյո՞ք Ձեր ցանկացած PCP-ն ընդունում է նոր հիվանդների:

Բժիշկների և մատակարարների ընտրությունը

Դուք լավագույնս գիտեք Ձեր առողջական խնամքի կարիքները, ուստի Լավագույն կլինի, որ Դուք ընտրեք Ձեր PCP-ն:

Լավագույն է մնալ մեկ PCP-ի մոտ, որպեսզի կարողանա ճանաչել Ձեր առողջական խնամքի կարիքները: Սակայն եթե ցանկանում եք անցնել նոր PCP-ի, կարող եք փոխել որևէ ժամանակ: Պարտավոր եք ընտրել մի PCP, ով գտնվում է L.A. Care-ի մատակարարների ցանցում և ընդունում է նոր հիվանդների:

Ձեր նոր ընտրանքը կդառնա Ձեր PCP-ն փոփոխության կատարման հաջորդող ամսի առաջին օրը:

Ձեր PCP-ն փոխելու համար զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

L.A. Care-ը թերևս Ձեզանից խնդրի փոխել Ձեր PCP-ն, եթե PCP-ն նոր հիվանդների չի ընդունում, հեռացել է L.A. Care-ի ցանցից կամ խնամք չի մատուցում Ձեր տարիքի անձանց: L.A. Care-ը կամ Ձեր PCP-ն թերևս խնդրի, որ անցնեք մի նոր PCP-ի, եթե Ձեր հարաբերությունը լավ չէ Ձեր PCP-ի հետ կամ համաձայն չեք նրան, կամ եթե բաց եք թողնում ժամադրությունները կամ ուշ եք ներկայանում: Եթե L.A. Care-ին անհրաժեշտ լինի փոխել Ձեր PCP-ն, L.A. Care-ը գրավոր կհաղորդի Ձեզ:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Ձեր PCP-ն փոխվելու դեպքում, փոստով կստանաք L.A. Care-ի անդամի նոր ճանաչողական քարտ: Այն կունենա անունը Ձեր նոր PCP-ի: Զանգահարեք **Անդամների սպասարկում**, եթե հարցեր ունեք նոր ճանաչողական քարտ ստանալու վերաբերյալ:

PCP ընտրելիս մտածեք հետևյալների մասին՝

- Արդյո՞ք PCP-ն խնամում է երեխաների:
- Արդյո՞ք PCP-ն աշխատում է կլինիկայում, որից սիրում եմ օգտվել:
- Արդյո՞ք PCP-ի գրասենյակը մոտ է իմ տանը, աշխատանքին կամ երեխայի դպրոցին:
- Արդյո՞ք PCP-ի գրասենյակը մոտ է իմ բնակության վայրին և հեշտ է PCP-ի գրասենյակ գնալը:
- Արդյո՞ք բժշկներն ու անձնակազմը խոսում են իմ լեզվով:
- Արդյո՞ք PCP-ն գործում է իմ հավանած հիվանդանոցի հետ:
- Արդյո՞ք PCP-ն մատուցում է ծառայություններ, որոնք թերևս ինձ պետք լինեն:
- Արդյո՞ք PCP-ի գրասենյակի ժամերը հարմար են իմ ժամանակացույցին:

Առողջության սկզբնական գնահատում (IHA)

L.A. Care-ը հանձնարարում է, որ Ձեր նոր PCP-ին այցելեք որպես նոր անդամ առաջին 120 օրերի ընթացքում, առողջության սկզբնական գնահատման (Initial Health Assessment, IHA) համար: IHA-ը նպատակադրում է օգնել, որ Ձեր PCP-ն ճանաչի Ձեր առողջական խնամքի պատմությունն ու կարիքները: Ձեր PCP-ն կարող է Ձեզ մի շարք հարցեր տալ Ձեր առողջական պատմության մասին կամ խնդրել, որ լրացնեք մի հարցաթերթիկ: Ձեր PCP-ն նաև Ձեզ կհայտնի առողջապահական խորհրդատվության և դասընթացների մասին, որոնք կարող են օգնել Ձեզ:

Երբ զանգահարեք Ձեր IHA ժամադրությունը դասավորելու նպատակով, հեռախոսին պատասխանող անձին հայտնեք, որ L.A. Care-ի անդամ եք: Տվեք Ձեր L.A. Care-ի ճանաչողական համարը:

Ձեր BIC-ը և L.A. Care-ի ճանաչողական քարտը տարեք Ձեր ժամադրություններին: Լավ կլինի, որ Ձեր այցի համար Ձեզ հետ տանեք Ձեր դեղերի ցանկը և հարցերը: Պատրաստվեք Ձեր PCP-ի հետ քննարկել Ձեր առողջական խնամքի կարիքներն ու մտահոգությունները:

Անպայման զանգահարեք Ձեր PCP-ի գրասենյակ, եթե պիտի ուշանաք կամ չեք կարող գնալ Ձեր ժամադրության:

IHA-ի մասին հարցեր ունենալու դեպքում զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Սովորական խնամք

Սովորական խնամքը կանոնավոր առողջական խնամք է: Այն ընդգրկում է կանխարգելիչ խնամքը, որը կոչվում է քաջառողջության կամ լավ խնամք: Այն օգնում է, որ մնաք առողջ և օգնում է, որ խուսափեք հիվանդանալուց: Կանխարգելիչ խնամքն ընդգրկում է սովորական ստուգումները և առողջապահական կրթությունն ու խորհրդատվությունը: Երեխաները կարող են ստանալ այնքան անհրաժեշտ վաղ կանխարգելիչ ծառայություններ, ինչպես՝ լսողության և տեսողության զննում, զարգացական գործընթացի գնահատում և շատ ուրիշ ծառայություններ, որոնք հանձնարարվում են մանկաբույժների Պայծառ ապագաներ (Bright Futures) ուղեցույցով: Ի հավելումն կանխարգելիչ խնամքի, սովորական խնամքը նաև ընդգրկում է խնամքը՝ երբ հիվանդ եք: L.A. Care-ը ապահովագրում է Ձեր PCP-ի մատուցած խնամքը:

Ձեր PCP-ն կանի հետևյալը՝

- Ձեզ կտա Ձեր ողջ սովորական խնամքը, ներառյալ՝ սովորական ստուգումները, սրսկումները, բուժումը, դեղատոմսերը և բժշկական խորհուրդ
- Կպահի Ձեր առողջական արձանագրությունները
- Ձեզ կուղղորդի (կուղարկի) մասնագետների անհրաժեշտության դեպքում
- Կպատվիրի ռենտգեն պատկերումները, կրծքագիրները կամ լաբորատորային անալիզները, եթե կարիքն ունեք դրանց

Սովորական խնամքի կարիքի դեպքում, Ձեր PCP-ին կզանգահարեք ժամադրության համար: Անպայման զանգահարեք Ձեր PCP-ին բժշկական խնամք ստանալուց առաջ, բացառությամբ արտակարգ իրավիճակի: Արտակարգ իրավիճակի համար զանգահարեք **911** համարով կամ գնացեք մոտակա շտապ օգնության կայանը:

Ձեր ծրագրի ապահովագրած և չապահովագրած առողջական խնամքի և ծառայությունների մասին ավելին իմանալու համար, կարդացեք այս տեղեկագրի «Նպաստներ և ծառայություններ» և «Երեխայի և պատանիների լավ խնամք» բաժինները:

L.A. Care-ի բոլոր մատակարարները կարող են աջակից սարքեր և ծառայություններ օգտագործել՝ հաշմանդամների հետ հաղորդակցելու համար: Նրանք նաև կարող են Ձեզ հետ հաղորդակցել ուրիշ լեզվով կամ ձևաչափով: Ձեր մատակարարին կամ L.A. Care-ին հայտնեք ինչ է անհրաժեշտ Ձեզ:

Մատակարարների ցանց

Մատակարարների ցանցը ներկայացնում է մի խումբ բժիշկներ, հիվանդանոցներ և ուրիշ մատակարարներ, որոնք գործում են L.A. Care-ի հետ: Դուք Ձեր ապահովագրված ծառայությունների մեծ մասը կստանաք L.A. Care-ի ցանցի միջոցով:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Նշում՝ Ամերիկյան հնդկացիները կարող են մի IHCP ընտրել որպես իրենց PCP, նույնիսկ եթե IHCP-ն չի գտնվում L.A. Care-ի ցանցում:

Եթե Ձեր PCP-ն, հիվանդանոցը կամ ուրիշ մատակարար ունի բարոյական առարկություն Ձեզ ապահովագրված ծառայություն մատուցելու կապակցությամբ, ինչպես՝ ընտանիքի ծրագրումը կամ վիժումը, զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Բարոյական առարկությունների մասին հավելյալ տեղեկության համար ավելի ուշ ընթերցեք այս գլխի «Բարոյական առարկություն» բաժինը:

Եթե Ձեր մատակարարն ունի բարոյական առարկություն, նա Ձեզ կօգնի գտնել մի ուրիշ մատակարար, ով Ձեզ կտա Ձեզ անհրաժեշտ ծառայությունները: L.A. Care-ը կարող է նաև օգնել, որ գտնեք մի մատակարարի, ով կկատարի ծառայությունը:

Ներցանցային մատակարարներ

Ձեր առողջական խնամքի կարիքների մեծ մասի համար կօգտվեք L.A. Care-ի ներցանցային մատակարարներից: Ձեր կանխարգելիչ և սովորական խնամքը կստանաք Ձեր PCP-ից: Դուք նաև կօգտվեք L.A. Care-ի ներցանցային մասնագետներից, հիվանդանոցներից և ուրիշ մատակարարներից:

Ցանցի մատակարարների Մատակարարների հասցեագիրք ստանալու համար զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Մատակարարների հասցեագիրքը կարող էք նաև գտնել առցանց հետևյալ կայքում՝ lacare.org: Պայմանագրային դեղերի ցանկի պատճենն ստանալու համար զանգահարեք Medi-Cal Rx **800-977-2273** համարով (TTY **800-977-2273** և սեղմեք 5 կամ **711**): Կամ այցելեք Medi-Cal Rx-ի կայքը՝ <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/>:

Շտապ օգնության համար զանգահարեք **911** համարով կամ գնացեք ամենից մոտիկ շտապ օգնության կայանը:

Բացառությամբ շտապ օգնության կամ զգայուն խնամքի, դուք պետք է նախավավերացում ստանաք L.A. Care-ի կողմից՝ L.A. Care-ի ցանցից դուրս մատակարարի տեսնելուց առաջ: Եթե չեք ստանում նախավավերացում և գնում եք ցանցից դուրս մատակարարի մոտ խնամքի համար, որը չի հանդիսանում շտապ օգնություն կամ զգայուն խնամք, թերևս հարկադրվեք վճարել արտացանցային մատակարարներից խնամքի համար:

Արտացանցային մատակարարներ, ովքեր գտնվում են սպասարկման տարածքում

Արտացանցային մատակարարները նրանք են, ովքեր չունեն L.A. Care-ի հետ գործելու համաձայնություն: Բացի շտապ օգնությունից, թերևս պարտավորվեք վճարել արտացանցային մատակարարներից ստացված խնամքի համար: Եթե Ձեզ անհրաժեշտ են ապահովագրված առողջական խնամքի ծառայություններ, թերևս կարողանաք դրանք անվճար ստանալ ցանցից դուրս, պայմանով, որ դրանք լինեն բժշկականորեն անհրաժեշտ, տրամադրելի չլինեն ցանցի ներսում:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

L.A. Care-ը կարող է ուղեգիր վավերացնել արտացանցային մատակարարի համար, եթե Ձեզ անհրաժեշտ ծառայությունները տրամադրելի չեն ցանցի ներսում կամ գտնվում են Ձեր բնակարանից շատ հեռու: Եթե Ձեզ ուղեգիր տանք արտացանցային մատակարարի համար, մենք կվճարենք Ձեր խնամքի համար:

Պարտավոր եք նախավավերացում (նախօրոք լիազորում) ստանալ արտացանցային մատակարարի գնալու համար L.A. Care-ի սպասարկման տարածքի ներսում, բացառությամբ շտապ օգնությունից և զգայուն խնամքից: L.A. Care-ի սպասարկման տարածքում հրատապ խնամքի համար պարտավոր եք տեսնել L.A. Care-ի ցանցի մատակարարի: Ցանցի մատակարարից հրատապ խնամք ստանալու համար նախավավերացում անհրաժեշտ չէ Ձեզ: Նախավավերացում չստանալու դեպքում, թերևս հարկադրվեք վճարել L.A. Care-ի սպասարկման տարածքի ներսում արտացանցային մատակարարից Ձեր ստացած խնամքի համար: Շտապ օգնության, հրատապ խնամքի և զգայուն խնամքի ծառայությունների մասին հավելյալ տեղեկության համար գնացեք այս գլխի այդ խորագրերին:

Նշում՝ Եթե Ամերիկյան հնդկացի եք, կարող եք առանց ուղեգրի խնամք ստանալ IHCP-ում՝ մեր մատակարարների ցանցից դուրս:

Եթե օգնության կարիք ունեք արտացանցային ծառայությունների կապակցությամբ, զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Սպասարկման տարածքից դուրս

Եթե գտնվում եք L.A. Care-ի սպասարկման տարածքից դուրս և Ձեզ անհրաժեշտ է մի խնամք, որը արտակարգ իրավիճակի կամ հրատապ խնամք չէ, անմիջապես զանգահարեք Ձեր PCP-ին: Կամ զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Անդամները, ում անհրաժեշտ են ոչ-արտակարգ իրավիճակի կամ ոչ-հրատապ խնամք L.A. Care-ի սպասարկման տարածքից և/կամ մատակարարների ցանցից դուրս, պետք է ունենան նախավավերացում, ծառայությունն ստանալուց առաջ: Խնդրում ենք զանգահարել Ձեր PCP-ին կամ L.A. Care-ի **Անդամների սպասարկում**:

Շտապ օգնության համար զանգահարեք **911** համարով կամ գնացեք ամենից մոտիկ շտապ օգնության կայանը: L.A. Care-ը ապահովագրում է արտացանցային շտապ օգնությունը: Եթե ճանապարհորդեք Կանադա կամ Մեքսիկա և կարիքը ունենաք հիվանդանոցային բուժում պահանջող արտակարգ իրավիճակի ծառայությունների, L.A. Care-ը կապահովագրի Ձեր խնամքը: Եթե կատարում եք միջազգային ճանապարհորդություն Կանադայից կամ Մեքսիկայից դուրս և կարիքը ունեք շտապ օգնության, L.A. Care-ը **չի** ապահովագրի Ձեր խնամքը:

Եթե վճարեք արտակարգ իրավիճակի ծառայությունների համար, որոնք հիվանդանոցային բուժում են պահանջում Կանադայում կամ Մեքսիկայում, կարող եք L.A. Care-ից հատուցում խնդրել: L.A. Care-ը կքննի Ձեր խնդրանքը:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Եթե գտնվում եք ուրիշ նահանգում, ներառյալ՝ ԱՄՆ տարածքները (Ամերիկյան Սամոա, Գուամ, Հյուսիսային Մարիանայի կղզիներ, Պուերտո Ռիկո և ԱՄՆ Վիրջինյան կղզիներ), Դուք ապահովագրված եք շտապ օգնության համար, բայց ոչ բոլոր հիվանդանոցներն ու բժշկներն են Medicaid ընդունում (Medicaid է կոչվում Medi-Cal-ը ուրիշ նահանգներում): Եթե Ձեզ շտապ օգնություն է պետք Կալիֆորնիայից դուրս, հիվանդանոցին կամ շտապ օգնության կայանի բժշկին հնարավորինս շուտ հայտնեք, որ Medi-Cal ունեք և L.A. Care-ի անդամ եք: Դեղատնից խնդրեք պատճենները հանել Ձեր L.A. Care-ի ճանաչողական քարտի: Հիվանդանոցին և բժիշկներին ասացեք հաշիվն ուղարկել L.A. Care-ին: Ուրիշ նահանգում ստացած Ձեր ծառայությունների համար հաշիվ ստանալու դեպքում, անմիջապես զանգահարեք L.A. Care: Մենք հիվանդանոցի և/կամ բժշկի հետ գործելով կկարգադրենք, որ L.A. Care-ը վճարի Ձեր խնամքի համար:

Եթե գտնվում եք Կալիֆորնիայից դուրս և ունեք արտակարգ իրավիճակի կարիք ամբուլատոր հիվանդի դեղատոմսային դեղեր լցնելու համար, խնդրում ենք այնպես անել, որ դեղատունը օգնության համար զանգահարի Medi-Cal Rx **800-977-2273** համարով:

Նշում՝ Ամերիկյան հնդկացիները կարող են ծառայություններ ստանալ արտացանցային IHCP-ներում:

Եթե հարցեր ունեք արտացանցային կամ սպասարկման տարածքից դուրս խնամքի վերաբերյալ, զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Եթե գրասենյակը փակ է և օգնություն եք ցանկանում մի ներկայացուցչից, զանգահարեք **Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ** օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը, **1-800-249-3619 (TTY 711)** համարով:

Լիազորված մոդելով կառավարվող խնամքի ծրագրեր

L.A. Care-ը գործում է մեծ թվով բժիշկների, մասնագետների, դեղատների, հիվանդանոցների և առողջական խնամքի ուրիշ մատակարարների հետ: Մի շարք այսպիսի մատակարարներ գործում են ինչ-որ ցանցի ներսում, որը երբեմն կոչվում է «բժշկական խումբ» կամ «անկախ կիրառման ընկերակցություն» (Independent Practice Association, IPA): Այս մատակարարները կարող են նաև ուղղակի պայմանագիր կնքած լինել L.A. Care-ի հետ:

Ձեր PCP-ն Ձեզ կուղղորդի մասնագետների և ծառայությունների, որոնք կապ ունեն իր բժշկական խմբի, IPA-ի կամ L.A. Care-ի հետ: Եթե արդեն գնում եք մասնագետի, խոսեք Ձեր PCP-ի հետ կամ զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: **Անդամների սպասարկումը** կօգնի որ այցելեք այդ մատակարարին, եթե իրավասու եք խնամքի շարունակման: Հավելյալ տեղեկության համար անցեք այս տեղեկագրի խնամքի շարունակում բաժինը:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Բժիշկներ

Դուք Ձեր Առաջնային խնամքի մատակարարը (PCP) լինելու համար Ձեր բժշկին կընտրեք L.A. Care-ի Մատակարարների հասցեագրքից: Ձեր ընտրած բժիշկը պետք է լինի ցանցի մատակարար: L.A. Care-ի Մատակարարների հասցեագրքի մի օրինակ ստանալու համար զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Կամ այն գտեք առցանց այս կայքում՝ lacare.org:

Եթե ընտրում եք մի նոր բժշկի, պետք է նաև զանգահարեք՝ վստահ լինելու համար, որ Ձեր ցանկացած PCP-ն ընդունում է նոր հիվանդների:

Եթե այցելում էիք մի բժշկի L.A. Care-ի անդամ դառնալուց առաջ, և այս բժիշկը մաս չի կազմում L.A. Care-ի ցանցին, թերևս կարողանաք շարունակել այցելել այդ բժշկին սահմանափակ ժամանակով: Սա կոչվում է խնամքի շարունակում: Խնամքի շարունակման վերաբերյալ ավելին կարող եք կարդալ այս տեղեկագրքում: Ավելին իմանալու համար զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Մասնագետի կարիք ունենալու դեպքում, Ձեր PCP-ն Ձեզ ուղեգիր կտա L.A. Care-ի ցանցում գտնվող մասնագետի համար:

Հիշեք՝ եթե Դուք չընտրեք մի PCP, L.A. Care-ը կընտրի այդպիսին Ձեզ համար: Դուք լավագույնս գիտեք Ձեր առողջական խնամքի կարիքները, ուստի Ձեր ընտրությունը լավագույնը կլինի: Եթե անդամ եք *և* Medicare-ի, *և* Medi-Cal-ի, կամ եթե ունեք ուրիշ առողջապահական ապահովագրություն, պարտավոր չեք PCP ընտրել:

Եթե ցանկանում եք փոխել Ձեր PCP-ն, պարտավոր եք PCP ընտրել L.A. Care-ի Մատակարարների հասցեագրքից: Ստուգեք, վստահ լինելու համար, որ PCP-ն ընդունում է նոր հիվանդների: Ձեր PCP-ն փոխելու համար զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Կարող եք Ձեր PCP-ն փոխել նաև մուտք գործելով L.A. Care Connect-ի անդամի կայքամուտք՝ <https://members.lacare.org>:

Հիվանդանոցներ

Արտակարգ իրավիճակի դեպքում զանգահարեք **911** համարով կամ գնացեք ամենից մոտիկ հիվանդանոցը:

Եթե չկա արտակարգ իրավիճակ և կարիքը ունեք հիվանդանոցային խնամքի, Ձեր PCP-ն կորոշի Ձեր գնալիք հիվանդանոցը: Պարտավոր եք գնալ մի հիվանդանոց, որն օգտագործում է Ձեր PCP-ն և գտնվում է L.A. Care-ի մատակարարների ցանցում: L.A. Care-ի ցանցի հիվանդանոցները նշվել են Մատակարարների հասցեագրքում: Հիվանդանոց ընդունումները, բացի արտակարգ իրավիճակներից, պետք է ունենան նախավավերացում (նախօրոք լիազորում):



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Կանանց առողջության մասնագետներ

Կարող եք կանանց առողջության մասնագետի գնալ L.A. Care-ի ցանցի ներսում՝ ապահովագրված խնամքի համար, որը անհրաժեշտ է կանանց սովորական և կանխարգելիչ առողջական խնամքի ծառայություններ մատուցելու նպատակով: Այս ծառայություններն ստանալու համար Ձեր PCP-ից ուղղորդման կարիքը չկա: Կանանց առողջության մասնագետ գտնելու նպատակով օգնության համար կարող եք զանգահարել **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Կարող եք նաև զանգահարել 24/7 L.A. Care-ի **Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ 1-800-249-3619 (TTY 711)** համարով:

Մատակարարների հասցեագիրք

L.A. Care-ի Մատակարարների հասցեագիրքը L.A. Care-ի ցանցին մասնակցող մատակարարների ցանկն է: Ցանցը բաղկանում է մի խումբ մատակարարներից, որոնք գործում են L.A. Care-ի հետ:

L.A. Care-ի Մատակարարների հասցեագիրքը ներկայացնում է ցանկը հիվանդանոցների, PCP-ների, մասնագետների, առաջնային խնամք տրամադրող բուժքույրերի, բուժքույր-մանկաբարձների, օգնական բժիշկների, ընտանեկան ծրագրման մատակարարների, Դաշնային որակավորման առողջապահական կենտրոնների (FQHC), ամբուլատոր հոգեկան առողջության մատակարարների, կառավարվող երկարաժամկետ ծառայությունների և աջակցությունների (MLTSS), Անկախ ծննդաբերության կենտրոնների (Freestanding Birth Center, FBC), Հնդկացիների առողջապահական մատակարարների (IHCP) և Գյուղական առողջապահական կլինիկաների (RHC):

Մատակարարների հասցեագիրքը պարունակում է L.A. Care-ի ցանցի մատակարարների անուններ, մասնագիտություններ, հասցեներ, հեռախոսահամարներ, աշխատանքային ժամեր և խոսակցական լեզուներ: Այն նշում է, որ արդյոք մատակարարն ընդունում է նոր հիվանդների: Այն նաև նշում է շենքի ֆիզիկական մատչելիության մակարդակը, ինչպես՝ կայանատեղ, թեքահարթակներ, կառչաձողերով աստիճաններ և լայն բացվող դռներով ու կառչաձողերով զուգարաններ: Եթե տեղեկություն եք ցանկանում Ձեր բժշկի կրթության, պատրաստության և խորհրդի կողմից վկայագրման վերաբերյալ, խնդրում ենք զանգահարել **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Առցանց Մատակարարների հասցեագիրքը կարող եք գտնել հետևյալ կայքում՝ lacare.org:

Եթե կարիքը ունեք տպագիր Մատակարարների հասցեագրքի, զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Medi-Cal Rx-ի հետ գործող դեղատների ցանկը կարող եք գտնել Medi-Cal Rx-ի Դեղատների հասցեագրքում՝ <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/> կայքում: Կարող եք նաև Ձեզ մոտակա մի դեղատուն գտնել զանգահարելով Medi-Cal Rx 800-977-2273 համարով (TTY 800-977-2273 և սեղմելով 5 կամ 711):



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Խնամքի մատչելիությունը ժամանակին

Ձեր մատակարարը պարտավոր է Ձեզ ժամադրություն առաջարկել ստորև նշված ժամկետներում:

Երբեմն խնամքի համար ավելի երկար սպասելը խնդիր չէ: Ձեր մատակարարը կարող է Ձեզ ավելի երկար սպասման ժամանակ տալ, եթե այն չի վնասի Ձեր առողջության: Ձեր արձանագրությունում պետք է նշվի, որ ավելի երկար սպասման ժամանակը չի վնասի Ձեր առողջության:

Ժամադրության տեսակը	Դուք պետք է կարողանաք ժամադրություն ձեռք բերել այսքանից՝
Հրատապ խնամքի ժամադրություններ, որոնք չեն պահանջում նախավավերացում (նախօրոք լիազորում)	48 ժամ
Հրատապ խնամքի ժամադրություններ, որոնք պահանջում են նախավավերացում (նախօրոք լիազորում)	96 ժամ
Ոչ-հրատապ (սովորական) առաջնային խնամքի ժամադրություններ	10 աշխատանքային օր
Ոչ-հրատապ (սովորական) մասնագիտացված խնամքի ժամադրություններ	15 աշխատանքային օր
Ոչ-հրատապ (սովորական) հոգեկան առողջության մատակարարի (ոչ-բժիշկ) խնամքի ժամադրություններ	10 աշխատանքային օր
Ոչ-հրատապ (սովորական) ժամադրություններ օժանդակ (աջակից) ծառայությունների համար՝ վնասվածքի, հիվանդության կամ ուրիշ առողջական վիճակի ախտորոշման կամ բուժման նպատակով	15 աշխատանքային օր
Հեռախոսով սպասման ժամանակը սովորական աշխատանքային ժամերի ընթացքում	10 րոպե



Ջանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
 հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Ուղևորման ժամանակ կամ խնամքից հեռավորություն

L.A. Care-ը պարտավոր է հետևել ուղևորման ժամանակի կամ խնամքից հեռավորության չափանիշներին Ձեր խնամքի համար: Այս չափանիշները օգնում են երաշխավորել, որ խնամքը կարող եք ստանալ՝ առանց շատ երկար կամ Ձեր բնակության վայրից շատ հեռու վայր ուղևորվելու: Ուղևորման ժամանակի կամ հեռավորության չափանիշները կախում ունեն Ձեր բնակած վարչաշրջանից:

Եթե L.A. Care-ը չի կարող խնամք մատուցել Ձեզ ուղևորման ժամանակի կամ հեռավորության չափանիշների ծիրում, DHCS-ը թերևս վավերացնի մի տարբեր չափանիշ, ինչը կոչվում է այլընտրական մատչելիության չափանիշ: L.A. Care-ի Ձեր բնակած վայրի ժամանակի կամ հեռավորության չափանիշների համար այցելեք lacare.org կայքը: Կամ զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Եթե Ձեզ հարկավոր է խնամք մի մատակարարից և այդ մատակարարը գտնվում է Ձեր բնակության վայրից հեռու, զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Նրանք կարող են օգնել, որ խնամք գտնեք Ձեզ ավելի մոտիկ մատակարարի մոտ: Եթե L.A. Care-ը չի կարող ավելի մոտիկ մատակարարի մոտ խնամք գտնել Ձեզ համար, կարող եք L.A. Care-ից խնդրել, որ Ձեզ համար փոխադրություն դասավորի, որպեսզի գնաք Ձեր մատակարարին, նույնիսկ եթե այդ մատակարարը գտնվում է Ձեր բնակության վայրից հեռու: Եթե օգնության կարիք ունեք դեղատան մատակարարների կապակցությամբ, խնդրում ենք զանգահարել Medi-Cal Rx **800-977-2273** համարով (TTY **800-977-2273** և սեղմել 5 կամ **711**):

Հեռու է համարվում, եթե չեք կարող այդ մատակարարին գնալ L.A. Care-ի՝ Ձեր վարչաշրջանի ուղևորման ժամանակի կամ հեռավորության չափանիշների ծիրում, անկախ որևէ այլընտրական մատչելիության չափանիշից, որը L.A. Care-ը կարող է օգտագործել Ձեր փոստային թվանիշի համար:

Ժամադրություններ

Երբ առողջական խնամքի կարիք ունեք՝

- Ջանգահարեք Ձեր PCP-ին
- Ջանգահարելիս, պատրաստի ունեցեք Ձեր L.A. Care-ի ճանաչողական համարը
- Գրասենյակը փակ լինելու դեպքում, պատգամ թողեք Ձեր անունով և հեռախոսահամարով
- Ձեր BIC-ը և L.A. Care-ի ճանաչողական քարտը տարեք Ձեր ժամադրություններին
- Անհրաժեշտության դեպքում, Ձեր ժամադրության համար փոխադրություն խնդրեք



Ջանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

- Անհրաժեշտության դեպքում, լեզվական օգնության կամ բանավոր թարգմանչական ծառայություններ խնդրեք
- Ձեր ժամադրությանը ներկայացեք ժամանակին, հասնելով մի քանի րոպե առաջ՝ գրանցվելու, ձևաթղթեր լցնելու և PCP-ի ունեցած հարցերին պատասխանելու համար:
- Անմիջապես զանգահարեք, եթե չեք կարող Ձեր ժամադրությունը հարգել կամ ուշանալու եք
- Պատրաստի ունեցեք Ձեր հարցերն ու դեղերին վերաբերող տեղեկությունը՝ դրանց կարիքն առաջանալու դեպքում

Եթե ունեք արտակարգ իրավիճակ, զանգահարեք **911** համարով կամ գնացեք ամենից մոտիկ շտապ օգնության կայանը:

Ձեր ժամադրության հասնելը

Եթե չունեք Ձեր առողջական խնամքի ծառայությունների և ժամադրությունների համար երթուղարձի միջոց, կարող ենք օգնել Ձեր փոխադրության դասավորման: Փոխադրական ծառայությունը տրամադրելի է ծառայությունների և ժամադրությունների համար, որոնք կապ չունեն արտակարգ իրավիճակի ծառայությունների հետ և թերևս կարողանաք անվճար ուղևորություն ձեռք բերել: Այս ծառայությունը, բժշկական փոխադրություն կոչվող, արտակարգ իրավիճակների համար **չէ**: Եթե ունեք արտակարգ իրավիճակ, զանգահարեք **911**:

Հավելյալ տեղեկության համար գնացեք «Փոխադրական նպաստներ» բաժինը:

Ջնջում և վերանշանակում

Եթե չեք կարող ներկայանալ ժամադրության, անմիջապես զանգահարեք Ձեր մատակարարի գրասենյակ: Բժիշկների մեծ մասը Ձեզանից խնդրում է զանգահարել Ձեր ժամադրությունից 24 ժամ (1 աշխատանքային օր) առաջ, եթե ստիպված եք ջնջել: Եթե բաց թողնեք կրկնվող ժամադրություններ, թերևս Ձեր բժիշկը չցանկանա այլևս Ձեզ որպես հիվանդ տեսնել:

Վճարում

Պարտավոր **չեք** վճարել ապահովագրված ծառայությունների համար: Հիմնականում, մատակարարից հաշիվ չեք ստանա: Ձեր L.A. Care-ի ճանաչողական քարտը և Medi-Cal-ի BIC-ը պարտավոր եք ցույց տալ որևէ առողջական խնամքի ծառայություն կամ դեղատոմսային դեղ ստանալու պահին, որպեսզի Ձեր մատակարարն իմանա ում հաշիվ ուղարկել: Թերևս ստանաք նպաստների բացատրություն (Explanation of Benefits, EOB) կամ հաշվեցույց մատակարարից: EOB-ները և հաշվեցույցները հաշիվներ չեն:



Ջանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Հաշիվ ստանալու դեպքում, զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909** (TTY **711**) համարով: Եթե հաշիվ ստանաք դեղատոմսերի համար, զանգահարեք Medi-Cal Rx **800-977-2273** համարով (TTY **800-977-2273** և սեղմեք 5 կամ **711**): Կամ այցելեք Medi-Cal Rx-ի կայքը՝ <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/>: L.A. Care-ին հայտնեք գանձելի գումարը, ծառայության ամսաթիվը և հաշվի դրդապատճառը: Դուք պարտավոր **չեք** մատակարարին վճարել որևէ գումար, որը կազմում է L.A. Care-ի պարտավորությունը որևէ ապահովագրված ծառայության համար: Պարտավոր եք նախավավերացում (նախօրոք լիազորում) ստանալ արտացանցային մատակարարի գնալու համար, բացառությամբ շտապ օգնությունից կամ զգայուն խնամքից կամ հրատապ խնամքից (L.A. Care-ի սպասարկման տարածքի ներսում):

Նախավավերացում չստանալու դեպքում, թերևս պարտավորվեք վճարել ցանցում չգտնվող մատակարարներից ստացված խնամքի համար: Եթե Ձեզ անհրաժեշտ են ապահովագրված առողջական խնամքի ծառայություններ, թերևս կարողանաք դրանք անվճար ստանալ արտացանցային մատակարարից, պայմանով, որ դրանք լինեն բժշկականորեն անհրաժեշտ, տրամադրելի չլինեն ցանցի ներսում և նախավավերացված չլինեն L.A. Care-ի կողմից: Շտապ օգնության, հրատապ խնամքի և զգայուն ծառայությունների մասին հավելյալ տեղեկության համար գնացեք այս գլխի այդ խորագրերին:

Եթե հաշիվ ստանաք կամ Ձեզանից խնդրվի վճարել համավճար, որը կարծում եք, որ չպետք է վճարեք, զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909** (TTY **711**) համարով: Հաշիվ վճարելու դեպքում, կարող եք պահանջ ներկայացնել L.A. Care-ին: Պարտավոր եք L.A. Care-ին հայտնել, թե ինչու եք հարկադրվել վճարել իրի կամ ծառայության համար: L.A. Care-ը կորոշի, որ կարող եք հետ ստանալ Ձեր փողը: Հարցերի համար զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Վետերանների գործերի (Veterans Affairs) համակարգում ծառայություններ կամ Կալիֆորնիայից դուրս չլիազորված ծառայություններ ստանալու դեպքում, թերևս պատասխանատու լինեք վճարման համար:

L.A. Care-ը Ձեզ չի հատուցի, եթե՝

- Խնդրել և ստացել եք ծառայություններ, որոնք չեն ապահովագրվում Medi-Cal-ի կողմից, ինչպես՝ գեղարարական ծառայությունները:
- Ունեք Medi-Cal-ի չլրացված ծախսաբաժին:
- Գնացել եք մի բժշկի, ով Medi-Cal չի առնում և Դուք ստորագրել եք մի ձևաթուղթ, որն ասում է, որ այնուամենայնիվ ուզում եք, որ Ձեզ տեսնեն և Դուք ինքներդ կվճարեք ծառայությունների համար:
- Խնդրել եք, որ հատուցվեք Ձեր Medicare-ի D Մասի ծրագրի կողմից ապահովագրվող դեղատոմսերի համավճարների համար:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**): L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Ուղեգրեր

Ձեր PCP-ն հարկ եղած դեպքում, Ձեզ ուղեգիր կտա՝ Ձեզ մասնագետի ուղարկելու համար: Մասնագետը մի բժիշկ է, ով հավելյալ ուսում է ստացել բժշկության ինչ-որ մարզում: Ձեր PCP-ն Ձեզ հետ կգործի մասնագետի ընտրության համար: Ձեր PCP-ի գրասենյակը կարող է օգնել, որ ժամանակ նշանակեք մասնագետին այցելելու համար:

Ուղեգրի կարիք ունեցող ուրիշ ծառայությունների թվում են՝ գրասենյակում իրականացվող ընթացակարգերը, ռենտգեն պատկերումները, լաբորատորային անալիզները և մասնագետները:

Ձեր PCP-ն թերևս Ձեզ ձևաթուղթ տա մասնագետին տանելու համար: Մասնագետը կլրացնի ձևաթուղթը և հետ կուղարկի Ձեր PCP-ին: Մասնագետը Ձեզ կբուժի քանի դեռ կգտնի, որ կարիք ունեք բուժման:

Եթե ունեք երկար ժամանակով հատուկ բժշկական խնամք պահանջող առողջական խնդիր, Ձեզ անհրաժեշտ կլինի մի մշտական ուղեգիր: Սա նշանակում է, որ կարող եք նույն մասնագետին այցելել ավելի երկար ժամանակ՝ առանց նոր ուղեգիր ստանալու:

Եթե դժվարանում եք մշտական ուղեգիր ստանալ կամ ցանկանում եք պատճենը L.A. Care-ի ուղղորդումների քաղաքականության, զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Ձեզ ուղեգիր անհրաժեշտ չէ հետևյալի համար՝

- PCP-ի այցեր
- Մանկաբարձության/Գինեկոլոգիայի (OB/GYN) այցեր
- Հրատապ և արտակարգ իրավիճակի խնամքի այցեր
- Չափահասի զգայուն ծառայություններ, ինչպես՝ սեռական ոտնձգության խնամքը
- Ընտանիքի ծրագրման ծառայություններ (ավելին իմանալու համար զանգահարեք Ընտանիքի ծրագրման տեղեկատվության և ուղղորդման ծառայություն [Family Planning Information and Referral Service] **1-800-942-1054** համարով)
- ՄԻԱՎ-ի ստուգում և խորհրդատվություն (12 տարեկան կամ ավելի տարեց)
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների ծառայություններ (12 տարեկան կամ ավելի տարեց)
- Ոսկրահարդարման ծառայություններ (ուղեգիր թերևս պահանջվի, երբ մատուցվում են արտացանցային FQHC-ների, RHC-ների և IHCP-ների կողմից)
- Հոգեկան առողջության սկզբնական գնահատում
- Հոգեկան առողջության շարունակվող բուժում



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Դեռահասները ևս կարող են ստանալ որոշակի ամբուլատոր հոգեկան առողջության ծառայություններ, զգայուն ծառայություններ և թմրանյութի օգտագործման խանգարման ծառայություններ առանց ծնողի համաձայնության: Հավելյալ տեղեկության համար այս տեղեկագրքում կարդացեք «Դեռահասների համաձայնությամբ ծառայություններ» և «Թմրանյութի օգտագործման խանգարման բուժման ծառայություններ» բաժինները:

Պատրա՛ստ եք ծխելը դադարեցնել Զանգահարեք Անգլերեն՝ 1-800-300-8086 կամ Իսպաներեն՝ 1-800-600-8191 պարզելու ինչպես: Կամ գնացեք www.kickitca.org կայքը:

Նախավավերացում (նախօրոք լիազորում)

Խնամքի մի շարք տեսակների համար Ձեր PCP-ն կամ մատակարարը պարտավոր է L.A. Care-ից արտոնություն խնդրել՝ նախքան խնամքն ստանալը: Սա կոչվում է նախօրոք լիազորում, նախօրոք վավերացում կամ նախավավերացում խնդրել: Սա նշանակում է, որ L.A. Care-ը պետք է վստահ լինի, որ խնամքը բժշկականորեն անհրաժեշտ կամ պետքական է:

Բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները տրամաբանական և անհրաժեշտ են Ձեր կյանքը պաշտպանելու համար, արգելում են Ձեր լուրջ հիվանդ կամ հաշմանդամ դառնալը, կամ մեղմացնում են սաստիկ ցավը՝ ախտորոշված ախտից, հիվանդությունից կամ վնասվածքից: 21 տարեկանից փոքր Անդամների համար Medi-Cal-ի ծառայությունները ներառում են խնամք, որը բժշկականորեն անհրաժեշտ է ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ վիճակը շտկելու կամ մեղմացնելու համար:

Հետևյալ ծառայությունները միշտ նախավավերացում (նախօրոք լիազորում) են պահանջում, նույնիսկ եթե դրանք ձեռք բերեք L.A. Care-ի ներցանցային մատակարարից՝

- Հիվանդանոցային բուժում, եթե արտակարգ իրավիճակ չէ
- Ծառայություններ L.A. Care-ի սպասարկման տարածքից դուրս, եթե արտակարգ իրավիճակ կամ հրատապ չեն
- Ամբուլատոր վիրահատություն
- Երկարատև խնամք բուժքույրական հաստատությունում
- Մասնագիտացված բուժումներ
- Բժշկական փոխադրության ծառայությունները, երբ չկա արտակարգ իրավիճակ: Շտապ օգնության հիվանդակառքի ծառայությունները նախավավերացում չեն պահանջում:
- Գլխավոր օրգանի փոխպատվաստում



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Առողջապահության և անվտանգության օրենսգրքի (Health and Safety Code) 1367.01(h)(1) Բաժնի ներքո, L.A. Care-ը սովորական նախավավերացումները (նախօրոք լիազորումները) կորոշի 5 աշխատանքային օրվա ընթացքում, երբ L.A. Care-ը ստանա որոշման համար տրամաբանորեն անհրաժեշտ տեղեկությունը:

Խնդրանքների համար, որոնց դեպքում մատակարարը նշում կամ L.A. Care-ը որոշում է, որ տիպական ժամկետին հետևելը կարող է լրջորեն վտանգել Ձեր կյանքը կամ առողջությունը կամ առավելագույն գործառույթ ձեռք բերելու, պահպանելու կամ վերագտնելու կարողությունը, L.A. Care-ը կկայացնի արագացված (արագ) նախավավերացման (նախօրոք լիազորման) որոշում: L.A. Care-ը ծանուցում կտա Ձեզ այնքան արագ՝ ինչքան Ձեր առողջական վիճակը պահանջի և ոչ ավելի ուշ քան 72 ժամից՝ ծառայությունների համար խնդրանքն ստանալուց հետո:

Նախավավերացման (նախօրոք լիազորման) խնդրանքները քննվում են կլինիկական կամ բժշկական անձնակազմի կողմից, ինչպես՝ բժիշկները, բուժքույրերը և դեղագործները:

L.A. Care-ը **չի** վճարում վերանայողներին՝ ապահովագրություն կամ ծառայություններ մերժելու համար: Եթե L.A. Care-ը չվավերացնի խնդրանքը, L.A. Care-ը Ձեզ կուղարկի Գործողության ծանուցագրի (Notice of Action, NOA) նամակ: NOA նամակը Ձեզ կհայտնի ինչպես բողոք ներկայացնել, եթե համաձայն չլինեք որոշման:

L.A. Care-ը կապ կհաստատի Ձեզ հետ, եթե L.A. Care-ին անհրաժեշտ լինի հավելյալ ժամանակ Ձեր խնդրանքը վերանայելու համար:

Շտապ օգնության համար Ձեզ երբեք նախավավերացում (նախօրոք լիազորում) անհրաժեշտ չի լինի, նույնիսկ արտացանցային կամ սպասարկման տարածքից դրսի դեպքում: Սա ներառում է երկունքն ու մանկածնությունը, եթե հղի եք: Ձեզ նախավավերացում (նախօրոք լիազորում) անհրաժեշտ չէ զգալուն ծառայությունների համար, ինչպես՝ ընտանիքի ծրագրման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ծառայությունները և ամբուլատոր վիժումները:

Նախավավերացման (նախօրոք լիազորման) մասին հարցերի համար զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Երկրորդ կարծիքներ

Թերևս երկրորդ կարծիք ցանկանաք խնամքի վերաբերյալ, որի համար Ձեր մատակարարը հայտնում է, որ այն անհրաժեշտ է Ձեզ, կամ՝ Ձեր ախտորոշման կամ բուժման ծրագրի վերաբերյալ: Օրինակ, թերևս երկրորդ կարծիք ցանկանաք, եթե վստահ չեք, որ արդյո՞ք Ձեզ անհրաժեշտ է նշանակված բուժում կամ վիրահատություն, կամ եթե փորձել եք հետևել բուժման ծրագրի և այն չի հաջողվել:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Եթե ցանկանում եք երկրորդ կարծիք ստանալ, մենք Ձեզ կուղղորդենք ցանցի որակյալ մատակարարի, ով կարող է երկրորդ կարծիք տալ Ձեզ: Մատակարար ընտրելու կապակցությամբ օգնության համար զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909** (TTY 711) համարով:

L.A. Care-ը կվճարի երկրորդ կարծիքի համար, եթե Դուք կամ Ձեր ցանցի մատակարարը խնդրեք այն և երկրորդ կարծիքն ստանաք ցանցի մատակարարից: Ցանցի մատակարարից երկրորդ կարծիք ստանալու համար Ձեզ անհրաժեշտ չի լինի L.A. Care-ից արտոնություն: Այնուամենայնիվ, Եթե Ձեզ ուղեգիր է պետք, Ձեր ցանցի մատակարարը կարող է օգնել, որ երկրորդ կարծիքի համար ուղեգիր ձեռք բերեք, եթե դրա կարիքն ունեք:

Եթե L.A. Care-ի ցանցում չկա Ձեզ երկրորդ կարծիք տվող մատակարար, L.A. Care-ը կվճարի արտացանցային մատակարարից երկրորդ կարծիքի համար: L.A. Care-ը Ձեզ 5 օրվա ընթացքում կհայտնի, որ արդյո՞ք երկրորդ կարծիքի համար Ձեր ընտրած մատակարարը վավերացվել է: Եթե ունեք քրոնիկ, սաստիկ կամ լուրջ հիվանդություն, կամ դիմագրավում եք մի անմիջական և լուրջ վտանգ Ձեր առողջության, ներառյալ՝ առանց դրանցով սահմանափակվելու, կյանքի, մի վերջույթի կամ մարմնի մի գլխավոր մասի կամ մարմնական գործառույթի կորուստ, L.A. Care-ը Ձեզ գրավոր կհայտնի 72 ժամվա ընթացքում:

Եթե L.A. Care-ը մերժի երկրորդ կարծիքի Ձեր խնդրանքը, կարող եք բողոք ներկայացնել: Բողոքների մասին ավելին իմանալու համար դիմեք այս տեղեկագրի «Գանգատներ» խորագրին՝ «Խնդիրների հաղորդում և լուծում» խորագրով գլխում:

Զգայուն խնամք

Դեռահասների համաձայնությամբ ծառայություններ

Կարող եք ստանալ միայն հետևյալ ծառայությունները առանց Ձեր ծնողի կամ խնամակալի արտոնության, եթե 12 տարեկան կամ ավելի տարեց եք՝

- Ամբուլատոր հոգեկան առողջության խնամք հետևյալի համար (12 տարեկան կամ ավելի տարեց դեռահասներ)՝
 - Սեռական ոտնձգություն (ավելի ցածր տարիքի սահման չկա)
 - Արյունապղծություն
 - Ֆիզիկական ոտնձգություն
 - Երեխայի չարաշահում
 - Երբ Դուք Ձեզ կամ ուրիշներին վնասելու մտքեր ունեք (12 տարեկան կամ ավելի տարեց դեռահասներ)



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY 711):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում/ստուգում/բուժում
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխարգելում/ստուգում/բուժում
- Թմրանյութի օգտագործման չարաշահման բուժման ծառայություններ (12 տարեկան կամ ավելի տարեց դեռահասներ): Հավելյալ տեղեկության համար տեսեք այս տեղեկագրքում «Թմրանյութի օգտագործման խանգարման բուժման ծառայություններ» բաժինը:

Եթե չեք դարձել 18 տարեկան, կարող եք բժշկի գնալ առանց Ձեր ծնողների կամ խնամատարի արտոնության, հետևյալ տեսակի խնամքի համար՝

- Հղիություն
- Ընտանիքի ծրագրում/ծննդյան հսկողություն (ներառյալ՝ ամլացումը)
- Վիժման ծառայություններ

Հղիության ստուգման, ընտանիքի ծրագրման ծառայությունների, ծննդյան հսկողության կամ սեռական ճանապարհով փոխանցվող վարակի ծառայությունների համար պարտադիր չէ, որ բժիշկը կամ կլինիկան մաս կազմի L.A. Care-ի ցանցին: Կարող եք ընտրել որևէ Medi-Cal-ի մատակարարի և այս ծառայությունների համար նրան այցելել առանց ուղղորդման կամ նախավավերացման (նախօրոք լիազորման): Զգայուն խնամքի հետ կապված արտացանցային մատակարարի ծառայությունները չեն կարող ապահովագրվել: Այս ծառայությունները մատուցող բժշկի կամ կլինիկա գտնելու կամ այս ծառայությունները (ներառյալ՝ փոխադրության) ստանալու նպատակով օգնության համար կարող եք զանգահարել **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Դեռահասները կարող են իրենց առողջական մտահոգությունների մասին ներկայացուցչի հետ գաղտնի զրուցել զանգահարելով 24/7 **Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ 1-800-249-3619 (TTY 711)** համարով:

Չափահասի զգայուն ծառայություններ

Որպես չափահաս (18 տարեկան կամ ավելի տարեց), թերևս չցանկանաք Ձեր PCP-ին այցելել զգայուն կամ գաղտնի խնամքի համար: Այդպիսի դեպքում, կարող եք խնամքի հետևյալ տեսակների համար ընտրել որևէ բժշկի կամ կլինիկա՝

- Ընտանիքի ծրագրում/ծննդյան հսկողություն (ներառյալ՝ ամլացումը)
- Հղիության ստուգում և խորհրդատվություն
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում և ստուգում
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխարգելում, ստուգում և բուժում
- Սեռական ոտնձգության խնամք
- Ամբուլատոր վիժման ծառայություններ



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Պարտադիր չէ, որ բժիշկը կամ կլինիկան մաս կազմի L.A. Care-ի ցանցին: Կարող եք ընտրել որևէ մատակարարի և այս ծառայությունների համար նրան այցելել առանց ուղղորդման կամ նախավավերացման (նախօրոք լիազորման): Զգայուն խնամքի հետ կապված արտացանցային մատակարարի ծառայությունները չեն կարող ապահովագրվել: Այս ծառայությունները մատուցող բժշկի կամ կլինիկա գտնելու կամ այս ծառայությունները (ներառյալ՝ փոխադրումը) ստանալու նպատակով օգնության համար կարող եք զանգահարել **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Կարող եք նաև զանգահարել **24/7 Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ 1-800-249-3619 (TTY 711)** համարով:

Բարոյական առարկություն

Մի շարք մատակարարներ բարոյական առարկություն ունեն մի շարք ապահովագրված ծառայությունների նկատմամբ: Սա նշանակում է, որ նրանք իրավունք ունեն **չմատուցելու** մի շարք ապահովագրված ծառայություններ, եթե բարոյապես համաձայն չեն այդ ծառայությունների հետ: Եթե Ձեր մատակարարն ունի բարոյական առարկություն, նա Ձեզ կօգնի անհրաժեշտ ծառայությունների համար գտնել մի ուրիշ մատակարար: L.A. Care-ը ևս կարող է Ձեզ հետ գործել մատակարար գտնելու համար:

Որոշ հիվանդանոցներ և այլ մատակարարներ չեն տրամադրում հետևյալ ծառայություններից մեկը կամ ավելին, որոնք կարող են ապահովագրված լինել ձեր ծրագրի պայմանագրի ներքո, և որոնց կարիքը դուք կամ ձեր ընտանիքը կարող եք ունենալ՝

- Ընտանիքի ծրագրում.
- Հակաբեղմնավորման ծառայություններ, ներառյալ՝ շտապ հակաբեղմնավորում.
- Ամլացումը, ներառյալ՝ երկունքի և ծննդաբերության ժամանակ արգանդափողի կապումը.
- Անպտղության բուժումները.
- Վիժումը:

Անդամագրվելուց առաջ հավելյալ տեղեկություն պետք է ձեռք բերեք: Զանգահարեք Ձեր հավանական բժշկին, բժշկական խմբին, անկախ մասնագիտական աշխատանքի ընկերության կամ կլինիկային, կամ զանգահարեք L.A. Care-ի Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711) համարով, որպեսզի վստահ լինեք, որ կարող եք ստանալ Ձեզ հարկավոր առողջական խնամքի ծառայությունները:

Այս ծառայությունները տրամադրելի են և L.A. Care-ը պարտավոր է երաշխավորել, որ Դուք կամ Ձեր ընտանիքի անդամը այցելեք մատակարարի կամ ընդունվեք հիվանդանոց, որը կկատարի ապահովագրված ծառայությունները: Զանգահարեք L.A. Care **1-888-839-9909 (TTY 711)** համարով, եթե ունեք հարցեր կամ մատակարար գտնելու օգնության կարիք:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Հրատապ խնամք

Հրատապ խնամքը արտակարգ իրավիճակի կամ կյանքին սպառնացող բնույթի վիճակի համար **չէ**: Այն ծառայությունների համար է, որոնք Ձեզ անհրաժեշտ են հանկարծահաս հիվանդությունից, վնասվածքից կամ դեռևս Ձեր ունեցած վիճակի բարդացումից Ձեր առողջության հասնելիք լուրջ վնասի կանխարգելման համար: Հրատապ խնամքի ժամադրությունների մեծ մասի համար անհրաժեշտ չէ նախավավերացում (նախօրոք լիազորում) և դրանք տրամադրելի են ժամադրության Ձեր խնդրանքից 48 ժամվա ընթացքում: Եթե Ձեզ անհրաժեշտ հրատապ խնամքի ծառայությունները պահանջում են նախավավերացում, Ձեզ ժամադրություն կտան խնդրանքից 96 ժամվա ընթացքում:

Հրատապ խնամքի համար զանգահարեք Ձեր PCP-ին: Եթե չեք կարող հասնել Ձեր PCP-ին, զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Կամ կարող եք զանգահարել **Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ** օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը, **1-800-249-3619 (TTY 711)** համարով՝ իմանալու Ձեզ ամենից հարմար խնամքի մակարդակը: Կարող եք նաև առցանց անվճար զրուցել մի բուժքրոջ հետ: Խնդրում ենք այցելել [lacare.org](https://members.lacare.org) կայքը և մուտք գործել L.A. Care Connect անդամի կայքամուտք՝ <https://members.lacare.org>, օգտվելու համար բուժքրոջ հետ զրուցելու հնարավորությունից:

Եթե Ձեզ հրատապ խնամք է հարկավոր տարածքից դուրս, գնացեք մոտակա հրատապ խնամքի հաստատությունը: Հրատապ խնամքի կարիքներ կարող են լինել հարբուխը կամ կոկորդի ցավը, տենդը, ականջի ցավը, գերձգված մկանը կամ մայրության ծառայությունները: Ձեզ անհրաժեշտ չի լինի նախավավերացում (նախօրոք լիազորում): Եթե կարիք ունեք հոգեկան առողջության հրատապ խնամքի, զանգահարեք Ձեր վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագիր (Mental Health Plan) կամ **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Ձեր վարչաշրջանի Հոգեկան առողջության ծրագիր կամ Ձեր L.A. Care-ի Վարքագծային առողջության կազմակերպություն (Behavioral Health Organization) կարող եք զանգահարել որևէ ժամանակ, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Բոլոր վարչաշրջանների անվճար հեռախոսահամարները առցանց գտնելու համար այցելեք հետևյալ կայքը՝ <http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContaktList.aspx>:

Շտապ օգնության խնամք

Շտապ օգնության համար զանգահարեք **911** համարով կամ գնացեք ամենից մոտիկ շտապ օգնության կայանը (Emergency Room, ER): Շտապ օգնության համար Ձեզ L.A. Care-ից նախավավերացում (նախօրոք լիազորում) անհրաժեշտ **չի** լինի: Շտապ օգնության համար իրավունք ունեք օգտագործելու որևէ հիվանդանոց կամ ուրիշ դրվածք, ներառյալ՝ Կանադայում և Մեքսիկայում: Ուրիշ երկրներում շտապ օգնություն և այլ տեսակի խնամք չի ապահովագրվում:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ [lacare.org](https://members.lacare.org):

Շտապ օգնությունը կյանքին սպառնացող բժշկական վիճակների համար է: Այս խնամքը սահմանված է հիվանդության կամ վնասվածքի, որի համար առողջապահության և բժշկության մասին միջին գիտելիքների տեր խելամիտ (տրամաբանող) պարզ անձը (ոչ առողջական խնամքի մասնագետը) կարող է սպասել, որ խնամքը անմիջապես չստանալու դեպքում, Դուք Ձեր առողջությունը (կամ Ձեր չծնված երեխայի առողջությունը) կարող եք վտանգվել, կամ մարմնի մի գործառույթի, մարմնի օրգանի կամ մարմնի մասի կարող եք լրջորեն վնասել: Օրինակները կարող են ներառել, առանց սահմանափակման, հետևյալը՝

- Ակտիվ երկունք
- Չափից մեծ դեղաչափ
- Կոտրված ոսկոր
- Ուշաթափություն
- Սաստիկ ցավ
- Սաստիկ արյունահոսություն
- Կրծքավանդակի ցավ
- Հոգեբուժական արտակարգ իրավիճակ, ինչպես՝ սաստիկ ընկճվածությունը կամ ինքնասպանական մտածումները
- Խնդիրներ շնչառության հետ
- Սաստիկ այրվածք

ER մի գնացեք սովորական խնամքի կամ անմիջապես անհրաժեշտ չեղող խնամքի համար: Սովորական խնամքը պետք է ստանաք Ձեր PCP-ից, ով լավագույնս ճանաչում է Ձեզ: Եթե կասկածներ ունեք արտակարգ իրավիճակի վերաբերյալ, զանգահարեք Ձեր PCP-ին: Կարող եք նաև զանգահարել 24/7 **Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ 1-800-249-3619 (TTY 711)** համարով:

Եթե շտապ օգնության կարիք ունեք տնից հեռու գտնվելիս, գնացեք մոտակա շտապ օգնության կայանը (ER), նույնիսկ եթե այն չի գտնվում L.A. Care-ի ցանցում: ER գնալու դեպքում նրանցից խնդրեք զանգահարել L.A. Care: Դուք կամ Ձեզ ընդունած հիվանդանոցը պարտավոր եք L.A. Care զանգահարել շտապ օգնության ստացման հաջորդող 24 ժամվա ընթացքում: Եթե ճանապարհորդվում եք ԱՄՆ-ից դուրս, բացի Կանադայից կամ Մեքսիկայից, և Ձեզ շտապ օգնություն է հարկավոր, L.A. Care-ը **չի** ապահովագրի Ձեր խնամքը:

Արտակարգ իրավիճակի փոխադրության կարիքի դեպքում զանգահարեք **911** համարով: Պարտավոր չեք նախ Ձեր PCP-ին կամ L.A. Care-ին դիմել ER գնալուց առաջ:

Եթե Ձեր արտակարգ իրավիճակից հետո խնամքի կարիք ունեք արտացանցային հիվանդանոցում (հետ-կայունացման խնամք), հիվանդանոցը կզանգահարի L.A. Care:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Հիշեք՝ Մի զանգահարեք **911** համարով, եթե չկա արտակարգ իրավիճակ: Շտապ օգնությունն ստացեք միայն արտակարգ իրավիճակի, ոչ թե սովորական խնամքի կամ հարբուխի կամ կոկորդի ցավի նման երկրորդական հիվանդությունների համար: Եթե կա արտակարգ իրավիճակ, զանգահարեք **911** համարով կամ գնացեք մոտակա շտապ օգնության կայանը:

L.A. Care-ի Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծը Ձեզ տալիս է անվճար բժշկական տեղեկություն և խորհուրդ օրը 24 ժամ, տարվա ամեն օր: Զանգահարեք 1-800-249-3619 (TTY 711) համարով:

Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ

L.A. Care-ի **Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծը** Ձեզ տալիս է անվճար բժշկական տեղեկություն և խորհուրդ օրը 24 ժամ, տարվա ամեն օր: Զանգահարեք **1-800-249-3619 (TTY 711)** համարով, որպեսզի՝

- Խոսեք մի բուժքրոջ հետ, ով կպատասխանի բժշկական հարցերի, կտա խնամքի խորհուրդ և կօգնի, որ որոշեք, թե պետք է անմիջապես տեսնել մատակարարի
- Ստանաք օգնություն բժշկական վիճակների կապակցությամբ, ինչպես՝ շաքարախտը կամ ասթման, ներառյալ՝ խորհուրդ, թե ինչ տեսակի մատակարար կարող է ճիշտ լինել Ձեր վիճակի համար

Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծը չի կարող օգնել կլինիկական ժամադրությունների կամ դեղերի վերալցումների կապակցությամբ: Սրանց վերաբերյալ օգնության համար զանգահարեք Ձեր մատակարարի գրասենյակ:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Նախօրոք հրահանգներ

Առողջության նախօրոք հրահանգը օրինական ձևաթուղթ է: Նրանում կարող եք թվարկել, թե ինչպիսի առողջական խնամք եք ցանկանում՝ հետագայում խոսելու կամ որոշումներ կայացնելու անկարողության դեպքում: Կարող եք թվարկել, թե ինչպիսի խնամք **չեք** ցանկանում: Կարող եք նշանակել մեկին, ինչպես՝ կողակցին, որպեսզի Ձեր առողջական խնամքի համար որոշումներ կայացնի, երբ Դուք չեք կարող:

Նախօրոք հրահանգի ձևաթուղթը կարող եք ստանալ դեղատներից, հիվանդանոցներից, իրավաբանական գրասենյակներից և բժիշկների գրասենյակներից: Թերևս հարկադրվեք վճարել ձևաթղթի համար: Կարող եք նաև անվճար ձևաթուղթ գտնել առցանց և ներբեռնել այն: Կարող եք Ձեր ընտանիքի անդամից, PCP-ից, կամ վստահելի անձից խնդրել, որ Ձեզ օգնի ձևաթուղթը լրացնելու համար:

Իրավունք ունեք պահանջելու, որ Ձեր նախօրոք հրահանգը տեղադրեն Ձեր բժշկական արձանագրություններում: Իրավունք ունեք Ձեր նախօրոք հրահանգը փոխելու կամ ջնջելու որևէ ժամանակ:

Իրավունք ունեք իմանալու նախօրոք հրահանգի օրենքների փոփոխության մասին: L.A. Care-ը Ձեզ կտեղեկացնի նահանգային օրենքի փոփոխությունների մասին փոփոխությանը հաջորդող 90 օրվա ընթացքում:

Հավելյալ տեղեկության համար կարող եք զանգահարել L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Օրգանի և հյուսվածքի նվիրում

Չափահասները կարող են օգնել կյանքեր փրկելու գործին՝ դառնալով օրգանի կամ հյուսվածքի նվիրատու: Եթե 15-ից 18 տարեկան եք, կարող եք նվիրատու դառնալ Ձեր ծնողի կամ խնամակալի գրավոր համաձայնությամբ: Կարող եք Ձեր միտքը որևէ ժամանակ փոխել օրգանի նվիրատու լինելու վերաբերյալ: Եթե ցանկանում եք ավելին իմանալ օրգանի և հյուսվածքի նվիրման վերաբերյալ, խոսեք Ձեր PCP-ի հետ: Կարող եք նաև այցելել Միացյալ Նահանգների Առողջապահության և մարդու ծառայությունների նախարարության (Department of Health and Human Services) կայքը՝ www.organdonor.gov:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

4. Նպաստներ և ծառայություններ

Ինչ է ապահովագրում Ձեր առողջապահական ծրագիրը

Այս գլուխը բացատրում է որպես L.A. Care-ի անդամ Ձեր ապահովագրված ծառայությունները: Ձեր ապահովագրված ծառայություններն անվճար են պայմանով, որ բժշկականորեն անհրաժեշտ լինեն և մատուցվեն ներցանցային մատակարարի կողմից: Պարտավոր եք մեզանից նախավերացում (նախօրոք լիազորում) խնդրել, եթե խնամքն արտացանցային է, բացի զգայուն ծառայություններից, արտակարգ իրավիճակներից կամ մի շարք հրատապ խնամքի ծառայություններից: Ձեր առողջապահական ծրագիրը թերևս ապահովագրի արտացանցային մատակարարի բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները: Բայց սրա համար L.A. Care-ից պետք է խնդրեք նախավերացում (նախօրոք լիազորում): Բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները տրամաբանական և անհրաժեշտ են Ձեր կյանքը պաշտպանելու համար, արգելում են Ձեր լուրջ հիվանդ կամ հաշմանդամ դառնալը, կամ մեղմացնում են սաստիկ ցավը՝ ախտորոշված ախտից, հիվանդությունից կամ վնասվածքից: 21 տարեկանից փոքր Անդամների համար Medi-Cal-ի ծառայությունները ներառում են խնամք, որը բժշկականորեն անհրաժեշտ է ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ վիճակը շտկելու կամ մեղմացնելու համար: Ձեր ապահովագրված ծառայությունների մասին հավելյալ մանրամասների համար զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

21 տարեկանից փոքր Անդամները ստանում են հավելյալ նպաստներ և ծառայություններ: Կարդացեք 5-րդ Գլուխը՝ Երեխայի և պատանիների լավ խնամք, հավելյալ տեղեկության համար:

L.A. Care-ի առաջարկած տարրական առողջության նպաստներից մի քանիսը թվարկվում են ստորև: Աստղանիշով (*) նպաստների համար թերևս անհրաժեշտ լինի նախավերացում:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

- Ասեղնաբուժություն*
- Սուր (կարճաժամկետ բուժում) տնային առողջապահական բուժումներ և ծառայություններ
- Չափահասի պատվաստումներ (սրսկումներ)
- Ալերգիայի ստուգումներ և ներարկումներ*
- Արտակարգ իրավիճակի համար հիվանդակառքի ծառայություններ
- Զգայազրկող մասնագետի ծառայություններ*
- Լսաբանություն*
- Վարքագծային առողջության բուժումներ*
- Սրտի վերականգնում*
- Ոսկրահարդարման ծառայություններ*
- Քիմիաբուժում և ճառագայթային բուժում*
- Ատամնաբուժական ծառայություններ - սահմանափակ (կատարված բժշկական մասնագետի/PCP-ի կողմից բժշկական գրասենյակում)
- Դիալիզի/արյան դիալիզի ծառայություններ*
- Տևական օգտագործման բժշկական սարքեր (Durable Medical Equipment, DME)*
- Շտապ օգնության կայանի այցեր
- Աղիքային և արտաղիքային սնուցում*
- Ընտանիքի ծրագրման գրասենյակ այցեր և խորհրդատվություն (կարող եք ոչ-մասնակից մատակարարի գնալ)
- Վերականգնողական ծառայություններ և սարքեր*
- Լսողական սարքեր*
- Տանը մատուցվող առողջական խնամք*
- Անբուժելի հիվանդների խնամք*
- Ստացիոնար բժշկական և վիրաբուժական խնամք*
- Լաբորատորիա և ռադիոլոգիա*
- Երկարաժամկետ տնային առողջության թերապիաներ և ծառայություններ*
- Մայրության և նորածնի խնամք
- Գլխավոր օրգանի փոխապատվաստում*
- Աշխատանքային թերապիա*
- Օրթեզ/պրոթեզ*
- Օստոմիա և միզական պաշարներ*
- Ամբուլատոր հիվանդանոցային ծառայություններ*
- Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ
- Ամբուլատոր վիրահատություն*
- Ցավամոքիչ խնամք*
- PCP-ի այցեր
- Մանկաբուժական ծառայություններ
- Ֆիզիկական թերապիա*
- Ոտնաթաթի բժշկության ծառայություններ*
- Թոքային վերականգնում*
- Վերականգնողական ծառայություններ և սարքեր*
- Հմուտ բուժքույրական խնամք*
- Մասնագետի այցեր*
- Խոսքի թերապիա*
- Վիրաբուժական ծառայություններ*
- Հեռաբժշկություն/ Հեռաառողջապահություն
- Սեռափոխության ծառայություններ*
- Հրատապ խնամք
- Տեսողական ծառայություններ
- Կանանց առողջապահական ծառայություններ

Ապահովագրված ծառայությունների սահմանումներն ու նկարագրությունները կարող եք գտնել 8-րդ Գլխում՝ «Կարևոր թվանշաններ և բառեր, որոնք պետք է իմանալ»:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
 հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները տրամաբանական և անհրաժեշտ են Ձեր կյանքը պաշտպանելու համար, արգելում են Ձեր լուրջ հիվանդ կամ հաշմանդամ դառնալը, կամ մեղմացնում են սաստիկ ցավը՝ ախտորոշված ախտից, հիվանդությունից կամ վնասվածքից:

Բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները ներառում են այն ծառայությունները, որոնք անհրաժեշտ են տարիքին հարմար աճի և զարգացման, կամ գործառական կարողություն ձեռք բերելու, պահպանելու կամ վերականգնելու համար:

21 տարեկանից փոքր Անդամների համար ծառայությունը բժշկականորեն անհրաժեշտ է, եթե այն անհրաժեշտ է թերություններ և ֆիզիկական ու հոգեկան հիվանդություններ ուղղելու կամ բարեկարգելու համար դաշնային Վաղ և պարբերաբար գնում, ախտորոշում և բուժում (Early and Periodic Screening, Diagnosis and Treatment, EPSDT) նպաստի ներքո: Սա ներառում է խնամքը, որն անհրաժեշտ է շտկելու կամ օգնելու, որ մեղմանա ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ վիճակը, կամ պահպանելու անդամի վիճակը՝ արգելելու համար դրա վատթարացումը:

Բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները չեն ներառում՝

- Չստուգված և դեռ ստուգվող բուժումներ
- Ծառայություններ կամ առարկաներ, որոնք սովորաբար չեն ընդունվել որպես արդյունավետ
- Բնականոն ընթացքից և տևողությունից դուրս ծառայություններ և ծառայություններ, որոնք չունեն կլինիկական ցուցումներ
- Ծառայություններ խնամողի կամ մատակարարի հարմարության համար

L.A. Care-ը կհամակարգի ուրիշ ծրագրերի հետ, որպեսզի երաշխավորի Ձեր բժշկականորեն անհրաժեշտ ծառայություններ ստանալը, նույնիսկ եթե այդ ծառայություններն ապահովագրվում են ուրիշ ծրագրի և ոչ թե L.A. Care-ի կողմից:

Բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները ներառում են ապահովագրված ծառայություններ, որոնք տրամաբանական եւ անհրաժեշտ են հետևյալների համար՝

- Կյանքի պաշտպանություն.
- Նշանակալից հիվանդության կամ նշանակալից հաշմանդամության կանխում.
- Սաստիկ ցավի մեղմացում.
- Տարիքին հարմար աճի և զարգացման իրագործում. և
- Գործառական կարողության ձեռքբերում, պահպանում և վերականգնում:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
 հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

21 տարեկանից փոքր Անդամների համար բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները ներառում են բոլոր վերը նշված ծառայությունները և որևէ այլ անհրաժեշտ առողջական խնամք, ախտորոշիչ ծառայություն, բուժում և այլ միջոցառումներ՝ ուղղելու կամ բարեկարգելու համար թերություններ և հոգեկան ու ֆիզիկական հիվանդություններ և վիճակներ, ինչպես պահանջվում է դաշնային Վաղ և պարբերաբար գնում, ախտորոշում և բուժում (EPSDT) նպաստի կողմից:

EPSDT-ն մատուցում է բազմատեսակ կանխման, ախտորոշման և բուժման ծառայություններ ցածր եկամտով նորածինների, երեխաների և 21 տարեկանից փոքր պատանիների: EPSDT-ի նպաստն ավելի ուժեղ է քան չափահասների համար նպաստը և նախատեսված է երաշխավորելու համար, որ երեխաներն ստանան վաղ հայտնաբերում և խնամք, որպեսզի առողջական խնդիրները կանխվեն կամ ախտորոշվեն և բուժվեն հնարավորինս վաղ: EPSDT-ն նպատակադրում է երաշխավորել, որ առանձին երեխաներ ստանան իրենց անհրաժեշտ առողջական խնամքը երբ այն անհրաժեշտ է իրենց՝ ճիշտ խնամքը ճիշտ երեխային ճիշտ պահի և ճիշտ դրվածքում:

L.A. Care-ը կհամակարգի ուրիշ ծրագրերի հետ, որպեսզի երաշխավորի Ձեր բժշկականորեն անհրաժեշտ ծառայություններ ստանալը, նույնիսկ եթե այդ ծառայություններն ապահովագրվում են ուրիշ ծրագրի և ոչ թե L.A. Care-ի կողմից:

L.A. Care-ի կողմից ապահովագրված Medi-Cal-ի նպաստներ

Չգիշերող հիվանդի (ամբուլատոր) ծառայություններ

Չափահասի անընկալացումներ

Չափահասի անընկալացումներ (սրսկումներ) կարող եք ստանալ ցանցի մատակարարից առանց նախավավերացման (նախօրոք լիազորման): L.A. Care-ը ապահովագրում է սրսկումները, որոնք հանձնարարվել են Հիվանդությունների կառավարման և կանխարգելման կենտրոնների (Centers for Disease Control and Prevention, CDC) Անընկալացման կիրառության խորհրդատու հանձնաժողովի (Advisory Committee on Immunization Practices, ACIP) կողմից, ներառյալ՝ սրսկումները, որոնք Ձեզ պետք են երբ ճամփորդում եք:

Կարող եք նաև մի շարք չափահասի անընկալացման (սրսկումների) ծառայություններ ստանալ մի դեղատան մեջ Medi-Cal Rx-ի միջոցով: Ավելին իմանալու համար Medi-Cal Rx ծրագրի մասին, կարդացեք այս գլխի «Medi-Cal-ի ուրիշ ծրագրեր և ծառայություններ» բաժինը:



Ջանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Ալերգիայի խնամք

L.A. Care-ը ապահովագրում է ալերգիայի ստուգումը և բուժումը, ներառյալ՝ ալերգիայի ապագայացումը, գերզգայացումը կամ իմունոթերապիան:

Զգայազրկող մասնագետի ծառայություններ

L.A. Care-ը ապահովագրում է զգայազրկման ծառայությունները, որոնք բժշկականորեն անհրաժեշտ են ամբուլատոր խնամք ստանալիս: Սա կարող է ընդգրկել զգայազրկումը ատամնաբուժական ընթացակարգերի համար, երբ մատուցվում են բժշկական զգայազրկող մասնագետի կողմից:

Ոսկրահարդարման (խիրոպրակտիկ) ծառայություններ

L.A. Care-ը ապահովագրում է ոսկրահարդարման ծառայությունները, այն սահմանափակելով ձեռքով ուղղելու միջոցով ողնաշարի բուժմամբ: Ոսկրահարդարման ծառայությունները սահմանափակվում են ամսական երկու ծառայությամբ: L.A. Care-ը կարող է նախավավերացնել ուրիշ ծառայություններ որպես բժշկականորեն անհրաժեշտ:

Հետևյալ անդամներն իրավասու են ոսկրահարդարման ծառայությունների՝

- 21 տարեկանից փոքր երեխաներ
- Հղի կանայք՝ մինչև հղիության ավարտին հաջորդող 60 օր ընդգրկող ամսվա վերջը
- Հմուտ բուժքույրական հաստատության, միջանկյալ խնամքի հաստատության կամ ենթասուր խնամքի հաստատության բնակիչները
- Բոլոր անդամները, երբ ծառայությունները մատուցվում են վարչաշրջանի հիվանդանոցների ամբուլատոր բաժանմունքներում, ամբուլատոր կլինիկաներում, FQHC-ներում կամ RHC-ներում, որոնք գտնվում են L.A. Care-ի ցանցում: Ոչ բոլոր FQHC-ները, RHC-ները կամ վարչաշրջանի հիվանդանոցներն են առաջարկում ամբուլատոր ոսկրահարդարման ծառայություններ:

Ատամնաբուժական ծառայություններ

Medi-Cal-ը (Medi-Cal Dental ծրագրի միջոցով) ապահովագրում է մի շարք ատամնաբուժական ծառայություններ, ներառյալ՝

- Ախտորոշիչ և կանխարգելիչ ատամնաբուժական հիգիենա (օրինակ՝ քննություններ, ռենտգեն պատկերումներ և ատամների մաքրում)
- Արտակարգ իրավիճակի ծառայություններ ցավի կառավարման համար
- Ատամների հեռացում
- Լցոններ
- Ատամնարմատի խողովակի բուժումներ (առաջամասի/հետին)
- Ատամնապսակներ (նախօրոք պատրաստված/լաբորատորային)



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

- Ատամնաքարի և լնդատակի մաքրում
- Ամբողջական և մասնակի ատամնաշարեր
- Տեղային ֆտոր
- Որակավորվող երեխաների համար ձևախախտված ատամների ուղղում

Եթե հարցեր ունեք, կամ ցանկանում եք ավելին իմանալ ատամնաբուժական ծառայությունների վերաբերյալ, զանգահարեք Medi-Cal Dental ծրագիր **1-800-322-6384** (TTY **1-800-735-2922** կամ **711**) համարով: Կարող եք նաև այցելել Medi-Cal Dental ծրագրի կայքը՝ <https://www.dental.dhcs.ca.gov> կամ <https://smilecalifornia.org/>:

Դիալիզի Եվ արյան դիալիզի ծառայություններ

L.A. Care-ը ապահովագրում է դիալիզի բուժումները: L.A. Care-ը նաև ապահովագրում է արյան դիալիզի (քրոնիկ դիալիզ) ծառայությունները, եթե Ձեր բժիշկը խնդրանք ներկայացնի և L.A. Care-ը վավերացնի այն:

Ամբուլատոր վիրահատություն

L.A. Care-ը ապահովագրում է ամբուլատոր վիրահատական ընթացակարգերը: Այնպիսիք, ինչպիսիք անհրաժեշտ են ախտորոշիչ նպատակներով, ընտրովի համարվող ընթացակարգերը և հատկորոշված ամբուլատոր բժշկական ընթացակարգերը պետք է ունենան նախավավերացում (նախօրոք լիազորում):

Բժշկի ծառայություններ

L.A. Care-ը ապահովագրում է բժշկի՝ բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները:

Ոտնաբուժական (ոտնաթաթերի) ծառայություններ

L.A. Care-ը ապահովագրում է ոտնաբուժական ծառայությունները որպես բժշկականորեն անհրաժեշտ մարդու ոտքի ախտորոշման և բժշկական, վիրահատական և մեխանիկական, ձեռքի շարժումներով ուղղման և էլեկտրական բուժման համար: Սա ներառում է կոճը և ջիլերը, որոնք մտնում են ոտքի մեջ և ոչ-վիրահատական բուժումը ոտքի մկանների և ջիլերի, որոնք վերահսկում են ոտքի գործառույթները:

Բուժական թերապիաներ

L.A. Care-ը ապահովագրում է տարբեր բուժական թերապիաներ, ներառյալ՝

- Քիմիաբուժումը
- Ճառագայթային բուժումը



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Մայրության և նորածնի խնամք

L.A. Care-ը ապահովագրում է մայրության և նորածնի խնամքի հետևյալ ծառայությունները՝

- Կրծքով սնուցման կրթություն
- Ծննդաբերության և հետծննդաբերական խնամք
- Կրծքի կթիչներ և պաշարներ
- Նախածնական խնամք
- Ծննդաբերական կենտրոնի ծառայություններ
- Վկայագրված բուժքույր-մանկաբարձ (Certified Nurse Midwife, CNM)
- Արտոնագրված մանկաբարձ (Licensed Midwife, LM)
- Պտղի գենետիկական խանգարումների ախտորոշում և խորհրդատվություն
- Նորածնի խնամքի ծառայություններ

Հեռաառողջապահական ծառայություններ

Հեռաառողջապահությունը ծառայություններ ստանալու մի միջոց է՝ առանց գտնվելու Ձեր բժշկի գտնված նույն վայրում: Հեռաառողջապահությունը կարող է ներառել Ձեր մատակարարի հետ տեսանյութային զրույց: Կամ հեռաառողջապահությունը կարող է ներառել Ձեր մատակարարի հետ տեղեկության կիսում առանց կենդանի զրույցի: Հեռաառողջապահության միջոցով կարող եք շատ ծառայություններ ստանալ: Սակայն հնարավոր է, որ հեռաառողջապահությունը տրամադրելի չլինի բոլոր ապահովագրված ծառայությունների համար: Կարող եք Ձեր մատակարարի հետ կապ հաստատել իմանալու համար, թե ինչ տեսակի ծառայություններ կարող են տրամադրելի լինել հեռաառողջապահության միջոցով: Կարևոր է, որ ԱՂուք, ԱՁեր մատակարարը համաձայնվեք, որ մի որոշակի ծառայության համար հեռաառողջապահությունը պատշաճ է Ձեզ համար: Իրավունք ունեք անձամբ ծառայությունների և պարտավոր չեք օգտվել հեռաառողջապահությունից, նույնիսկ եթե Ձեր մատակարարը համաձայն է, որ այն հարմար է Ձեզ:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Հոգեկան առողջության ծառայություններ

Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ

L.A. Care-ը ապահովագրում է անդամի հոգեկան առողջության սկզբնական գնահատումը առանց նախավերացում (նախօրոք լիազորում) հարկավոր լինելու: Հոգեկան առողջության գնահատումը կարող էք L.A. Care-ի ցանցում արտոնագրված հոգեկան առողջության մատակարարից ստանալ որևէ ժամանակ առանց ուղեգրի:

Ձեր PCP-ն կամ հոգեկան առողջության մատակարարը կարող է ուղեգիր տալ L.A. Care-ի ցանցում մասնագետի մոտ հոգեկան առողջության հավելյալ զննման համար՝ Ձեր խանգարման մակարդակը որոշելու համար: Եթե Ձեր հոգեկան առողջության զննման արդյունքները վճռեն, որ ունեք մեղմ կամ չափավոր նեղություն կամ ունեք մտային, հուզական կամ վարքագծային գործառույթի խանգարում, L.A. Care-ը կարող է հոգեկան առողջության ծառայություններ մատուցել Ձեզ: L.A. Care-ը ապահովագրում է հոգեկան առողջության ծառայությունները, ինչպես՝

- Անհատական և խմբային հոգեկան առողջության գնահատում և բուժում (հոգեբուժություն)
- Հոգեբանական ստուգում, երբ կլինիկապես ցուցադրված է՝ հոգեկան առողջության վիճակը գնահատելու համար
- Ճանաչողական հմտությունների զարգացում՝ ուշադրության, հիշողության և խնդիրների լուծման բարելավման համար
- Ամբուլատոր ծառայություններ, որոնք նպատակ ունեն դեղաբուժումը հսկել
- Ամբուլատոր լաբորատորային անալիզներ, դեղեր, պաշարներ և լրացուցիչներ
- Հոգեբուժական խորհրդատվություն
- Ընտանեկան թերապիա

L.A. Care-ի կողմից մատուցվող հոգեկան առողջության ծառայությունների մասին ավելի տեղեկություն գտնելու օգնության համար զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Եթե Ձեր հոգեկան առողջության զննման արդյունքները որոշեն, որ ունեք ավելի բարձր մակարդակի խանգարում և կարիք ունեք մասնագիտացված հոգեկան առողջության ծառայությունների (Specialty Mental Health Services, SMHS), Ձեր PCP-ն կամ հոգեկան առողջության մատակարարը Ձեզ կուղղորդի վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրին՝ գնահատում ստանալու համար: Ավելին իմանալու համար կարդացեք «Medi-Cal-ի ուրիշ ծրագրեր և ծառայություններ» բաժինը 73-րդ էջում:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Շտապ օգնության ծառայություններ

Ստացիոնար և ամբուլատոր ծառայություններ, որոնք անհրաժեշտ են բժշկական արտակարգ իրավիճակի բուժման համար

L.A. Care-ը ապահովագրում է բոլոր ծառայությունները, որոնք անհրաժեշտ են ԱՄՆ-ում (ներառյալ այնպիսի տարածքներ, ինչպիսիք են Պուերտո Ռիկոն, ԱՄՆ Վիրջինյան կղզիները և այլն) պատահող բժշկական արտակարգ իրավիճակի կամ Կանադայում կամ Մեքսիկայում հիվանդանոցում Ձեր գտնվելը պահանջող բուժման համար: Բժշկական արտակարգ իրավիճակը սաստիկ ցավով և լուրջ վնասվածքով հատկանշվող առողջական վիճակ է: Վիճակը այնքան լուրջ է, որ եթե դրան անմիջապես բժշկական միջամտություն չցուցաբերվի, մի խելամիտ պարզ անձ կարող է ենթադրել, որ այն կհանգեցնի՝

- Ձեր առողջությանը սպառնացող լուրջ վտանգի. **կամ**
- Մարմնի գործառույթների լուրջ վնասի. **կամ**
- Մարմնի որևէ օրգանի կամ մասի գործունեության լուրջ խանգարման. **կամ**
- Հղի կնոջ դեպքում ակտիվ ծննդաբերության, որը նշանակում է ծննդաբերություն այն ժամանակ, երբ տեղի կունենա ստորև նշվածներից որևէ մեկը՝
 - Մինչև ծննդաբերությունը բավարար ժամանակ չկա, որպեսզի Ձեզ անվտանգ տեղափոխեն մեկ այլ հիվանդանոց:
 - Փոխադրությունը կարող է Ձեր կամ Ձեր չծնված երեխայի առողջության կամ անվտանգության համար սպառնալիք ներկայացնել:

Եթե հիվանդանոց Շտապ օգնության կայանը Ձեր բուժման ծիրում Ձեզ տալիս է ամբուլատոր դեղատոմսային դեղի մինչև 72-ժամյա պաշար, դեղատոմսային դեղը կապահովագրվի Ձեր ապահովագրված Արտակարգ իրավիճակի ծառայությունների ծիրում: Եթե հիվանդանոցի Շտապ օգնության կայանը Ձեզ տալիս է մի դեղատոմս, որը պետք է տանեք ամբուլատոր դեղատուն այն լցնելու համար, Medi-Cal Rx-ը պատասխանատու կլինի այդ դեղատոմսի ապահովագրման համար:

Եթե մի դեղագործ ամբուլատոր դեղատանը տալիս է դեղի արտակարգ իրավիճակի պաշար, այդ արտակարգ իրավիճակի պաշարը կապահովագրվի Medi-Cal Rx-ի և ոչ թե L.A. Care-ի կողմից: Դեղատան զանգահարել սովեք Medi-Cal Rx 800-977-2273 համարով, եթե նրանց օգնություն է պետք Ձեզ արտակարգ իրավիճակի դեղային պաշար տալու համար:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
 հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Արտակարգ իրավիճակի փոխադրական ծառայություններ

L.A. Care-ը ապահովագրում է հիվանդակառքի ծառայությունները, որպեսզի օգնի, որ արտակարգ իրավիճակի դեպքերում հասնեք մոտակա խնամքի վայրը: Սա նշանակում է, որ Ձեր վիճակը այնքան լուրջ է, որ խնամքի վայր հասնելու այլ միջոցները կարող են վտանգի ենթարկել Ձեր առողջությունը կամ կյանքը: Ոչ մի ծառայություն չի ապահովագրվում ԱՄՆ-ից դուրս, բացի արտակարգ իրավիճակի ծառայություններից, որոնք պահանջում են հիվանդանոցում Ձեր գտնվելը Կանադայում կամ Մեքսիկայում: Եթե արտակարգ իրավիճակի հիվանդակառքի ծառայություններ ստանաք Կանադայում և Մեքսիկայում և հիվանդանոցային բուժման չենթարկվեք խնամքի այդ միջադեպի ընթացքում, Ձեր հիվանդակառքի ծառայությունները չեն ապահովագրվի L.A. Care-ի կողմից:

Մահացու հիվանդի և ցավամոքիչ խնամք

L.A. Care-ը ապահովագրում է երեխաների և չափահասների համար մահացու հիվանդի խնամքը, ինչպես նաև ցավամոքիչ խնամքը, որը օգնում է ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգևոր անհանգստությունների նվազեցման: 21 տարեկան կամ ավելի տարեց չափահասները չեն կարող ստանալ և մահացու հիվանդի խնամքի, և ցավամոքիչ խնամքի ծառայություններ միևնույն ժամանակ:

Անբուժելի հիվանդների խնամք

Մահացու հիվանդի խնամքը նպաստ է, որը ծառայում է անբուժելիորեն հիվանդ անդամների: Մահացու հիվանդի խնամքը անդամից պահանջում է ունենալ 6 ամիս կամ նվազ ապրելու ակնկալություն Դա մի միջամտություն է, որը հիմնականում կենտրոնանում է դարմանի կամ երկարակեցության փոխարեն ցավի և ախտանշանի կառավարման վրա:

Մահացու հիվանդի խնամքն ընդգրկում է՝

- Բուժքույրական ծառայություններ
- Ֆիզիկական, աշխատանքային կամ խոսքի ծառայություններ
- Բժշկական սոցիալական ծառայություններ
- Տնային առողջապահության օգնականի և տնային տնտեսի ծառայություններ
- Բժշկական պաշարներ և սարքեր
- Մի շարք դեղեր և կենսաբանական ծառայություններ (մի քանիսը թերևս տրամադրելի լինեն FFS Medi-Cal Rx-ի միջոցով)
- Խորհրդատվական ծառայություններ
- 24-ժամյա դրությամբ անընդմեջ բուժքույրական ծառայություններ ճգնաժամային պահերի ընթացքում և ինչպես անհրաժեշտ են անբուժելի հիվանդին տանը պահելու համար
- Ստացիոնար հանգստի խնամք մինչև հինգ շարունակական օր յուրաքանչյուր անգամ՝ հիվանդանոցում, հմուտ բուժքույրական հաստատություններ կամ մահացու հիվանդի հաստատությունում



Ջանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

- Կարճատև ստացիոնար խնամք ցավի կառավարման կամ ախտանշանի ղեկավարման համար՝ հիվանդանոցում, հմուտ բուժքույրական հաստատությունում կամ մահացու հիվանդի հաստատությունում

Ցավամոքիչ խնամք

Ցավամոքիչ խնամքը հիվանդի և ընտանիքի վրա կենտրոնացված խնամք է, որ բարելավում է կյանքի որակը՝ նախատեսելով, կանխարգելելով և դարմանելով տառապանքը: Ցավամոքիչ խնամքը անդամից չի պահանջում ունենալ վեց ամիս կամ նվազ ապրելու ակնկալություն: Ցավամոքիչ խնամքը հնարավոր է մատուցել բուժիչ խնամքի հետ միաժամանակ:

Ցավամոքիչ խնամքն ընդգրկում է՝

- Խնամքի նախօրոք ծրագրում
- Ցավամոքիչ խնամքի գնահատում և խորհրդատվություն
- Խնամքի ծրագիրը ներառում է, առանց սահմանափակման, հետևյալը՝
 - Բժշկության կամ ոսկրախտի բժիշկ
 - Բժշկի օգնական
 - Գրանցված բուժքույր
 - Արտոնագրված զբաղմունքային բուժքույր կամ առաջնային խնամք տրամադրող բուժքույր
 - Հասարակական աշխատող
 - Հոգևորական
- Խնամքի համակարգում
- Ցավի և ախտանիշի կառավարում
- Հոգեկան առողջության և բժշկական սոցիալական ծառայություններ

21 տարեկան կամ ավելի տարեց չափահասները չեն կարող ստանալ և ցավամոքիչ խնամք, և անբուժելի հիվանդի խնամք միաժամանակ: Եթե ստանում եք ցավամոքիչ խնամք և բավարարում եք անբուժելի հիվանդի խնամքի իրավասությունը, կարող եք խնդրել, որ որևէ ժամանակ անցնեք անբուժելի հիվանդի խնամքի:

Հիվանդանոցային բուժում

Զգայազրկող մասնագետի ծառայություններ

L.A. Care-ը ապահովագրում է բժշկականորեն անհրաժեշտ զգայազրկող մասնագետի ծառայությունները հիվանդանոցային կեցության ընթացքում: Զգայազրկող մասնագետը մատակարար է, ով մասնագիտացել է հիվանդներին զգայազրկիչ տալու մարզում: Զգայազրկումը բժշկության մի տեսակ է, որն օգտագործվում է մի շարք բժշկական ընթացակարգերի ընթացքում:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ

L.A. Care-ը ապահովագրում է բժշկականորեն անհրաժեշտ ստացիոնար հիվանդանոցային խնամքը, երբ Ձեզ հիվանդանոց են ընդունում:

Վիրաբուժական ծառայություններ

L.A. Care-ը ապահովագրում է հիվանդանոցում իրականացված բժշկականորեն անհրաժեշտ վիրահատությունները:

Հետծննդաբերական խնամքի ժամանակավոր երկարացման ծրագիրը

Հետծննդաբերության խնամքի ժամանակավոր երկարացման (Provisional Postpartum Care Extension, PPCE) ծրագիրը երկարացված ապահովագրություն է մատուցում Medi-Cal-ի անդամներին, ովքեր ունեն մայրական հոգեկան առողջության վիճակ հղիության ընթացքում կամ հղիության հաջորդող ժամանակամիջոցում:

L.A. Care-ը ապահովագրում է մայրական հոգեկան առողջության խնամքը կանանց համար հղիության ընթացքում և հղիության ավարտից մինչև երկու ամիս անց: PPCE ծրագիրը L.A. Care-ի կողմից ապահովագրությունը երկարացնում է մինչև 12 ամիս ախտորոշումից կամ հղիության ավարտից հետո, որը որ ավելի ուշ պատահի:

PPCE ծրագրին որակավորվելու համար, Ձեր բժիշկը պետք է հաստատի մայրական հոգեկան առողջության վիճակի Ձեր ախտորոշումը՝ հղիության ավարտից 150 օրվա ընթացքում: Ձեր բժշկին հարցրեք այս ծառայությունների մասին, եթե կարծում եք, որ դրանց կարիքն ունեք: Եթե Ձեր բժիշկը գտնում է, որ ծառայությունները պետք է ստանաք PPCE-ից, Ձեր բժիշկը Ձեզ համար լրացնում և ներկայացնում է ձևաթղթերը:

Վերականգնողական (թերապիայի) ծառայություններ և սարքեր

Նպաստները ներառում են ծառայություններ և սարքեր, որպեսզի վնասվածքներով, հաշմանդամությամբ կամ քրոնիկ վիճակներով անձանց օգնեն ձեռք բերել մտային և ֆիզիկական ունակություններ կամ վերատիրանալ դրանց:

Ծրագիրն ապահովագրում է՝

Ասեղնաբուժություն

L.A. Care-ը ապահովագրում է ասեղնաբուժական ծառայությունները՝ կանխարգելելու, բարեփոխելու կամ մեղմացնելու սաստիկ, համառ քրոնիկ ցավի զգացողությունը, որն առաջանում է ընդհանրապես ճանաչված բժշկական վիճակից: Ամբուլատոր ասեղնաբուժական ծառայությունները (ասեղների էլեկտրական կամ ոչ-էլեկտրական գրգռումով) սահմանափակվում են երկու ծառայությամբ որևէ ամսում, երբ մատուցվում են բժշկի, ատամնաբույժի, ոտնաբույժի կամ ասեղնաբույժի կողմից: L.A. Care-ը կարող է նախավավերացնել (նախօրոք լիազորել) հավելյալ ծառայություններ որպես բժշկականորեն անհրաժեշտ:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Լսաբանություն (լսողություն)

L.A. Care-ը ապահովագրում է լսաբանական ծառայությունները: Ամբուլատոր լսաբանությունը սահմանափակվում է ամսական երկու ծառայությամբ (սահմանափակումը չի տարածվում 21 տարեկանից փոքր երեխաների վրա) L.A. Care-ը կարող է նախավավերացնել (նախօրոք լիազորել) հավելյալ ծառայություններ որպես բժշկականորեն անհրաժեշտ:

Վարքագծային առողջության բուժումներ

L.A. Care-ը ապահովագրում է վարքագծային առողջության բուժումը (Behavioral Health Treatment, BHT) 21 տարեկանից փոքր անդամների համար Վաղ և պարբերաբար զննում, ախտորոշում և բուժում (EPSDT) նպաստի միջոցով: BHT-ն ներառում է ծառայությունների և բուժումների ծրագրեր, ինչպես՝ կիրառական վարքագծի վերլուծումը և ապացույցի հիմքով վարքագծին միջամտելու ծրագրերը, որոնք զարգացնում կամ վերականգնում են, հնարավոր առավելագույն տարողությամբ, 21 տարեկանից փոքր անհատի գործունեությունը:

BHT ծառայությունները սովորեցնում են ունակություններ վարքագծային դիտարկումների և համալրումների միջոցով, կամ նպատակային վարքագծի յուրաքանչյուր քայլ դրդելով սովորեցնելու միջոցով: BHT ծառայությունները հիմնվում են վստահելի ապացույցի վրա և չունեն փորձնական բնույթ: BHT ծառայությունների օրինակներից են վարքագծային միջամտությունները, ճանաչողական վարքագծային միջամտական փաթեթները, համապարփակ վարքագծային բուժումը և կիրառական վարքագծային վերլուծումը:

BHT ծառայությունները պետք է լինեն բժշկականորեն անհրաժեշտ, նշանակված՝ արտոնագրված բժշկի կամ հոգեբանի կողմից, վավերացված՝ ծրագրի կողմից, և մատուցված այնպիսի եղանակով, որը հետևում է վավերացված ծրագրին:

Սրտի վերականգնում

L.A. Care-ը ապահովագրում է սրտի վերականգնման ստացիոնար և ամբուլատոր ծառայությունները:

Տևական օգտագործման բժշկական սարքեր (DME)

L.A. Care-ը ապահովագրում է գնումը կամ վարձումը DME պաշարների, սարքերի և ուրիշ ծառայությունների՝ բժշկի, բժշկի օգնականների, առաջնային խնամք տրամադրող բուժքույրերի և կլինիկական բուժքույր մասնագետների դեղատոմսով: Դեղատոմսով նշանակված DME-ի իրերը կարող են ապահովագրվել որպես բժշկականորեն անհրաժեշտ՝ պահպանելու մարմնի գործառույթները, որոնք կենսական են առօրյա գործունեությունների համար կամ ֆիզիկական գլխավոր հաշմանդամության կանխարգելման նպատակով:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Ընդհանրապես, L.A. Care-ը չի ապահովագրում հետևյալները՝

- Հանգստի, հարմարավետության կամ պերճանքի սարքավորումներ, առանձնահատկություններ և պաշարներ, բացառությամբ մանրածախ կրծքի կթիչների, որոնք նկարագրված են այս գլխի «Մայրության և նորածնի խնամք» խորագրի «Կրծքի կթիչներ և պաշարներ» բաժնում
- Առօրյա կյանքի բնականոն գործունեության պահպանման համար չնախատեսված առարկաներ, ինչպես՝ մարզասարքերը (ներառյալ սարքերը, որոնք նախատեսված են հանգստի կամ մարզական գործունեության համար հավելյալ աջակցություն տրամադրելու համար)
- Հիգիենայի սարքավորումներ, բացառությամբ բժշկականորեն անհրաժեշտ լինելու դեպքից 21 տարեկանից փոքր Անդամի համար
- Ոչ բժշկական առարկաներ, ինչպես՝ սաունայի լոգարանները կամ վերելակները
- Ձեր տան կամ մեքենայի բարեփոխումներ
- Արյան կամ մարմնի այլ նյութերի ստուգման սարքեր (սակայն շաքարախտի արյան գլյուկոզայի ցուցասարքերը, ստուգման երիզները և նշտարները ապահովագրված են Medi-Cal Rx-ով)
- Սրտի կամ թոքերի էլեկտրոնային ցուցասարքեր, բացառությամբ մանկական շնչականգի ցուցասարքերի
- Սարքավորումների վերանորոգում կամ փոխարինում կորստի, գողության կամ չարաշահման հետևանքով, բացառությամբ բժշկականորեն անհրաժեշտ լինելու դեպքերի 21 տարեկանից փոքր անդամի համար
- Ուրիշ առարկաներ, որոնք սովորաբար չեն օգտագործվում առողջական խնամքի համար

Այնուամենայնիվ, որոշ դեպքերում այս առարկաները կարող են վավերացվել Ձեր բժշկի կողմից ներկայացված նախօրոք լիազորումով (նախավավերացում):

Աղիքային և արտաղիքային սնուցում

Մարմնին սնունդ տալու այս մեթոդներն օգտագործվում են երբ բժշկական մի վիճակ արգելում է սննդի բնականոն ընդունումը: Աղիքային և արտաղիքային սնուցողական արտադրանքներն ապահովագրվում են Medi-Cal Rx-ի միջոցով, բժշկականորեն անհրաժեշտ լինելու դեպքում:

Լսողական սարքեր

L.A. Care-ը ապահովագրում է լսողական սարքերը, եթե ստուգման եք ենթարկվել լսողական կորստի համար, լսողական սարքերը բժշկականորեն անհրաժեշտ են և դեղատոմս եք ստացել Ձեր բժշկից: Ապահովագրությունը սահմանափակվում է Ձեր բժշկական կարիքները բավարարող ամենացածր գնով: L.A. Care-ը կապահովագրի մեկ լսողական օժանդակ սարք, եթե յուրաքանչյուր ականջի համար անհրաժեշտ չէ օժանդակ սարքը զգալիորեն ավելի լավ արդյունքների համար, քան դուք կարող եք ստանալ մեկ օժանդակ սարքով:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Լսողական սարքեր 21 տարեկանից փոքր Անդամների համար

Նահանգային օրենքը պահանջում է, որ լսողական սարքի կարիք ունեցող երեխաներն ուղղորդվեն Կալիֆորնիայի Երեխաների ծառայություններ (California Children's Services, CCS) ծրագիր, որոշելու երեխայի իրավասությունը CCS-ի համար: Երեխան CCS-ին իրավասու լինելու դեպքում, CCS-ը կապահովագրի ծախքը բժշկականորեն անհրաժեշտ լսողական սարքերի: Երեխան CCS-ին իրավասու չլինելու դեպքում, մենք կապահովագրենք բժշկականորեն անհրաժեշտ լսողական սարքերը Medi-Cal-ի ապահովագրության ծիրում:

Լսողական սարքեր 21 տարեկան և ավելի տարեց Անդամների համար

Medi-Cal-ի ներքո, մենք ապահովագրում ենք հետևյալը յուրաքանչյուր ապահովագրված լսողական սարքի համար՝

- Ականջի կաղապարներ, որոնք անհրաժեշտ են հարմարեցման համար
- Մեկ տիպական մարտկոցի փաթեթ
- Այցեր՝ վստահ լինելու, որ սարքը ճիշտ է աշխատում
- Այցեր՝ Ձեր լսողական սարքի մաքրման և հարմարեցման համար
- Ձեր լսողական սարքի վերանորոգումը

Medi-Cal-ի ներքո մենք կապահովագրենք լսողական սարքի փոխարինումը, եթե՝

- Ձեր լսողության կորուստն այնպիսին է, որ Ձեր ներկայիս լսողական սարքը չի կարող ուղղել այն
- Ձեր լսողական սարքը կորել է, գողացվել կամ կոտրվել է և հնարավոր չէ շտկել, և դա Ձեր մեղքը չի եղել: Դուք պետք է մեզ գրություն տաք, որը կպատմի, թե ինչպես է դա պատահել:

21 տարեկան և ավելի տարեց չափահասների համար Medi-Cal-ը չի ներառի՝

- Լսողական սարքի փոխարինող մարտկոցներ

Տանը մատուցվող առողջական ծառայություններ

L.A. Care-ը ապահովագրում է առողջական ծառայությունները, որոնք մատուցվում են Ձեր տանը, երբ նշանակվել են բժշկի կողմից և ճանաչվում են որպես բժշկականորեն անհրաժեշտ:

Տանը մատուցվող առողջական ծառայությունները սահմանափակվում են Medi-Cal-ի ապահովագրած ծառայություններով, ինչպես՝

- Մասնաժամանակյա հմուտ բուժքույրական խնամքը
- Մասնաժամանակյա տնային առողջապահության օգնականը
- Բժշկական սոցիալական ծառայություններ
- Բժշկական պաշարներ



Ջանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Բժշկական պաշարներ և սարքեր

L.A. Care-ը ապահովագրում է բժշկական պաշարները, որոնք նշանակվում են բժշկի, բժշկի օգնականների, առաջնային խնամք տրամադրող բուժքույրերի և կլինիկական բուժքույր մասնագետների կողմից: Մի շարք բժշկական պաշարներ ապահովագրվում են FFS Medi-Cal Rx-ի և ոչ թե L.A. Care-ի միջոցով:

Medi-Cal-ի ապահովագրությունը չի ներառում հետևյալը՝

- Սովորական ընտանեկան առարկաներ, ներառյալ՝ առանց սահմանափակման, հետևյալը՝
 - Կաշուն երիզ (ամեն տեսակի)
 - Շփելու ակոհոլ
 - Գեղարարական նյութեր
 - Բամբակյա գնդիկներ և շվաբեր
 - Տակ փոշի
 - Հյուսվածքային անձեռոցիկներ
 - Համամելի պնդուկենի
- Սովորական ընտանեկան դարմաններ, ներառյալ՝ առանց սահմանափակման, հետևյալը՝
 - Սպիտակ վազելին
 - Չոր մաշկի յուղեր և լոսյոններ
 - Տակի և տալկի համակցված արտադրանքներ
 - Օքսիդացնող նյութեր, ինչպես՝ ջրածնի պերօքսիդը
 - Կարբամիդի պերօքսիդ և նատրիումի պերբորատ
- Առանց դեղատոմսի շամպուններ
- Տեղային պատրաստուկներ, որոնք պարունակում են բենզոլյան և սալիցիլաթթու քսուք, սալիցիլաթթվի կրեմ, քսուք կամ հեղուկ և ցինկի օքսիդի մածուկ
- Այլ առարկաներ, որոնք հիմնականում չեն օգտագործվում առողջական խնամքի համար, և որոնք կանոնավորապես և հիմնականում օգտագործվում են այն անձանց կողմից, ովքեր չունեն դրանց հատուկ բժշկական կարիք:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Աշխատանքային թերապիա

L.A. Care-ը ապահովագրում է աշխատանքային թերապիայի ծառայությունները, ներառյալ՝ աշխատանքային թերապիայի գնահատումը, բուժման ծրագրումը, բուժումը, ուսուցման և խորհրդատվության ծառայությունները: Աշխատանքային թերապիայի ծառայությունները սահմանափակվում են ամսական երկու ծառայությամբ (սահմանափակումը չի տարածվում 21 տարեկանից փոքր երեխաների վրա) L.A. Care-ը կարող է նախավավերացնել (նախօրոք լիազորել) հավելյալ ծառայություններ որպես բժշկականորեն անհրաժեշտ:

Օրթեզ/պրոթեզ

L.A. Care-ը ապահովագրում է օրթեզի և պրոթեզի սարքերը և ծառայությունները, որոնք բժշկականորեն անհրաժեշտ են և նշանակվել են Ձեր բժշկի, ոտնաբույժի, ատամնաբույժի, կամ ոչ-բժիշկ բժշկական մատակարարի կողմից: Սա ներառում է փոխապատվաստված լսողական սարքերը, կրծքի պրոթեզները/ստինքահատման կրծկալները, այրվածքի սեղմիչ հանդերձանքը և մարմնի գործառույթը կամ մարմնի անդամը վերականգնող կամ մարմնի տկարացած կամ ձևազեղված անդամին աջակցող պրոթեզները:

Օստոմիա և միզական պաշարներ

L.A. Care-ը ապահովագրում է օստոմիայի տոպրակները, միզական կաթետերները, ցամաքուրդային տոպրակները, ոռոգման պաշարները և կաշուն նյութերը: Սա չի ներառում հանգստի, հարմարավետության կամ պերճանքի սարքեր, հատուկ գովազդված իրեր և պաշարներ:

Ֆիզիկական թերապիա

L.A. Care-ը ապահովագրում է բժշկականորեն անհրաժեշտ ֆիզիկական թերապիայի ծառայությունները, ներառյալ՝ ֆիզիկական թերապիայի գնահատումը, բուժման ծրագրումը, բուժումը, ուսուցումը, խորհրդատվության ծառայությունները, և տեղային դեղերի կիրառումը:

Թորային վերականգնում

L.A. Care-ը ապահովագրում է թոքային վերականգնումը, որը բժշկականորեն անհրաժեշտ է և նշանակվել է Ձեր բժշկի կողմից:

Հմուտ բուժքույրական հաստատության ծառայություններ

L.A. Care-ը ապահովագրում է հմուտ բուժքույրական հաստատության ծառայությունները որպես բժշկականորեն անհրաժեշտ՝ յուրաքանչյուր ընդունման համար ընդունման ամսաթվից սկսած առավելագույնը 90 օրով: Այս ծառայություններն ընդգրկում են սենյակը և գիշերումը արտոնագրված հաստատությունում՝ օրական 24 ժամ հմուտ բուժքույրական խնամքի հիմքով:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Խոսքի թերապիա

L.A. Care-ը ապահովագրում է բժշկականորեն անհրաժեշտ խոսքի թերապիան: Խոսքի թերապիայի ծառայությունները սահմանափակվում են ամսական երկու ծառայությամբ (սահմանափակումը չի տարածվում 21 տարեկանից փոքր երեխաների վրա) L.A. Care-ը կարող է նախավավերացնել (նախօրոք լիազորել) հավելյալ ծառայություններ որպես բժշկականորեն անհրաժեշտ:

Սեռափոխության ծառայություններ

L.A. Care-ը ապահովագրում է սեռափոխության ծառայությունները (սեռի հաստատման ծառայություններ) որպես նպաստ, երբ բժշկականորեն անհրաժեշտ են կամ երբ ծառայությունը բավարարում է վերականգնողական վիրահատության չափանիշները:

Կլինիկական փորձարկումներ

L.A. Care-ը ապահովագրում է հիվանդի սովորական խնամքի ծախքերը հիվանդների համար, ովքեր ընդունվել են I, II, III կամ IV Փուլի կլինիկական փորձարկումներում, եթե այն կապ ունի քաղցկեղի կամ կյանքին սպառնացող ուրիշ վիճակների կանխարգելման, հայտնաբերման կամ բուժման հետ և եթե ուսումնասիրությունն իրականացնում է ԱՄՆ Սննդի և դեղորայքի վարչությունը (Food and Drug Administration, FDA), Հիվանդությունների կառավարման և կանխարգելման կենտրոնները (CDC) կամ Medicare-ի և Medicaid-ի ծառայությունների կենտրոնները (Centers for Medicare and Medicaid Services, CMS): Ուսումնասիրությունները վավերացված պետք է լինեն Առողջապահության ազգային հիմնարկների (National Institutes of Health), FDA-ի, Պաշտպանության նախարարության կամ Վետերանների վարչության կողմից: Medi-Cal Rx-ը՝ Medi-Cal FFS ծրագիր, ապահովագրում է ամբուլատոր դեղատոմսային դեղերի մեծ մասը: Կարդացեք այս գլխում ավելի ուշ «Ամբուլատոր դեղատոմսային դեղեր» բաժինը հավելյալ տեղեկության համար:

Լաբորատորային և ռադիոլոգիական ծառայություններ

L.A. Care-ը ապահովագրում է ամբուլատոր և ստացիոնար լաբորատորային և ռենտգեն պատկերումի ծառայությունները, երբ բժշկականորեն անհրաժեշտ են: Պատկերման զանազան զարգացած ընթացակարգեր, ինչպես՝ CT զննումները, MRI և PET զննումները, ապահովագրվում են ըստ բժշկական անհրաժեշտության:

Կանխարգելիչ և քաջառողջական ծառայություններ և քրոնիկ հիվանդության կառավարում

Ծրագիրն ապահովագրում է՝

- Անընկալացման կիրառության խորհրդատու հանձնաժողովի կողմից հանձնարարված պատվաստումներ
- Ընտանիքի ծրագրման ծառայություններ



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

- Մանկաբուժության ամերիկյան ակադեմիայի (American Academy of Pediatrics) Պայծառ ապագաների հանձնարարություններ
- Կանանց համար կանխարգելիչ ծառայություններ՝ հանձնարարված Մանկաբարձների և գինեկոլոգների ամերիկյան քոլեջի (American College of Obstetricians and Gynecologists) կողմից
- Ծխելուց հրաժարվելու օգնություն, ինչը նաև կոչվում է ծխելը դադարեցնելու ծառայություններ
- Միացյալ Նահանգների կանխարգելիչ ծառայությունների աշխատանքային խմբի (United States Preventive Services Task Force) Ա և Բ կարգի հանձնարարած կանխարգելիչ ծառայությունները

Ընտանիքի ծրագրման ծառայությունները մատուցվում են մանկածնության տարիքի անդամներին, որպեսզի կարողանան որոշել երեխաների քանակը և նրանց ծննդյան ամսաթվերի հեռավորությունը: Այս ծառայությունները ներառում են FDA-ի կողմից վավերացված բոլոր հակաբեղմնավորիչ միջոցները: L.A. Care-ի PCP-ն և Մանկաբարձության/Գինեկոլոգիայի մասնագետները տրամադրելի են ընտանիքի ծրագրման ծառայությունների համար:

Ընտանիքի ծրագրման ծառայությունների համար առանց L.A. Care-ից նախավավերացում (նախօրոք լիազորում) ստանալու կարող եք նաև ընտրել Medi-Cal-ի մի բժշկի կամ կլինիկա, ով կապ չունի L.A. Care-ի հետ: Ընտանիքի ծրագրման հետ կապված արտացանցային մատակարարի ծառայությունները չեն կարող ապահովագրվել: Ավելին իմանալու համար զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Կարդացեք 5-րդ Գլուխը՝ Կանխարգելիչ խնամքի համար Երեխայի և պատանիների լավ խնամքի մասին տեղեկություն 20 տարեկան և ավելի փոքր պատանիների համար:

Շաքարախտի կանխարգելման ծրագիր

Շաքարախտի կանխարգելման ծրագիրը (Diabetes Prevention Program, DPP) ապացույցի վրա հիմնված ապրելակերպի փոփոխության ծրագիր է: Այն մշակվել է կանխարգելելու կամ ուշացնելու սկզբնավորումը 2 տեսակի շաքարախտի՝ նախաշաքարախտով ախտորոշված անհատների շրջանակում: Ծրագրի տևողությունն է մեկ տարի: Այն կարող է որակավորվող անդամների համար երկարաձգվել մինչև երկու տարի: Ծրագրով հաստատված ապրելակերպի աջակցություններն ու հնարքները ներառում են, առանց դրանցով սահմանափակվելու՝

- Տրամադրումը հավասարակից մարզիչի
- Ուսուցումը ինքնահսկողության և խնդիրների լուծման
- Մատուցումը քաջալերանքի և հետադարձ նկատողությունների
- Մատուցումը տեղեկատվական նյութերի՝ նպատակակետերին աջակցելու համար
- Հետևումը սովորական միջամտությունների՝ նպատակակետերի իրականացման համար



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

DPP-ին միանալու համար անդամները պարտավոր են բավարարել ծրագրի իրավասության պահանջունքները: Զանգահարեք L.A. Care **1-888-839-9909** (TTY **711**) համարով՝ ավելին իմանալու համար ծրագրի և իրավասության մասին:

Վերականգնողական ծառայություններ

L.A. Care-ը ապահովագրում է վիրահատությունը՝ ուղղելու կամ վերանորոգելու մարմնի անբնականոն կառուցվածքներ, որպեսզի բարելավվի կամ ստեղծի հնարավորինս բնականոն տեսք: Մարմնի անբնականոն կառուցվածքները նրանք են, որոնք առաջանում են բնածին թերություններից, զարգացական անբնականոնություններից, տրավմայից, վարակից, նորագոյացություններից, հիվանդությունից կամ կրծքագեղձի հեռացումից հետո կրծքի վերակառուցումից: Թերևս կիրառելի լինեն մի շարք սահմանափակումներ և բացառություններ:

Թմրանյութի օգտագործման խանգարման զննման ծառայություններ

Ծրագիրն ապահովագրում է՝

- Ալկոհոլի սխալ օգտագործման զննումներ և արգելված թմրանյութի զննումներ

Տեսեք այս գլխում ավելի ուշ «Թմրանյութի օգտագործման խանգարման բուժման ծառայություններ» բաժինը՝ վարչաշրջանի միջոցով բուժման ապահովագրության համար:

Տեսողության նպաստներ

Ծրագիրն ապահովագրում է՝

- Աչքի սովորական քննություն 24 ամիսը մեկ անգամ. աչքի հավելյալ կամ ավելի հաճախակի քննությունները ապահովագրվում են, եթե բժշկականորեն անհրաժեշտ են անդամների համար, ինչպես՝ շաքարախտով հիվանդները:
- Ակնոցներ (շրջանակներ և ոսպնյակներ) 24 ամիսը մեկ անգամ. երբ ունեք վավեր դեղատոմս:
- Փոխարինող ակնոցները 24 ամսվա ընթացքում, եթե դեղատոմսի փոփոխություն ունեք կամ Ձեր ակնոցները կորել, գողացվել կամ կոտրվել են (և չեն կարող շտկվել), և դա Ձեր մեղքը չէ: Դուք պետք է մեզ գրություն տաք, որը կպատմի, թե ինչպես են Ձեր ակնոցները կորել, գողացվել կամ կոտրվել:
- Տեսողության խանգարում ունեցողների համար նախատեսված սարքեր, որոնք չեն շտկվում տիպական ակնոցների, հպովի ոսպնյակների, դեղերի կամ վիրահատության միջոցով, որոնք միջամտում են մարդու ամենօրյա գործունեություն կատարելու կարողության (օրինակ՝ տարիքի հետ կապված բժային հետաճ):



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

- Բժշկականորեն անհրաժեշտ հպովի ոսպնյակներ
Հպովի ոսպնյակների ստուգումը և հպովի ոսպնյակները կարող են ապահովագրված լինել, եթե ակնոցների օգտագործումը հնարավոր չէ աչքի հիվանդության կամ վիճակի պատճառով (օրինակ՝ ականջի բացակայություն): Բժշկական վիճակները, որոնք որակավորվում են հատուկ հպովի ոսպնյակների համար, ներառում են, բայց չեն սահմանափակվում դրանցով, անիրիդիան, աֆակիան և կերատոկոնուսը:

Փոխադրության նպաստներ արտակարգ իրավիճակ չներկայացնող կացությունների համար

Դուք իրավունք ունեք բժշկական փոխադրության՝ եթե ունեք բժշկական կարիքներ, որոնք Ձեզ թույլ չեն տալիս Ձեր ժամադրությունների համար օգտվել մեքենայից, ավտոբուսից, տաքսիից: Բժշկական փոխադրությունը կարող է մատուցվել ապահովագրված ծառայությունների համար, ինչպես՝ բժշկական, ատամնաբուժական, հոգեկան առողջության, թմրանյութի օգտագործման և դեղատան ժամադրություններ: Եթե կարիք ունեք բժշկական փոխադրության, այն կարող եք խնդրել խոսելով Ձեր բժշկի հետ: Ձեր բժիշկը կորոշի փոխադրության ճիշտ տեսակը՝ Ձեր կարիքները բավարարելու համար: Եթե նա գտնի, որ կարիք ունեք բժշկական փոխադրության, այն կնշանակի լրացնելով և L.A. Care-ին ներկայացնելով մի ձևաթուղթ: Վավերացվելուց հետո, վավերացումը ուժի մեջ է մնում մեկ տարով, նայած բժշկական կարիքի: Բացի այդ, Ձեր ստացած ուղևորությունների քանակի համար սահմանափակում չկա: Ձեր բժիշկը պետք է վերագնահատի բժշկական փոխադրության համար Ձեր բժշկական կարիքը և վերավավերացնի յուրաքանչյուր 12 ամիսը մեկ:

Բժշկական փոխադրությունը հիվանդակառք, զուգարանով օժտված միկրոավտոբուս, անվաթռոճի համար նախատեսված միկրոավտոբուս կամ օդային փոխադրություն է: L.A. Care-ը թույլատրում է ամենից էժան Բժշկական փոխադրությունը Ձեր բժշկական կարիքների համար, երբ Ձեզ փոխադրություն է հարկավոր Ձեր ժամադրության համար: Սա նշանակում է, օրինակ, որ եթե ֆիզիկապես կամ բժշկականորեն կարող եք անվաթռոճի համար նախատեսված միկրոավտոբուսով փոխադրվել, L.A. Care-ը չի վճարի հիվանդակառքի համար: Դուք օդային փոխադրման իրավունք ունեք միայն այն դեպքում, եթե Ձեր բժշկական վիճակը անհնար է դարձնում որևէ տեսակի ցամաքային փոխադրություն

Բժշկական փոխադրությունը պետք է օգտագործել երբ՝

- Այն անհրաժեշտ է ֆիզիկապես կամ բժշկականորեն, ինչպես դա որոշվում է բժշկի կամ ուրիշ մատակարարի գրավոր լիազորումով, քանի որ Դուք ֆիզիկապես կամ բժշկականորեն չեք կարող օգտվել ավտոբուսից, տաքսիից, մարդատար մեքենայից կամ միկրոավտոբուսից՝ Ձեր ժամադրության գնալու համար:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

- Ձեզ անհրաժեշտ է օգնությունը վարորդի՝ դեպի Ձեր տուն, մեքենա կամ բուժման վայր գնալու և վերադառնալու համար ֆիզիկական կամ հոգեկան հաշմանդամության պատճառով.

Ձեր բժշկի նշանակած բժշկական փոխադրությունը խնդրելու համար ոչ հրատապ (սովորական) ժամադրությունների համար, խնդրում ենք զանգահարել L.A. Care **1-888-839-9909** (TTY **711**) համարով Ձեր ժամադրությունից առնվազն 2 աշխատանքային օր (երկուշաբթիից-ուրբաթ) առաջ: Հրատապ ժամադրությունների համար խնդրում ենք զանգահարել հնարավորինս շուտ: Խնդրվում է Ձեր անդամի ճանաչողական քարտը պատրաստի ունենալ զանգահարելիս:

Բժշկական փոխադրության սահմանները՝ L.A. Care-ը մատուցում է ամենից էժան բժշկական փոխադրությունը Ձեր տան ամենամոտ մատակարարին, որը համապատասխանում է Ձեր բժշկական կարիքներին, երբ ժամադրությունը տրամադրելի է: Բժշկական փոխադրություն չի մատուցվի, եթե ծառայությունն ապահովագրված չէ Medi-Cal-ի կողմից: Եթե ժամադրության տեսակը ապահովագրվում է Medi-Cal-ի կողմից, բայց ոչ առողջապահական ծրագրի միջոցով, L.A. Care-ը կօգնի, որ դասավորեք Ձեր փոխադրությունը: Այս Անդամի տեղեկագրքում կա ցանկը ապահովագրված ծառայությունների: Փոխադրությունը չի ապահովագրվում սպասարկման տարածքի ցանցից դուրս՝ եթե նախօրոք չի լիազորվել L.A. Care-ի կողմից: Հավելյալ տեղեկության կամ բժշկական փոխադրություն խնդրելու համար խնդրում ենք զանգահարել L.A. Care **1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Արժեքը անդամների համար՝ Ոչ մի ծախս չկա, եթե փոխադրությունը կարգադրվել է L.A. Care-ի կողմից:

Ինչպես ստանալ ոչ-բժշկական փոխադրություն

Ձեր նպաստները ներառում են դեպի Ձեր ժամադրություններ ուղևորվելը՝ երբ ժամադրությունը Medi-Cal-ի ապահովագրած ծառայության համար է: Կարող եք անվճար ուղևորվել, երբ Դուք՝

- Medi-Cal-ի ծառայության համար Ձեր մատակարարի լիազորումով նշանակված ժամադրության եք գնում և այնտեղից վերադառնում. կամ
- Վերցնում եք դեղատոմսային դեղեր և բժշկական պաշարներ:

L.A. Care-ը Ձեզ թույլ է տալիս օգտվել մարդատար մեքենայից, տաքսիից, ավտոբուսից կամ ուրիշ հանրային/մասնավոր միջոցներից՝ Ձեր բժշկական ժամադրություններին գնալու նպատակով Medi-Cal-ի կողմից ապահովագրված ծառայությունների համար: L.A. Care-ը կապահովագրի ամենից էժան ոչ-բժշկական փոխադրության տեսակը, որը համապատասխանում է Ձեր կարիքներին: Երբեմն, L.A. Care-ը կարող է հատուցել Ձեր կարգադրած մասնավոր փոխադրամիջոցով ուղևորման համար: Սա պետք է L.A. Care-ի կողմից վավերացվի նախքան Ձեր ուղևորվելը, և պարտավոր եք մեզ հայտնել, թե ինչու չեք կարող ուղևորվել ուրիշ միջոցներով, ինչպես՝ ավտոբուսով: Մեզ կարող եք հայտնել զանգահարելով: Չեք կարող ինքներդ վարելով գնալ և հատուցվել:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Մղնային փոխհատուցումը պահանջում է բոլոր հետևյալները՝

- Վարորդի վարորդական իրավունքը
- Վարորդի փոխադրամիջոցի գրանցումը
- Վարորդի համար մեքենայի ապահովագրության ապացույցը

Ուղևորում խնդրելու համար լիազորված ծառայությունների վերաբերյալ, զանգահարեք L.A. Care **1-888-839-9909** (TTY **711**) համարով Ձեր ժամադրությունից առնվազն 2 աշխատանքային օր առաջ (երկուշաբթիից ուրբաթ), կամ զանգահարեք հնարավորինս շուտ, երբ հրատապ ժամադրություն ունեք: Խնդրվում է Ձեր անդամի ճանաչողական քարտը պատրաստի ունենալ զանգահարելիս:

Նշում՝ Ամերիկյան հնդկացիները կարող են կապ հաստատել իրենց տեղի Հնդկացիների առողջապահության կլինիկայի հետ՝ ոչ-բժշկական փոխադրություն խնդրելու համար:

Ոչ-բժշկական փոխադրության սահմանները՝ L.A. Care-ը մատուցում է ամենից էժան ոչ-բժշկական փոխադրությունը Ձեր տան ամենամոտ մատակարարին, որը համապատասխանում է Ձեր կարիքներին, երբ ժամադրությունը տրամադրելի է: Անդամները չեն կարող ինքները վարելով գնալ կամ ուղղակի հատուցվել: Հավելյալ տեղեկության համար խնդրում ենք զանգահարել L.A. Care **1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Ոչ բժշկական փոխադրությունը կիրառելի չէ, եթե՝

- Հիվանդակառք, զուգարանով միկրոավտոբուս, անվաթոռով միկրոավտոբուս կամ Բժշկական փոխադրության ուրիշ տեսակ բժշկականորեն անհրաժեշտ է Medi-Cal-ի ապահովագրած ծառայության գնալու համար:
- Ձեզ անհրաժեշտ է օգնությունը վարորդի՝ դեպի տուն, մեքենա կամ բուժման վայր գնալու և վերադառնալու համար ֆիզիկական կամ բժշկական վիճակի հետևանքով:
- Երբ անվաթոռում եք գտնվում և չեք կարող մեքենա ներս մտնել-դուրս գալ առանց վարորդի օգնության:
- Ծառայությունն ապահովագրված չէ Medi-Cal-ի կողմից:

Արժեքը անդամների համար՝ Ոչ մի ծախք չկա, եթե ոչ-բժշկական փոխադրությունը կարգադրվել է L.A. Care-ի կողմից:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

L.A. Care-ի կողմից ապահովագրված ուրիշ նպաստներ և ծրագրեր

Կառավարվող երկարաժամկետ ծառայություններ և աջակցություններ (MLTSS)

L.A. Care-ը ապահովագրում է այս MLTSS-ի ծառայություններն անդամների համար, ովքեր որակավորվում են՝

- Երկարաժամկետ խնամքի հաստատության ծառայություններ, ինչպես վավերացվել են L.A. Care-ի կողմից

Եթե հարցեր ունեք MLTSS-ի մասին զանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Խնամքի համակարգում

L.A. Care-ը առաջարկում է Գործի կառավարման ծառայություններ, որոնք օգնում են, որ անվճար համակարգեք Ձեր առողջական խնամքի կարիքները: L.A. Care-ը կհամակարգի ուրիշ ծրագրերի հետ, որպեսզի երաշխավորի Ձեր բժշկականորեն անհրաժեշտ ծառայություններ ստանալը, նույնիսկ եթե այդ ծառայություններն ապահովագրվում են ուրիշ ծրագրի և ոչ թե L.A. Care-ի կողմից:

Եթե Ձեր կամ Ձեր երեխայի առողջության վերաբերյալ ունեք հարցեր կամ մտահոգություններ, զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Համակարգված խնամքի նախաձեռնության (CCI) նպաստներ

Կալիֆորնիայի Համակարգված խնամքի նախաձեռնությունը (Coordinated Care Initiative, CCI) ձգտում է բարելավել խնամքի համակարգումը կրկնակի իրավասուների համար (անձինք, ովքեր որակավորվում են նաև Medi-Cal-ի, նաև Medicare-ի համար): CCI-ը ունի երկու գլխավոր մաս՝

Cal MediConnect

Cal MediConnect ծրագիրը նպատակադրում է բարելավումը խնամքի համակարգման նպաստառուների համար, ովքեր կրկնակի իրավասու են նաև Medicare-ի, նաև Medi-Cal-ի: Այն թույլ է տալիս նրանց, որ անդամագրվեն մեկ ծրագրի՝ իրենց նպաստների կառավարման համար, փոխանակ առանձին Medi-Cal և Medicare ծրագրեր ունենալու: Նրա նպատակակետն է նաև բարձրորակ խնամքը, որը մարդկանց օգնում է հնարավորինս երկար մնալ առողջ և իրենց տանը:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Եթե անդամագրվել եք L.A. Care-ի Cal MediConnect ծրագրին, ծրագիրն ապահովագրում է՝

- Ձեզ համար համագործակցող մատակարարների մի ցանց
- Անձնական խնամքի համակարգող, ով կերաշխավորի Ձեզ անհրաժեշտ խնամքի և աջակցության ստացումը
- Ձեր առողջական կարիքներին և խնամքի ծրագրին հարմարեցված վերանայում

Հիմնարկային երկարաժամկետ խնամք

L.A. Care-ը ապահովագրում է երկարաժամկետ խնամքը Ձեր հաստատություն մուտքի ամսվա և հաջորդ ամսվա համար: L.A. Care-ը չի ապահովագրի երկարաժամկետ խնամքը՝ ավելի երկար մնալու դեպքում:

FFS Medi-Cal-ը ապահովագրում է Ձեր կեցությունը, եթե այն տևում է հաստատություն Ձեր մուտքի հաջորդ ամսից ավելի երկար: Ավելին իմանալու համար, զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Կառավարվող երկարաժամկետ ծառայություններ և աջակցություններ

Medicare-ի և Medi-Cal-ի կրկնակի իրավասու անհատները կամ միայն Medi-Cal-ին անդամագրված Տարեցներ կամ հաշմանդամ անձինք (Seniors or Persons with Disabilities, SPD) պարտավոր են միանալ Medi-Cal-ի կառավարվող խնամքի առողջապահական ծրագրի, որպեսզի ստանան իրենց Medi-Cal-ի նպաստները, ներառյալ՝ MLTSS-ի և Medicare-ի լրացուցիչ նպաստները:

Խնամքի բարելավված կառավարում

L.A. Care-ը ապահովագրում է Խնամքի բարելավված կառավարման (Enhanced Care Management, ECM) ծառայությունները անդամների համար, ովքեր ունեն խիստ բարդ կարիքներ: ECM-ը մի նպաստ է, որը հավելյալ ծառայություններ է մատուցում, որպեսզի ստանաք Ձեզ անհրաժեշտ խնամքն ու մնաք առողջ: Այն համակարգում է տարբեր բժիշկներից Ձեր ստացած խնամքը: ECM-ն օգնում է համակարգել առաջնային խնամքը, սուր խնամքը, վարքագծային առողջությունը, զարգացական կարիքները, բերանի առողջությունը, համայնքային հիմքով երկարաժամկետ ծառայություններ և աջակցությունները (LTSS) և տրամադրելի համայնքային աղբյուրների համար ուղղորդումները:

Եթե որակավորվում եք, հնարավոր է, որ ECM-ի ծառայությունների մասին դիմեն Ձեզ: Դուք էլ կարող եք զանգահարել L.A. Care պարզելու, թե երբ կարող եք ECM ստանալ: Կամ խոսեք Ձեր առողջական խնամքի մատակարարի հետ, ով կարող է պարզել արդյո՞ք որակավորվում եք ECM-ի համար և երբ և ինչպե՞ս կարող եք ստանալ այն:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Ապահովագրված ECM ծառայություններ

Եթե որակավորվեք ECM-ի համար, կունենաք Ձեր սեփական խնամքի խումբը, ներառյալ՝ խնամքի համակարգողը: Այս անձը կխոսի Ձեզ և Ձեր բժիշկների, մասնագետների, դեղագործների, գործի կառավարիչների, սոցիալական ծառայությունների մատակարարների և ուրիշների հետ, որպեսզի բոլորը միասին աշխատեն ապահովելու համար Ձեզ անհրաժեշտ խնամքը: Խնամքի համակարգողը կարող է նաև օգնել, որ Ձեր համայնքում գտնեք և դիմեք ուրիշ ծառայությունների համար: ECM-ը ներառում է՝

- Ուրիշների հետ շփում և ներգրավվածություն
- Համապարփակ գնահատում և խնամքի կառավարում
- Խնամքի բարելավված համակարգում
- Առողջության խթանում
- Համապարփակ անցումային խնամք
- Անդամի և ընտանիքի աջակցության ծառայություններ
- Համակարգում և ուղեգրեր համայնքային և սոցիալական աջակցությունների համար

Պարզելու համար արդյո՞ք ECM-ն կարող է հարմար լինել Ձեզ, խոսեք Ձեր L.A. Care-ի ներկայացուցչի կամ առողջական խնամքի մատակարարի հետ:

Ծախքը անդամի համար

Անդամը ոչինչ չի վճարի ECM ծառայությունների համար:

Համայնքային աջակցություններ

Համայնքային աջակցությունները թերևս տրամադրելի լինեն Ձեր Անհատականացված խնամքի ծրագրի ներքո: Համայնքային աջակցությունները բժշկականորեն հարմար է և կազմում է ծախսարդյունավետ այլընտրական ծառայությունների կամ դրվածքների Medi-Cal նահանգային ծրագրով ապահովագրվածների ներքո: Այս ծառայությունների ստացումը կամընտրական է Անդամների համար: Եթե որակավորվեք, այս ծառայությունները թերևս օգնեն, որ ապրեք ավելի ինքնուրույն: Նրանք չեն փոխարինում Medi-Cal-ի ներքո Ձեր արդեն ստացած նպաստներին: Համայնքային աջակցությունները կարող են ներառյալ օգնություն՝ գտնելու և պահելու մի բնակարան, բժշկականորեն Ձեզ հարմարեցված ճաշեր, կամ ուրիշ օգնություն՝ Ձեզ կամ Ձեզ խնամողի համար: Եթե ունեք օգնության կարիք կամ ցանկանում եք պարզել, թե ի՞նչ Համայնքային աջակցություններ տրամադրելի են Ձեզ, զանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով կամ զանգահարեք Ձեր առողջական խնամքի մատակարարին:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Գլխավոր օրգանի փոխպատվաստում

Փոխպատվաստումներ 21 տարեկանից փոքր երեխաների համար

Նահանգային օրենքը պահանջում է, որ փոխպատվաստման կարիք ունեցող երեխաներն ուղղորդվեն Կալիֆորնիայի Երեխաների ծառայություններ (CCS) ծրագիր, պարզելու երեխայի իրավասությունը CCS-ի համար: Երեխան CCS-ին իրավասու լինելու դեպքում, CCS-ը կապահովագրի ծախսերը փոխպատվաստման և հարակից ծառայությունների: Երեխան CCS-ին իրավասու չլինելու դեպքում, L.A. Care-ը երեխային կուղղորդի մի որակյալ փոխպատվաստման կենտրոն՝ գնահատման համար: Եթե փոխպատվաստման կենտրոնը հաստատի, որ փոխպատվաստումն անհրաժեշտ և անվտանգ կլինի, L.A. Care-ը կապահովագրի փոխպատվաստումն ու հարակից ծառայությունները:

Փոխպատվաստումներ 21 տարեկան և ավելի տարեց չափահասների համար

Եթե Ձեր բժիշկը որոշի, որ Ձեզ կարող է գլխավոր օրգանի փոխպատվաստում անհրաժեշտ լինել, L.A. Care-ը Ձեզ կուղղորդի մի որակյալ փոխպատվաստման կենտրոն՝ գնահատման համար: Եթե փոխպատվաստման կենտրոնը հաստատի, որ փոխպատվաստումն անհրաժեշտ և անվտանգ կլինի Ձեր բժշկական վիճակի համար, L.A. Care-ը կապահովագրի փոխպատվաստումն ու այլ հարակից ծառայությունները:

L.A. Care-ի կողմից ապահովագրված գլխավոր օրգանների փոխպատվաստումները ներառում են, բայց առանց դրանցով սահմանափակվելու, հետևյալները՝

- Ոսկրածուծ
- Սիրտ
- Սիրտ/Թոք
- Երիկամ
- Երիկամ/Ենթաստամոքսային գեղձ
- Լյարդ
- Լյարդ/Փոքր աղիք
- Թոք
- Ենթաստամոքսային գեղձ
- Փոքր աղիք

Medi-Cal-ի ուրիշ ծրագրեր և ծառայություններ

Ուրիշ ծառայություններ, որոնք կարող եք ստանալ Վճարովի ծառայությամբ (FFS) Medi-Cal ծրագրերի միջոցով

Երբեմն L.A. Care-ը չի ապահովագրում ծառայությունները, բայց այնուամենայնիվ կարող եք դրանք ստանալ FFS Medi-Cal-ի կամ ուրիշ Medi-Cal ծրագրերի միջոցով: L.A. Care-ը կհամակարգի ուրիշ ծրագրերի հետ, որպեսզի երաշխավորի Ձեր բժշկականորեն անհրաժեշտ ծառայություններ ստանալը, նույնիսկ եթե այդ ծառայություններն ապահովագրվում են ուրիշ ծրագրի և ոչ թե L.A. Care-ի կողմից: Այս բաժինը թվարկում է այս ծառայություններից մի քանիսը: Ավելին իմանալու համար, զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Ամբուլատոր դեղատոմսային դեղեր

Medi-Cal Rx-ի կողմից ապահովագրվող դեղատոմսային դեղեր

Դեղատան կողմից տրվող դեղատոմսային դեղերն ապահովագրվում են Medi-Cal FFS-ի ծրագիր Medi-Cal Rx-ի կողմից: Հնարավոր է, որ մատակարարի կողմից գրասենյակում կամ կլինիկայում տրված մի շարք դեղեր ապահովագրվեն L.A. Care-ի կողմից: Ձեր մատակարարը կարող է Ձեզ համար նշանակել դեղեր, որոնք գտնվում են Medi-Cal Rx-ի Պայմանագրային դեղերի ցանկում:

Երբեմն կարիքն է լինում մի դեղի, որը չի գտնվում Պայմանագրային դեղերի ցանկում: Այս դեղերի համար անհրաժեշտ կլինի վավերացում՝ դեղատանը դրանք լցնելուց առաջ: Medi-Cal Rx-ը այսպիսի խնդրանքները կվերանայի և կորոշի 24 ժամվա ընթացքում:

- Ձեր ամբուլատոր դեղատան մի դեղագործ կամ հիվանդանոցի շտապ օգնության կայանը կարող է Ձեզ 72-ժամյա արտակարգ իրավիճակի պաշար տալ, եթե գտնի, որ այն անհրաժեշտ է Ձեզ: Medi-Cal Rx-ը կվճարի ամբուլատոր դեղատան կողմից տրված արտակարգ իրավիճակի պաշարի համար:
- Medi-Cal Rx-ը կարող է ոչ ասել արտակարգ իրավիճակ չներկայացնող խնդրանքին: Ոչ ասելու դեպքում, նրանք Ձեզ նամակ կուղարկեն պատճառը հայտնելու: Նրանք Ձեզ կասեն, թե ինչ են Ձեր ընտրանքները: Հավելյալ տեղեկության համար տեսեք 6-րդ Գլխի «Գանգատներ» բաժինը՝ Խնդիրների հաղորդում և լուծում:

Պարզելու համար, որ մի դեղ գտնվում է Պայմանագրային դեղերի ցանկում, կամ ստանալու համար Պայմանագրային դեղերի ցանկի օրինակը, զանգահարեք Medi-Cal Rx **800-977-2273** (TTY **800-977-2273** համարով և սեղմեք 5 կամ **711**), այցելեք Medi-Cal Rx-ի կայքը՝ <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/>:

Դեղատներ

Եթե լցնում կամ վերալցնում եք մի դեղատոմս, պարտավոր եք Ձեր դեղատոմսային դեղերն ստանալ Medi-Cal Rx-ի հետ գործող դեղատնից: Medi-Cal Rx-ի հետ գործող դեղատների ցանկը կարող եք գտնել Medi-Cal Rx-ի Դեղատների հասցեագրքում՝ <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/> կայքում: Կարող եք նաև գտնել Ձեզ մոտակա մի դեղատուն կամ մի դեղատուն, որը կարող է Ձեր դեղը փոստով ուղարկել Ձեզ՝ զանգահարելով Medi-Cal Rx **1-800-977-2273** (TTY **1-800-977-2273** համարով և սեղմելով 5 կամ **711**):

Դեղատունն ընտրելուց հետո, Ձեր դեղատոմսը տարեք դեղատուն: Ձեր մատակարարը ևս կարող է դեղատուն ուղարկել այն Ձեզ համար: Դեղատան տվեք Ձեր դեղատոմսը Ձեր Medi-Cal-ի նպաստների ճանաչողական քարտի (BIC) հետ: Ստուգեք, որ դեղատունն անպայման իմանա Ձեր ստացած բոլոր դեղերի և որևէ ավերգիայի մասին: Եթե Ձեր դեղատոմսի մասին ունեք որևէ հարց, անպայման հարցրեք դեղագործին:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Անդամները կարող են նաև փոխադրական ծառայություններ ստանալ L.A. Care-ից՝ դեղատներ գնալու համար: Ավելին իմանալու համար փոխադրական ծառայությունների մասին, այս տեղեկագրքում կարդացեք «Փոխադրության նպաստներ» բաժինը:

Մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններ

Մի շարք հոգեկան առողջության ծառայություններ մատուցվում են վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրերի կողմից՝ L.A. Care-ի փոխարեն: Սրանք ներառում են մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններ (SMHS) Medi-Cal-ի անդամների համար, ովքեր լրացնում են բժշկական անհրաժեշտության կանոնները: SMHS-ը կարող է ընդգրկել հետևյալ ստացիոնար և ամբուլատոր ծառայությունները՝

Ամբուլատոր ծառայություններ՝

- Հոգեկան առողջության ծառայություններ (գնահատումներ, ծրագրի մշակում, թերապիա, վերականգնում, և աջակից մասնագետ)
- Դեղերի աջակցության ծառայություններ
- Ցերեկային բուժման լարված ծառայություններ
- Ցերեկային վերականգնողական ծառայություններ
- Ճգնաժամի միջամտության ծառայություններ
- Ճգնաժամի կայունացման ծառայություններ
- Նպատակային գործի կառավարման ծառայություններ
- Թերապևտական վարքագծային ծառայություններ (ապահովագրված 21 տարեկանից փոքր անդամների համար)
- Լարված խնամքի համակարգում (Intensive Care Coordination, ICC) (ապահովագրված 21 տարեկանից փոքր անդամների համար)
- Լարված տնային հիմքով ծառայություններ (Intensive Home-Based Services, IHBS) (ապահովագրված 21 տարեկանից փոքր անդամների համար)
- Թերապևտական խնամատարություն (Therapeutic Foster Care, TFC) (ապահովագրված 21 տարեկանից փոքր անդամների համար)

Բնակության վայրում ծառայություններ՝

- Բնակության վայրում չափահասների բուժման ծառայություններ
- Բնակության վայրում ճգնաժամային բուժման ծառայություններ

Ստացիոնար ծառայություններ՝

- Սուր հոգեբուժական ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ
- Հոգեբուժական ստացիոնար հիվանդանոցային մասնագիտական ծառայություններ
- Հոգեբուժական առողջապահական հաստատության ծառայություններ



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Վարչաշրջանի կողմից մատուցվող մասնագիտացված հոգեկան առողջության ծառայությունների վերաբերյալ ավելին իմանալու նպատակով օգնության համար կարող եք զանգահարել Ձեր վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագիր: Բոլոր վարչաշրջանների անվճար հեռախոսահամարները առցանց գտնելու համար այցելեք հետևյալ կայքը՝ dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContactList.aspx:

Թմրանյութի օգտագործման խանգարման բուժման ծառայություններ

Վարչաշրջանը թմրանյութի օգտագործման խանգարման ծառայություններ է մատուցում Medi-Cal-ի անդամների, ովքեր բավարարում են բժշկական անհրաժեշտության կանոնները: Անդամները, ովքեր որոշվում են թմրանյութի օգտագործման խանգարման բուժման ծառայությունների համար, ուղղորդվում են իրենց վարչաշրջանի բաժին՝ բուժման համար: Վարչաշրջանների հեռախոսահամարները առցանց գտնելու համար այցելեք հետևյալ կայքը՝ https://dhcs.ca.gov/individuals/Pages/SUD_County_Access_Lines.aspx:

Կալիֆորնիայի Երեխաների ծառայություններ (CCS)

Կալիֆորնիայի Երեխաների ծառայությունները (CCS) Medi-Cal ծրագիր է, որը բուժում է 21 տարեկանից փոքր և որոշակի առողջական վիճակներ, հիվանդություններ կամ քրոնիկ առողջական խնդիրներ ունեցող երեխաների, ովքեր լրացնում են CCS ծրագրի կանոններ: Եթե L.A. Care-ը կամ Ձեր PCP-ն համոզված է, որ Ձեր երեխան ունի CCS-ի իրավասու վիճակ, նրան կուղղորդեն վարչաշրջանի CCS-ի ծրագիր, իրավասության համար գնահատելու նպատակով:

Վարչաշրջանի CCS ծրագրի անձնակազմը կորոշի, որ արդյո՞ք Ձեր երեխան որակավորվում է CCS ծառայությունների համար: L.A. Care-ը չի որոշում CCS-ի իրավասություն: Եթե Ձեր երեխան որակավորվում է այս տեսակի խնամք ստանալու համար, CCS-ի մատակարարները նրան կբուժեն CCS-ի վիճակի համար: L.A. Care-ը կշարունակի ապահովագրել ծառայության այնպիսի տեսակներ, որոնք կապ չունեն CCS-ի վիճակի հետ, ինչպես՝ ֆիզիկական քննությունները, պատվաստումները և քաջառողջ երեխայի ստուգումները:

L.A. Care-ը չի ապահովագրում CCS ծրագրի կողմից մատուցվող ծառայությունները: Որպեսզի CCS-ը ապահովագրի այս ծառայությունները, CCS-ը պետք է վավերացնի մատակարարը, ծառայությունները և սարքերը:

CCS-ը չի ապահովագրում բոլոր առողջական վիճակները: CCS-ը ապահովագրում է հիմնականում առողջական վիճակներ, որոնք ֆիզիկապես անկարող են դարձնում կամ որոնք անհրաժեշտ է բուժել դեղերով, վիրահատությամբ կամ վերականգնումով (վերականգնողական կենտրոն): CCS-ը ապահովագրում է երեխաների, որոնք ունեն հետևյալի նման առողջական վիճակներ՝



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

- Բնածին սրտի հիվանդություն
- Քաղցկեղներ
- Նորագոյացություններ
- Արյունահոսականություն
- Մանգաղանման բջջային սակավարյունություն
- Վահանագեղձի խնդիրներ
- Շաքարախտ
- Լուրջ քրոնիկ երիկամային խնդիրներ
- Լյարդի հիվանդություն
- Աղիքային հիվանդություն
- Շրթնաճոռոկ/քիմք
- Ողնաշարի ճեղքվածք
- Լսողության կորուստ
- Կատարակտներ
- Ուղեղի կաթված
- Նոպա որոշակի պարագաների ներքո
- Ռեմատոիզմանման հոդաբորբ
- Մկանային սննդախանգար
- ՁԻԱՀ
- Գլխի, ուղեղի կամ ողնաշարի սաստիկ վնասվածք
- Սաստիկ այրվածքներ
- Խիստ ծուռ ատամներ

Medi-Cal-ն է վճարում CCS ծառայությունների համար: Եթե Ձեր երեխան իրավասու չէ CCS ծրագրի ծառայություններին, նա կշարունակի բժշկականորեն անհրաժեշտ խնամք ստանալ L.A. Care-ից:

CCS-ի մասին ավելին իմանալու համար կարող եք այցելել CCS-ի կայքէջը՝ <https://www.dhcs.ca.gov/services/ccs>: Կամ զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Ծառայություններ, որոնք չեք կարող ստանալ L.A. Care-ի կամ Medi-Cal-ի միջոցով

Կան մի շարք ծառայություններ, որոնք ո՛չ L.A. Care-ը, ո՛չ էլ Medi-Cal-ը կապահովագրեն, ներառյալ՝ առանց դրանցով սահմանափակվելու՝

- Փորձառական ծառայությունները
- Պտղաբերության պահպանումը
- Փորձանոթային պտղավորումը (In Vitro Fertilization, IVF)
- Տան ձևափոխումներ
- Փոխադրական միջոցների բարեփոխումները
- Գեղարարական վիրաբուժություն

L.A. Care-ը թերևս ապահովագրի մի ոչ-նպաստ, եթե հիմնավորվում է բժշկական անհրաժեշտությունը: Ձեր մատակարարը պարտավոր է նախօրոք լիազորում ներկայացնել L.A. Care-ին՝ նշելով պատճառները, թե ինչու ոչ-նպաստը բժշկականորեն անհրաժեշտ է:

Ավելին իմանալու համար զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Նոր և առկա տեխնոլոգիաների գնահատում

L.A. Care-ը հետևում է առողջական խնամքի բնագավառում զարգացումներին և առաջընթացին՝ ուսումնասիրելով նոր բուժումները, դեղերը, ընթացակարգերն ու սարքերը: Սա նաև կոչվում է «նոր տեխնոլոգիա»: L.A. Care-ը հետևում է նոր տեխնոլոգիայի, որպեսզի անդամների համար երաշխավորի ապահով և արդյունավետ խնամքի մատչելիությունը: L.A. Care-ը նոր տեխնոլոգիան վերանայում է բժշկական և հոգեկան առողջության ընթացակարգերի, դեղագիտական զարգացումների և սարքերի համար: Նոր տեխնոլոգիայի վերանայման խնդրանքները կարող են գալ անդամից, գործնական մասնագետից, կազմակերպությունից, L.A. Care-ի վերանայող բժիշկներից կամ անձնակազմի այլ անդամներից:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
 հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

5. Երեխայի և երիտասարդների լավ խնամք

21 տարեկանից փոքր երեխա և պատանի անդամները կարող են ստանալ հատուկ առողջական ծառայություններ հենց որ անդամագրվեն: Սա կերաշխավորի, որ ստանան ճիշտ կանխիչ, ատամնաբուժական, հոգեկան առողջության և զարգացական ու մասնագիտացված ծառայություններ: Այս գլուխը բացատրում է այս ծառայությունները:

Մանկաբուժական ծառայություններ (մինչև 21 տարեկան երեխաներ)

21 տարեկանից փոքր անդամներն ապահովագրված են անհրաժեշտ խնամքի համար: Հետևյալ ցուցակն ընդգրկում է բժշկականորեն անհրաժեշտ ծառայություններ ներկայացնող խնամքը՝ բուժելու կամ բարեկարգելու համար թերություններն ու ֆիզիկական, հոգեկան ախտորոշումը: Ապահովագրված ծառայություններն ընդգրկում են՝

- Առողջ-երեխայի այցեր և պատանիների ստուգումներ (երեխաներին անհրաժեշտ կարևոր այցեր)
- Պատվաստումներ (սրսկումներ)
- Հոգեկան առողջության ծառայություններ (մասնագիտացված հոգեկան առողջության ծառայությունները ապահովագրվում են վարչաշրջանի կողմից)
- Լաբորատորային ստուգումներ, ներառյալ՝ արյան կապարից թունավորման ստուգում
- Առողջապահական եւ կանխարգելիչ կրթություն
- Տեսողական ծառայություններ
- Ատամնաբուժական ծառայություններ (ապահովագրված Medi-Cal Dental-ի ներքո)
- Լսողական ծառայություններ (ապահովագրված CCS-ի կողմից՝ որակավորվող երեխաների համար: L.A. Care-ը կապահովագրի CCS-ի համար չորակավորվող երեխաների համար ծառայությունները)



Ջանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Այս ծառայությունները կոչվում են Վաղ և պարբերաբար զննման, ախտորոշիչ և բուժման (EPSDT) ծառայություններ: EPSDT ծառայություններ, որոնք հանձնարարվել են մանկաբույժների Պայծառ ապագայի ուղեցույցով՝ Ձեր կամ Ձեր երեխայի առողջ մնալուն օգնելու համար, անվճար ապահովագրվում են Ձեզ համար:

Առողջ-երեխայի առողջության ստուգումներ և կանխարգելիչ խնամք

Կանխարգելիչ խնամքը ներառում է առողջության սովորական ստուգումներ, խնդիրները վաղ գտնելու համար Ձեր բժշկին օգնող զննումներ և հիվանդությունների, ախտերի կամ բժշկական վիճակների խնդիր առաջացնելուց առաջ հայտնաբերման համար խորհրդատվական ծառայություններ: Սովորական ստուգումներն օգնում են Ձեր կամ Ձեր երեխայի բժշկին, որ որոնի խնդիրներ: Խնդիրները կարող են ներառել բժշկական, ատամնաբուժական, տեսողական, լսողական, հոգեկան առողջության և թմրանյութի օգտագործման (թմրադեղ) խանգարումներ: L.A. Care-ը ապահովագրում է խնդիրների համար զննական ստուգումները (ներառյալ՝ արյան մեջ կապարի մակարդակի գնահատումը) երբ էլ որ դա անհրաժեշտ լինի, նույնիսկ եթե դա չի կատարվում Ձեր և Ձեր երեխայի սովորական ստուգման պահին:

Կանխարգելիչ խնամքը ներառում է նաև Ձեզ և Ձեր երեխային անհրաժեշտ սրսկումներ: L.A. Care-ը բոլոր անդամագրված երեխաների համար պետք է երաշխավորի առողջական խնամքի այցի պահին անհրաժեշտ սրսկումների ստացումը: Կանխարգելիչ խնամքի ծառայությունները և զննումները տրամադրելի են անվճար և առանց նախավերացման (նախօրոք լիազորման):

Ձեր երեխան ստուգումների պետք է ենթարկվի հետևյալ տարիքներին՝

- Ծնվելուց 2-4 օր անց
- 1 ամսական
- 2 ամսական
- 4 ամսական
- 6 ամսական
- 9 ամսական
- 12 ամսական
- 15 ամսական
- 18 ամսական
- 24 ամսական
- 30 ամսական
- Տարին մեկ անգամ 3-ից 20 տարեկանին



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Առողջ-երեխայի առողջական ստուգումները ներառում են՝

- Լրիվ պատմություն և ոտից գլուխ ֆիզիկական քննություն
- Տարիքին հարմար սրսկումներ (Կալիֆորնիան հետևում է Մանկաբուժության ամերիկյան ակադեմիայի Փայլուն ապագաների պարբերականության (American Academy of Pediatrics Bright Futures Periodicity) ժամանակացույցին)
- Լաբորատորային ստուգումներ, ներառյալ՝ արյան կապարից թունավորման ստուգում
- Առողջապահական կրթություն
- Տեսողության և լսողության զննում
- Բերանի առողջության զննում
- Վարքագծային առողջության գնահատում

Երբ մի ֆիզիկական խնդիր կամ հոգեկան հարց է հայտնաբերվում ստուգման կամ զննման պահին, հնարավոր է, որ գտնվի մի այնպիսի խնամք, որը ուղղի խնդիրը կամ օգնի դրան: Եթե խնամքը բժշկականորեն անհրաժեշտ է և L.A. Care-ը պատասխանատու է խնամքի վճարման, ապա L.A. Care-ը խնամքն ապահովագրում է անվճար: Այս ծառայություններն ընդգրկում են՝

- Բժիշկ, առաջնային խնամք տրամադրող բուժքույր և հիվանդանոցային խնամք
- Սրսկումներ՝ Ձեզ առողջ պահելու համար
- Ֆիզիկական, խոսքի/լեզվի և աշխատանքային թերապիաներ
- Տնային առողջապահության ծառայություններ, որոնք կարող են լինել բժշկական սարքեր, պաշարներ և գործիքներ
- Տեսողական խնդիրների բուժում, ներառյալ՝ ակնոցներ
- Լսողական խնդիրների բուժում, ներառյալ՝ լսողական սարքեր, երբ չեն ապահովագրվում CCS-ի կողմից
- Վարքագծային առողջության բուժում աուտիզմի բազմաշերտ խանգարման և ուրիշ զարգացական հաշմանդամությունների համար
- Գործի կառավարում և առողջապահական կրթություն
- Վերականգնողական վիրահատություն, որը վիրահատություն է ուղղելու կամ վերանորոգելու մարմնի անբնականոն կառուցվածքները, որոնք առաջանում են բնածին թերություններից, զարգացական անբնականոնություններից, տրավմայից, վարակից, նորագոյացություններից կամ հիվանդությունից, բարելավելու գործառույթը կամ ստեղծելու բնականոն տեսք



Ջանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Արյան կապարից թունավորման ստուգում

L.A. Care-ին անդամագրված բոլոր երեխաները պարտավոր են ենթարկվել արյան կապարից թունավորման ստուգման 12 և 24 ամսականին կամ 36-ից 72 ամսական եղած շրջանում, եթե չէին ստուգվել ավելի շուտ:

Երեխայի և պատանիների լավ խնամքի ծառայություններ ստանալու օգնություն

L.A. Care-ը 21 տարեկանից փոքր երեխաներին և նրանց ընտանիքներին կօգնի ստանալ իրենց անհրաժեշտ ծառայությունները: L.A. Care-ի խնամքի համակարգողը կարող է՝

- Ձեզ հայտնել տրամադրելի ծառայությունների մասին
- Օգնել գտնել ցանցի մատակարարներ կամ արտացանցային մատակարարներ, ըստ անհրաժեշտության
- Օգնել ժամադրությունների ապահովման
- Կարգադրել բժշկական փոխադրություն, որպեսզի երեխաները կարողանան իրենց ժամադրություններին գնալ
- Օգնել համակարգել խնամքը ծառայությունների համար, որոնք տրամադրելի են FFS Medi-Cal-ի միջոցով, ինչպես՝
 - Բուժում և վերականգնողական ծառայություններ հոգեկան առողջության և թմրանյութի օգտագործման խանգարումների համար
 - Բուժում ատամնաբուժական խնդիրների համար, ներառյալ՝ ձևախախտված ատամների ուղղումը

Ուրիշ ծառայություններ, որոնք կարող եք ստանալ Վճարովի ծառայությամբ (FFS) Medi-Cal-ի կամ ուրիշ ծրագրերի միջոցով

Ատամնաբուժական ստուգումներ

Ձեր երեխայի լնդերը մաքուր պահեք՝ ամեն օր քնքշորեն սրբելով լնդերը երեսի անձեռոցով: Մոտ չորսից վեց ամսականում «ատամ հանելը» կսկսվի, երբ կաթնատամները սկսում են հայտնվել: Դուք պետք է ժամադրվեք Ձեր երեխայի առաջին ատամնաբուժական այցի համար հենց որ նրա առաջին ատամը հայտնվի կամ նրա ծննդյան առաջին տարեդարձին, որը որ նախ պատահի:



Ջանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Medi-Cal-ի հետևյալ ատամնաբուժական ծառայություններն անվճար կամ էժան ծառայություններ են՝

1-4 տարեկան մանուկներ

- Մանկան առաջին ատամնաբուժական այցը
- Մանկան առաջին ատամնաբուժական քննությունը
- Ատամնաբուժական քննություններ (ամեն 6 ամիսը մեկ, ամեն 3 ամիսը մեկ ծննդից մինչև 3 տարեկան)
- Ռենտգեն պատկերում
- Ատամների մաքրություն (ամեն 6 ամիսը մեկ)
- Ֆտորիդով ջնարակում (ամեն 6 ամիսը մեկ)
- Լցոններ
- Ատամնահանում
- Շտապ օգնության ծառայություններ
- Ամբուլատոր ծառայություններ
- Հանգստացում (եթե բժշկականորեն անհրաժեշտ է)

5-12 տարեկան երեխաներ

- Ատամների քննություններ (ամեն 6 ամիսը մեկ)
- Ռենտգեն պատկերում
- Ֆտորիդով ջնարակում (ամեն 6 ամիսը մեկ)
- Ատամների մաքրություն (ամեն 6 ամիսը մեկ)
- Սեղանատամների խցիչ
- Լցոններ
- Ատամնային խողովակներ
- Շտապ օգնության ծառայություններ
- Ամբուլատոր ծառայություններ
- Հանգստացում (եթե բժշկականորեն անհրաժեշտ է)

13-17 տարեկան երեխաներ

- Ատամների քննություններ (ամեն 6 ամիսը մեկ)
- Ռենտգեն պատկերում
- Ֆտորիդով ջնարակում (ամեն 6 ամիսը մեկ)
- Ատամների մաքրություն (ամեն 6 ամիսը մեկ)
- Որակավորվող երեխաների համար ձևախախտված ատամների ուղղում (ամրակներ)
- Լցոններ
- Ատամնապսակներ
- Ատամնային խողովակներ
- Ատամնահանում
- Շտապ օգնության ծառայություններ
- Ամբուլատոր ծառայություններ
- Հանգստացում (եթե բժշկականորեն անհրաժեշտ է)



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
 հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Եթե հարցեր ունեք, կամ ցանկանում եք ավելին իմանալ ատամնաբուժական ծառայությունների վերաբերյալ, զանգահարեք Medi-Cal Dental ծրագիր **1-800-322-6384**) TTY **1-800-735-2922** կամ **711**) համարով: Կարող եք նաև այցելել Medi-Cal Dental ծրագրի կայքը՝ <https://smilecalifornia.org/>:

Կանխարգելիչ կրթության ուղղորդման հավելյալ ծառայություններ

Եթե մտահոգ եք, որ Ձեր երեխան դժվարանում է դպրոցում մասնակցել և սովորել, խոսեք Ձեր երեխայի Առաջնային խնամքի բժշկի, ուսուցիչների կամ դպրոցի կառավարիչների հետ: Բացի L.A. Care-ի կողմից ապահովագրվող Ձեր բժշկական նպաստներից, կան ծառայություններ, որոնք դպրոցը պետք է տրամադրի, որպեսզի օգնի Ձեր երեխային սովորել և հետ չմնալ:

Օրինակները ծառայությունների, որոնք կարող են տրամադրվել Ձեր երեխային սովորելու համար, ներառում են՝

- Խոսքի և լեզվական ծառայություններ
- Սոցիալական աշխատողի ծառայություններ
- Հոգեբանական ծառայություններ
- Խորհրդատվական ծառայություններ
- Ֆիզիկական թերապիա
- Դպրոցական բուժքրոջ ծառայություններ
- Աշխատանքային թերապիա
- Դպրոց երթուղարձի փոխադրություն
- Օժանդակ տեխնոլոգիա

Այս ծառայությունները մատուցվում և վճարվում են Կալիֆորնիայի Կրթական բաժնի (Department of Education) միջոցով: Ձեր երեխայի բժիշկների և ուսուցիչների հետ միասին կարող եք կազմել հարմարեցված ծրագիր, որը լավագույնս կօգնի Ձեր երեխային:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

6. Խնդիրների հաղորդում և լուծում

Կա խնդիրները հաղորդելու և լուծելու երկու եղանակ՝

- **Գանգատը** (կամ **բողոքը**) այն է, երբ խնդիր ունեք L.A. Care-ի կամ մատակարարի հետ, կամ մատակարարից ստացած Ձեր առողջական խնամքի կամ բուժման հետ
- **Բողոքարկումը** այն է, երբ համաձայն չեք Ձեր ծառայությունները փոխելու կամ չապահովագրելու L.A. Care-ի որոշման

Իրավունք ունեք բողոքներ և բողոքարկումներ ներկայացնելու L.A. Care-ին՝ Ձեր խնդիրը մեզ տեղեկացնելու համար: Սա Ձեզանից չի խլի Ձեր օրինական իրավունքներից կամ դարմաններից որևէ մեկը: Մենք խտրականություն չենք բանեցնի կամ փոխվրեժի չի դիմի Ձեր դեմ՝ մեզ գանգատվելու պատճառով: Ձեր խնդրի մասին մեզ տեղյակ պահելը կօգնի, որ բարելավենք խնամքը բոլոր անդամների համար:

Պարտավոր եք միշտ նախ L.A. Care-ի հետ կապ հաստատել՝ մեզ իմացնելու Ձեր խնդիրը: Գանգատ կարող եք ներկայացնել որևէ ժամանակ հեռախոսով, գրավոր կամ առցանց: Զանգահարեք մեզ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը **1-888-839-9909** (TTY **711**) համարով կամ գնացեք [lacare.org](https://www.lacare.org) կայքը:

Եթե Ձեր բողոքը կամ բողոքարկումը դեռևս չի լուծվել 30 օր անցնելուց հետո, կամ եթե դժգոհ եք արդյունքից, կարող եք զանգահարել Կալիֆորնիայի Կառավարվող առողջական խնամքի բաժին (Department of Managed Health Care, DMHC) և նրանցից խնդրել, որ վերանայեն Ձեր գանգատը կամ կատարեն մի Բժշկական անկախ վերանայում (Independent Medical Review): DMHC կարող եք զանգահարել **1-888-466-2219** (TTY **1-877-688-9891** կամ **711**) համարով կամ հավելյալ տեղեկության համար այցելել DMHC-ի կայքը՝ <https://www.dmhc.ca.gov>:

Կալիֆորնիայի Առողջական խնամքի սպասարկման բաժնի (DHCS) Medi-Cal-ի Կառավարվող խնամքի Իրավապաշտպանը (Managed Care Ombudsman) ևս կարող է օգնել: Նրանք կարող են օգնել, եթե դժվարություն ունեք միանալու, փոխելու կամ հեռանալու առողջապահական ծրագրից: Նրանք նաև կարող են օգնել, եթե հեռացել եք և դժվարություն ունեք Ձեր Medi-Cal-ը Ձեր նոր վարչաշրջան փոխանցելու կապակցությամբ: Իրավապաշտպանին կարող եք զանգահարել երկուշաբթիից ուրբաթ, կ.ա. 8-ից մինչև կ.հ. 5-ը, **1-888-452-8609** համարով:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**): L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ [lacare.org](https://www.lacare.org):

Կարող եք նաև Ձեր վարչաշրջանի իրավասության գրասենյակին բողոք ներկայացնել Ձեր Medi-Cal-ի իրավասության վերաբերյալ: Եթե վստահ չեք, թե ում կարող եք Ձեր բողոքը ներկայացնել, զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Ձեր հավելյալ առողջապահական ծրագրին վերաբերող սխալ տեղեկության մասին հաղորդելու համար զանգահարեք Medi-Cal երկուշաբթիից ուրբաթ կ.ա. 8-ից մինչև կ.հ. 5-ը **1-800-541-5555** համարով:

Գանգատներ

Գանգատը (կամ բողոքը) այն է, երբ Դուք ունեք մի խնդիր կամ դժգոհ եք L.A. Care-ից կամ մատակարարից Ձեր ստացած ծառայություններից: Գանգատ ներկայացնելու համար չկա ժամանակային սահմանափակում: L.A. Care-ին գանգատ կարող եք ներկայացնել որևէ ժամանակ հեռախոսով, գրավոր կամ առցանց:

- **Հեռախոսով՝** Ջանգահարեք L.A. Care **1-888-839-9909 (TTY 711)** համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Տվեք Ձեր առողջապահական ծրագրի ճանաչողական համարը, Ձեր անունը և Ձեր գանգատի դրդապատճառը:
- **Փոստով՝** Ջանգահարեք L.A. Care **1-888-839-9909 (TTY 711)** համարով և խնդրեք, որ ձևաթուղթը փոստով ուղարկեն Ձեզ: Ձևաթուղթն ստանալուց հետո, լրացրեք այն: Անպայման ընդգրկեք Ձեր անունը, առողջապահական ծրագրի ճանաչողական համարը և Ձեր գանգատի դրդապատճառը: Մեզ հայտնեք, թե ինչ է պատահել և ինչպես կարող ենք օգնել Ձեզ:

Ձևաթուղթը փոստով առաքեք այստեղ՝

L.A. Care Health Plan
Appeals and Grievances Department
1055 West 7th Street, 10th Floor
Los Angeles, CA 90017

- **Առցանց՝** Այցելեք L.A. Care-ի կայքը: Գնացեք՝ lacare.org:

Եթե գանգատի լրացման համար օգնության կարիք ունեք, մենք կարող ենք օգնել Ձեզ: Մենք կարող ենք անվճար լեզվական ծառայություններ մատուցել Ձեզ: Ջանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:



Ջանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Ձեր գանգատը ստանալուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում մենք Ձեզ նամակ կուղարկենք՝ հայտնելով, որ ստացել ենք այն: 30 օրվա ընթացքում, մենք Ձեզ կուղարկենք մի ուրիշ նամակ, որը կհայտնի, թե ինչպես ենք լուծել Ձեր խնդիրը: Եթե L.A. Care գանգահարեք մի բողոքի մասին, որը չի վերաբերում առողջական խնամքի ապահովագրության, բժշկական անհրաժեշտության, փորձնական կամ հետազոտական բնույթ ունեցող բուժման, և Ձեր բողոքը լուծվում է մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, հնարավոր է, որ նամակ չստանաք:

Եթե ցանկանում եք, որ L.A. Care-ը կայացնի արագ որոշում, քանի որ Ձեր գանգատի լուծման համար պահանջված ժամանակը Ձեր կյանքը, առողջությունը կամ գործելու կարողությունը վտանգի կենթարկի, կարող եք արագացված (արագ) վերանայում խնդրել: Արագացված վերանայում խնդրելու համար գանգահարեք մեզ **1-888-839-9909** (TTY **711**) համարով: Ձեր գանգատը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում մենք որոշում կկայացնենք, թե ինչպես ենք վարվելու Ձեր գանգատի հետ և արդյո՞ք արագացնելու ենք Ձեր գանգատը: Եթե որոշենք, որ չենք արագացնելու Ձեր գանգատը, Ձեզ տեղյակ կպահենք, որ Ձեր գանգատը կլուծենք 30 օրվա ընթացքում:

Medi-Cal Rx-ի դեղատան նպաստների հետ կապված գանգատները ենթակա չեն L.A. Care-ի բողոքի գործընթացին կամ իրավասու չեն Բժշկական անկախ վերանայման: Անդամները Medi-Cal Rx-ի դեղատան նպաստների մասին գանգատներ կարող են ներկայացնել գանգահարելով **800-977-2273** (TTY **800-977-2273** և սեղմելով 5 կամ **711**) կամ գնալով <https://medi-calrx.dhcs.ca.gov/home/> կայքը: Այնուամենայնիվ, դեղատան նպաստներին վերաբերող գանգատները, որոնք ենթակա չեն Medi-Cal Rx-ին, թերևս իրավասու լինեն Բժշկական անկախ վերանայման: DMHC-ի անվճար հեռախոսահամարն է՝ **1-888-466-2219** և TTY հեռախոսագիծն է՝ **1-877-688-9891**: Բժշկական անկախ վերանայման/Գանգատի ձևաթուղթը և հրահանգները կարող եք գտնել առցանց DMHC-ի կայքում <https://www.dmhc.ca.gov/>:

Բողոքարկումներ

Բողոքարկումը տարբեր է գանգատից: Բողոքարկումը մի խնդրանք է, որպեսզի վերանայենք և փոխենք մի որոշում, որը մենք կայացրել ենք Ձեր ծառայություն(ներ)ի վերաբերյալ: Եթե Ձեզ ուղարկել ենք Գործողության ծանուցագրի (NOA) նամակ, Ձեզ հայտնելով, որ մերժում, ուշացում, փոխում կամ դադարեցում ենք մի ծառայություն, և դուք համաձայն չգտնվեք մեր որոշման, կարող եք մեզանից բողոքարկում խնդրել: Ձեր PCP-ն կամ ուրիշ մատակարար ևս կարող է Ձեզ համար բողոքարկում խնդրել մեզանից՝ Ձեր գրավոր արտոնությամբ:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Բողոքարկումը պետք է խնդրեք մեզանից Ձեր ստացած NOA-ի ամսաթվին հաջորդող 60 օրացուցային օրերի ընթացքում: Եթե մենք որոշել ենք նվազեցնել, առկախել կամ դադարեցնել Ձեր ներկայումս ստացած ծառայություն(ներ)ը, Դուք կարող եք շարունակել ստանալ այդ ծառայություն(ներ)ը մինչ սպասում եք Ձեր բողոքարկման որոշմանը: Սա կոչվում է Առկախված վճարելի օգնություն (Aid Paid Pending): Առկախված վճարելի օգնություն ստանալու համար, Դուք պետք է մեզանից բողոքարկում խնդրեք NOA-ի ամսաթվից 10 օրվա ընթացքում կամ մինչև այն ամսաթիվը, երբ մենք ասացինք, որ Ձեր ծառայություն(ներ)ը կդադարեցվեն, որը որ ավելի ուշ է պատահում: Երբ այս հանգամանքներում բողոքարկում եք խնդրում, ծառայություն(ներ)ը կշարունակվեն:

Բողոքարկումը կարող եք ներկայացնել հեռախոսով, գրավոր, կամ առցանց՝

- **Հեռախոսով՝** Զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Նշեք Ձեր անունը, առողջապահական ծրագիր ճանաչողական համարը և Ձեր բողոքարկած ծառայությունը:
- **Փոստով՝** Զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով և խնդրեք, որ ձևաթուղթը փոստով ուղարկեն Ձեզ: Ձևաթուղթն ստանալուց հետո, լրացրեք այն: Անպայման ընդգրկեք Ձեր անունը, առողջապահական ծրագիր ճանաչողական համարը և Ձեր բողոքարկած ծառայությունը:

Ձևաթուղթը փոստով առաքեք այստեղ՝
L.A. Care Health Plan
Appeals and Grievances Department
1055 W. 7th Street, 10th Floor
Los Angeles, CA 90017

- **Առցանց՝** Այցելեք L.A. Care-ի կայքը: Գնացեք՝ lacare.org:

Եթե բողոքարկում խնդրելու համար կամ Առկախված վճարելի օգնության հետ կապված օգնության կարիք ունեք, մենք կարող ենք օգնել Ձեզ: Մենք կարող ենք անվճար լեզվական ծառայություններ մատուցել Ձեզ: Զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Ձեր բողոքարկումը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում մենք Ձեզ նամակ կուղարկենք՝ հայտնելով, որ ստացել ենք այն: 30 օրվա ընթացքում մենք Ձեզ կհայտնենք մեր բողոքարկման որոշումը և կուղարկենք Բողոքարկման որոշման ծանուցագրի (Notice of Appeal Resolution, NAR) նամակ: Եթե մենք Ձեզ չտանք մեր բողոքարկման որոշումը 30 օրից, կարող եք նահանգային լսում և IMR խնդրել: Սակայն եթե նախ նահանգային լսում խնդրեք և լսումը արդեն իսկ անցկացված լինի, Դուք չեք կարող IMR խնդրել: Այս դեպքում վերջնական խոսքը պատկանում է նահանգային լսումին:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Եթե Դուք կամ Ձեր բժիշկը ցանկանում եք, որ մենք կայացնենք արագ որոշում, քանի որ Ձեր բողոքարկման որոշման համար պահանջված ժամանակը Ձեր կյանքը, առողջությունը կամ գործելու կարողությունը վտանգի կենթարկի, կարող եք արագացված (արագ) վերանայում խնդրել: Արագացված վերանայում խնդրելու համար զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Մենք որոշում կկայացնենք Ձեր բողոքարկումն ստանալուց հետո 72 ժամից:

Ինչ անել բողոքարկման որոշման համաձայն չլինելու դեպքում

Եթե բողոքարկում եք խնդրել և ստացել եք NAR նամակ, որը Ձեզ հայտնում է, որ մենք չենք փոխել մեր որոշումը, կամ երբեք չեք ստացել NAR նամակ և անցել է 30 օր, կարող եք՝

- **Նահանգային լսում** խնդրել Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների բաժնից (California Department of Social Services, CDSS) և մի դատավոր կվերանայի Ձեր գործը:
- Բժշկական անկախ վերանայման/Գանգատի ձևաթուղթ ներկայացնել Կառավարվող առողջական խնամքի բաժին (DMHC), որպեսզի վերանայեն L.A. Care-ի որոշումը կամ **Բժշկական անկախ վերանայում (Independent Medical Review, IMR)** խնդրեք DMHC-ից: DMHC-ի IMR-ի ընթացքում մի արտաքին բժիշկ, ով մաս չի կազմում L.A. Care-ին, կվերանայի Ձեր գործը: DMHC-ի անվճար հեռախոսահամարն է՝ **1-888-466-2219** և TTY հեռախոսագիծն է՝ **1-877-688-9891**: Բժշկական անկախ վերանայման/Գանգատի ձևաթուղթը և հրահանգները կարող եք գտնել առցանց DMHC-ի կայքում <https://www.dmhc.ca.gov>:

Դուք ոչ մի վճարում չեք կատարի նահանգային լսումի կամ IMR-ի համար:

Կարող եք միաժամանակ և նահանգային լսում, և IMR խնդրել: Սակայն եթե նախ նահանգային լսում խնդրեք և լսումը արդեն իսկ անցկացված լինի, Դուք չեք կարող IMR խնդրել: Այս դեպքում վերջնական խոսքը պատկանում է նահանգային լսումին:

Ներքևի բաժինները հավելյալ տեղեկություն ունեն նահանգային լսում և IMR խնդրելու կերպի մասին:

L.A. Care-ը չի զբաղվում գանգատներով և բողոքարկումներով, որոնք վերաբերում են Medi-Cal Rx-ի դեղատան նպաստներին: Կարող եք Medi-Cal Rx-ի դեղատան նպաստներին վերաբերող գանգատներ և բողոքարկումներ ներկայացնել զանգահարելով **800-977-2273 (TTY 800-977-2273)** համարով և սեղմելով 5 կամ **711**: Այնուամենայնիվ, դեղատան նպաստներին վերաբերող գանգատները և բողոքարկումները, որոնք ենթակա չեն Medi-Cal Rx-ին, թերևս իրավասու լինեն Բժշկական անկախ վերանայման:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Medi-Cal Rx-ի դեղատան նպաստներին վերաբերող մի որոշման համաձայն չլինելու դեպքում, կարող եք նահանգային լսում խնդրել: Medi-Cal Rx-ի դեղատան նպաստների որոշումները ենթակա չեն DMHC-ի մոտ IMR-ի գործընթացի:

Գանգատներ և Բժշկական անկախ վերանայումներ (IMR) Կառավարվող առողջական խնամքի բաժնի մոտ

IMR-ը տեղի է ունենում երբ առողջապահական ծրագրի հետ կապ չունեցող մի արտաքին բժիշկ վերանայում է Ձեր գործը: IMR ցանկանալու դեպքում, նախ բողոքարկում պետք է ներկայացնեք L.A. Care-ին: Ձեր առողջապահական ծրագրից 30 օրացուցային օրվա ընթացքում չլսելու դեպքում, կամ եթե դժգոհ եք Ձեր առողջապահական ծրագրի որոշումից, կարող եք IMR խնդրել: IMR-ը պարտավոր եք խնդրել բողոքարկման որոշումը Ձեզ ծանուցող նամակի ամսաթվին հաջորդող 6 ամսում, բայց Դուք միայն 120 օրացուցային օր ունեք նահանգային լսում խնդրելու համար, ուստի եթե IMR և նահանգային լսում եք խնդրում, Ձեր գանգատը ներկայացրեք հնարավորինս շուտ: Հիշեք, եթե նախ նահանգային լսում խնդրեք և լսումը արդեն իսկ անցկացված լինի, Դուք չեք կարող IMR խնդրել: Այս դեպքում վերջնական խոսքը պատկանում է նահանգային լսումին:

Թերևս կարողանաք IMR ստանալ անմիջապես՝ առանց նախ բողոքարկում ներկայացնելու: Սա պատահում է այնպիսի դեպքերում, երբ Ձեր առողջական խնդիրը հրատապ է:

Եթե DMHC-ի մոտ Ձեր գանգատը չի որակավորվում IMR-ի համար, DMHC-ը դեռևս կվերանայի Ձեր գանգատը, վստահ լինելու համար, որ L.A. Care-ը ճիշտ որոշում է կայացրել, երբ բողոքարկել եք ծառայության իր մերժումը: L.A. Care-ը պարտավոր է ենթարկվել DMHC-ի IMR-ի և վերանայման որոշումներին:

Հետևյալը ներկայացնում է IMR խնդրելու կերպը: «Բողոք» բառը վերաբերում է և՛ «գանգատներին», և՛ «բողոքարկումներին»:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY 711):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Կալիֆորնիայի Կառավարվող առողջական խնամքի բաժինը պատասխանատու է առողջական խնամքի սպասարկման ծրագրերի կարգավորման համար: Եթե Ձեր առողջապահական ծրագրի դեմ բողոք ունեք, ապա, նախքան բաժին դիմելը, պետք է զանգահարեք Ձեր առողջապահական ծրագրի՝ L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909** (TTY **711**) համարով և օգտագործեք Ձեր առողջապահական ծրագրի բողոքի գործընթացը: Բողոքի այս գործընթացից օգտվելը չի արգելի որևէ հնարավոր օրինական իրավունք կամ միջոց, որը կարող է տրամադրելի լինել Ձեզ: Եթե օգնության կարիք ունեք որևէ բողոքի համար, որը կապված է արտակարգ իրավիճակի հետ, կամ մի բողոքի համար, որը գոհացուցիչ լուծում չի ստացել Ձեր առողջապահական ծրագրի կողմից, կամ մի բողոքի համար, որը անլուծ է մնացել ավելի քան 30 օր, կարող եք օգնության համար բաժին զանգահարել: Թերևս նաև իրավասու լինեք Անկախ բժշկական վերանայման (IMR): Եթե իրավասու եք IMR-ի համար, IMR-ի գործընթացը անկողմնակալորեն կվերանայի առողջապահական ծրագրի կայացրած որոշումները, որոնք վերաբերում են առաջարկվող ծառայության կամ բուժման բժշկական անհրաժեշտությանը, փորձառական կամ հետազոտական բնույթ ունեցող բուժումների վերաբերյալ ապահովագրական որոշումներին, և արտակարգ իրավիճակների կամ հրատապ բժշկական ծառայությունների համար վճարումների վերաբերյալ վեճերին: Բաժինը նաև ունի անվճար հեռախոսահամար **(1-888-466-2219)** և TDD հեռախոսագիծ **(1-877-688-9891)** լսողության կամ խոսքի խանգարում ունեցող անձանց համար: Բաժնի համացանցային կայքը՝ <https://www.dmhc.ca.gov/>, ունի առցանց գանգատի ձևաթղթեր, IMR-ի դիմումի ձևաթղթեր և հրահանգներ:

Նահանգային լսումներ

Նահանգային լսումը հանդիպում է Կալիֆորնիայի Սոցիալական սպասարկությունների բաժնից (CDSS) անձանց հետ: Մի դատավոր կօգնի լուծել Ձեր խնդիրը կամ Ձեզ հայտնել, որ մենք կայացրել ենք ճիշտ որոշում: Իրավունք ունեք նահանգային լսում խնդրելու, եթե արդեն բողոքարկում եք խնդրել մեզանից և դեռ դժգոհ եք մնացել որոշումից, կամ Ձեր բողոքարկման որոշումը չեք ստացել 30 օր անցնելուց հետո:

Նահանգային լսումը պետք է խնդրեք մեր NAR նամակի ամսաթվին հաջորդող օրացուցային 120 օրերի ընթացքում: Այնուամենայնիվ, եթե մենք Ձեր բողոքարկման ընթացքում Ձեզ տվել ենք Առկախված վճարելի օգնություն, և ցանկանում եք, որ այն շարունակվի մինչև Ձեր նահանգային լսումի վերաբերյալ որոշում կայացվելը, Դուք պետք է նահանգային լսում խնդրեք մեր NAR նամակից հետո 10 օրվա ընթացքում կամ մինչև այն ամսաթիվը, երբ մեր ասելով Ձեր ծառայություն(ներ)ը կդադարեցվեն, որը որ ավելի ուշ պատահի: Եթե օգնության կարիք ունեք վստահ լինելու, որ Առկախված վճարելի օգնությունը կշարունակվի մինչև Ձեր նահանգային լսումի վերջնական որոշումը, դիմեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում** օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը, զանգահարելով **1-888-839-9909** (TTY **711**) համարով: Եթե չեք կարող լավ լսել կամ խոսել, խնդրում ենք զանգահարել **711** համարով: Ձեր PCP-ն ևս կարող է նահանգային լսում խնդրել Ձեզ համար՝ Ձեր գրավոր արտոնությամբ:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
 հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Երբեմն կարող եք նահանգային լսում խնդրել առանց մեր բողոքարկման գործընթացը ամբողջացնելու:

Օրինակի համար, կարող եք նահանգային լսում խնդրել առանց մեր բողոքարկման գործընթացը ամբողջացնելու, եթե Ձեզ ճիշտ կերպով կամ ժամանակին չենք հայտնել Ձեր ծառայություն(ներ)ի մասին: Սա կոչվում է Հարմար սպառում (Deemed Exhaustion): Ստորև Հարմար սպառումի մի շարք օրինակներ՝

- Մենք NOA նամակը Ձեզ չենք տրամադրել Ձեր նախընտրած լեզվով:
- Մենք թույլ ենք տվել մի սխալ, որը ազդում է Ձեր իրավունքներից որևէ մեկին:
- Մենք Ձեզ չենք տվել NOA նամակ:
- Մենք թույլ ենք տվել մի սխալ մեր NAR նամակում:
- Մենք Ձեր բողոքարկումը չենք որոշել 30 օրվա ընթացքում: Մենք որոշել ենք, որ Ձեր գործը հրատապ էր, բայց Ձեր բողոքարկման չենք պատասխանել 72 ժամվա ընթացքում:

Նահանգային լսումը կարող եք խնդրել հեռախոսով կամ փոստով:

- **Հեռախոսով՝** Զանգահարեք CDSS-ի Հանրային պատասխանի ենթաբաժին **1-800-952-5253** (TTY **1-800-952-8349** կամ **711**) համարով:
- **Փոստով՝** Լրացրեք ձևաթուղթը, որը մատուցվել է Ձեր բողոքարկման լուծման ծանուցագրի հետ: Այն ուղարկեք հետևյալ հասցեով՝

California Department of Social Services
State Hearings Division
P.O. Box 944243, MS 09-17-37
Sacramento, CA 94244-2430

Եթե նահանգային լսում խնդրելու համար օգնության կարիք ունեք, մենք կարող ենք օգնել Ձեզ: Մենք կարող ենք անվճար լեզվական ծառայություններ մատուցել Ձեզ: Զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Լսումի պահին, Դուք կներկայացնեք Ձեր կողմը: Մենք կներկայացնենք մեր կողմը: Ձեր գործի որոշման համար դատավորից կարող է մինչև 90 օր պահանջվել: L.A. Care-ը պարտավոր է հետևել դատավորի որոշման:

Եթե ցանկանում եք, որ CDSS-ը կայացնի արագ որոշում, քանի որ նահանգային լսում ունենալու համար պահանջված ժամանակը Ձեր կյանքը, առողջությունը կամ լրիվ գործելու կարողությունը վտանգի կենթարկի, Դուք կամ Ձեր PCP-ն կարող եք CDSS-ին դիմելով արագացված (արագ) նահանգային լսում խնդրել: CDSS-ը պարտավոր է որոշումը կայացնել 3 աշխատանքային օրից ոչ ուշ՝ Ձեր ամբողջական գործի թղթածրարը L.A. Care-ից ստանալուց հետո:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Խարդախություն, վատնում և չարաշահում

Եթե կասկած ունեք, որ մի մատակարար կամ մի անձ, ով Medi-Cal է ստանում, գործել է խարդախություն, վատնում կամ չարաշահում, Ձեր իրավունքն է տեղեկագրել այն զանգահարելով գաղտնի անվճար համարով՝ **1-800-822-6222** կամ առցանց գանգատ ներկայացնելով <https://www.dhcs.ca.gov/> կայքում:

Մատակարարի խարդախությունը, վատնումը և չարաշահումը ներառում է՝

- Բժշկական արձանագրությունների կեղծումը
- Բժշկական անհրաժեշտությունից ավելի մեծ քանակով դեղերի նշանակումը
- Բժշկական անհրաժեշտությունից ավելի մեծ ծավալի առողջական խնամքի ծառայությունների մատուցումը
- Չմատուցված ծառայությունների համար հաշիվ ուղարկելը
- Մասնագիտական ծառայությունների համար հաշիվ ուղարկելը, երբ մասնագետը չի մատուցել ծառայությունը
- Անվճար կամ զեղչով առարկաներ և ծառայություններ առաջարկելը անդամներին՝ ջանալով ազդել, թե որ մատակարարին է ընտրում անդամը
- Անդամի առաջնային խնամքի բժշկին փոխելը առանց անդամի գիտության

Խարդախությունը, վատնումը և չարաշահումը նպաստներ ստացող անձի կողմից ներառում է, առանց սահմանափակվելու՝

- Առողջապահական ծրագրի ճանաչողական քարտը կամ Medi-Cal-ի նպաստների ճանաչողական քարտը (Benefits Identification Card, BIC) փոխ տալը, վաճառելը կամ տալը ուրիշ անձի
- Նման կամ նույն բուժումներն ու դեղերը ստանալը մեկից ավելի մատակարարից
- Շտապ օգնության կայան գնալը, երբ վիճակն արտակարգ չէ
- Ուրիշի Սոցիալական ապահովության համարի կամ առողջապահական ծրագրի ճանաչողական համարի օգտագործումը
- Բժշկական և ոչ-բժշկական փոխադրական ուղևորություններ կատարելը ոչ առողջապահական ծառայությունների համար, Medi-Cal-ի կողմից չապահովագրված ծառայությունների համար, կամ երբ չունեք բժշկական ժամադրություն կամ վերցվելիք դեղատոմսեր:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
 հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Խարդախություն, վատնում և չարաշահում տեղեկագրելու համար գրառեք անունը, հասցեն և ճանաչողական համարը անձի, որը գործել է խարդախությունը, վատնումը և չարաշահումը: Տվեք ինչքան հնարավոր է շատ տեղեկություն անձի մասին, ինչպես՝ հեռախոսահամարը կամ մասնագիտությունը, եթե մատակարար է նա: Տվեք միջադեպերի ամսաթվերը և ամփոփումը, թե ինչ է պատահել իսկապես:

Ձեր տեղեկագիրը ուղարկեք հետևյալ հասցեով՝

L.A. Care Health Plan
Special Investigations Unit
1055 West 7th Street, 10th Floor
Los Angeles, CA 90017

Կարող եք նաև զանգահարել Համապատասխանության թեժ հեռախոսագիծ (Compliance Helpline) **1-800-400-4889** համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, տեղեկությունը էլ. փոստով ուղարկել հետևյալին՝ **ReportingFraud@lacare.org**, կամ տեղեկությունը հաղորդել առցանց հետևյալ կայքում՝ **lacare.ethicspoint.com**:

Բոլոր հաղորդումները հնարավոր է կատարել անանուն:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

7. Իրավունքներ և պարտավորություններ

Որպես L.A. Care-ի անդամ, Դուք ունեք որոշակի իրավունքներ և պարտավորություններ: Այս գլուխը բացատրում է այդ իրավունքները և պարտավորությունները: Այս գլուխը նաև ներառում է օրինական ծանուցումներ, որոնց իրավունքն ունեք որպես L.A. Care-ի անդամ:

Ձեր իրավունքները

Սրանք են Ձեր իրավունքները որպես L.A. Care-ի անդամ՝

- Արժանանալ հարգալիր և արժանապատիվ վերաբերումի, պատշաճ ուշադրություն դարձնելով Ձեր գաղտնիության իրավունքին և Ձեր բժշկական տեղեկության գաղտնիությունը պահպանելու անհրաժեշտության:
- Տեղեկություններ ստանալ ծրագրի և իր ծառայությունների վերաբերյալ, ներառյալ՝ ապահովագրված ծառայությունները, գործառուղ անձինք և անդամի իրավունքներն ու պարտավորությունները:
- Թելադրություններ կատարել L.A. Care-ի անդամի իրավունքների և պարտավորությունների քաղաքականության վերաբերյալ:
- Կարողանալ առաջնային խնամքի մատակարար ընտրել L.A. Care-ի ցանցում:
- Ժամանակին մատչել կարողանալ ցանցի մատակարարներին:
- Մասնակցել որոշումների կայացման, ինչ վերաբերում է Ձեր սեփական առողջական խնամքին, ներառյալ՝ բուժումը մերժելու իրավունքը:
- Բողոքներ հայտնել բանավոր կամ գրավոր եղանակով, կազմակերպության կամ Ձեր ստացած խնամքի մասին:
- Ստանալ խնամքի համակարգում:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

- Խնդրել բողոքարկումը ծառայությունների կամ նպաստների մերժման, հետաձգման կամ սահմանափակման:
- Ստանալ անվճար բանավոր թարգմանչական ծառայություններ Ձեր լեզվի համար:
- Ստանալ անվճար օրինական օգնություն Ձեր տեղական օրինական օգնության գրասենյակից կամ ուրիշ խմբերից:
- Բանաձևել նախօրոք հրահանգներ:
- Խնդրել նահանգային լսում, եթե մերժվել է մի ծառայություն կամ նպաստ և Դուք արդեն բողոքարկում եք ներկայացրել L.A. Care-ին և դեռ դժգոհ եք որոշումից, կամ եթե Ձեր բողոքարկման վերաբերյալ որոշում չեք ստացել 30 օր անցնելուց հետո, ներառյալ՝ տեղեկությունը պարագաների մասին, որոնց ներքո հնարավոր է լինում արագացված լսումը:
- Ապանդամագրվել L.A. Care-ից և անցնել վարչաշրջանում մի ուրիշ առողջապահական ծրագիր՝ այն խնդրելուց հետո:
- Մատչելի գտնել դեռահասների համաձայնությամբ ծառայությունները:
- Անդամների իրազեկման անվճար գրավոր նյութերն ստանալ ուրիշ ձևաչափերով (ներառյալ՝ բրայլյան այբուբենը, խոշոր տառատեսակը, ձայնագրությունը և մատչելի էլեկտրոնային ձևաչափերը) խնդրելու դեպքում և խնդրված ձևաչափին հարմար ժամանակի ընթացքում՝ համաձայն Վելֆերի և հիմնարկների օրենսգրքի 14182 (b)(12) բաժնի:
- Ազատ մնալ որևէ տեսակի կաշկանդումից կամ մեկուսացումից, որը օգտագործվում է որպես հարկադրման, կարգապահության, հարմարության կամ փոխվրեժի միջոց:
- Ճշմարտացիորեն քննարկել տրամադրելի բուժման ընտրանքների և այլընտրանքների մասին, ներկայացված՝ Ձեր վիճակին և այն հասկանալու Ձեր կարողությանը հարմար եղանակով, անկախ ծախքից կամ ապահովագրությունից:
- Մատչելի գտնել և ստանալ պատճենը Ձեր բժշկական արձանագրությունների, Եւ խնդրել, որ դրանք փոփոխվեն կամ ուղղվեն, ինչպես հատկորոշվել է Դաշնային կանոնակարգերի 45-րդ Օրենսգրքի §164.524 և 164.526 բաժիններում:
- Այս իրավունքները կիրառելու ազատություն՝ առանց բացասապես ազդելու L.A. Care-ի, Ձեր մատակարարների կամ նահանգի կողմից Ձեր նկատմամբ ցուցաբերված վերաբերումին:
- Մատչելի գտնել ընտանիքի ծրագրման ծառայությունները, Անկախ ծննդաբերության կենտրոնները, Դաշնային որակավորումով առողջապահական կենտրոնները, Հնդկացիների առողջապահական կլինիկաները, մանկաբարձի ծառայությունները, Գյուղական առողջապահական կենտրոնները, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների ծառայությունները և արտակարգ իրավիճակի ծառայությունները L.A. Care-ի ցանցից դուրս՝ դաշնային օրենքների համաձայն:
- Ստանալ անվճար գրավոր ծրագրային նյութեր Ձեր լեզվով կամ այլընտրական ձևաչափով:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
 հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Ձեր պարտավորությունները

L.A. Care-ի անդամներն ունեն հետևյալ պարտավորությունները՝

- Քաղաքավարի և հարգալիք վերաբերմունք ցուցաբերել Ձեր բժշկի, բոլոր մատակարարների և անձնակազմի նկատմամբ Պարտավոր եք ժամանակին ներկայանալ Ձեր այցին կամ այցից առնվազն 24 ժամ առաջ զանգահարել բժշկի գրասենյակ՝ այցը չեղյալ հայտարարելու կամ այն վերադասավորելու նպատակով
- Ճշգրիտ տեղեկություն տալ և տալ հնարավորինս շատ տեղեկություն Ձեր բոլոր մատակարարներին և L.A. Care-ին
- Ենթարկվել կանոնավոր բժշկական ստուգումների և տեղեկացնել Ձեր բժշկին Ձեր առողջական խնդիրների մասին՝ նախքան դրանց լրջանալը
- Ձեր բժշկի հետ քննարկել Ձեզ առողջական խնամքի կարիքները, մշակել և համաձայնվել թիրախների շուրջ, անել հնարավոր ամեն բան՝ հասկանալու Ձեր առողջական խնդիրները և հետևել բուժման ծրագրերին և հրահանգներին, որոնց շուրջ համաձայնվել եք երկուսդ
- Տրամադրել տեղեկություն (հնարավորության սահմաններում), որը կազմակերպությանը և նրա գործառուղ անձանց և մատակարարներին անհրաժեշտ է խնամք մատուցելու համար
- Հետևել խնամքի համար ծրագրերի և հրահանգների, որոնց շուրջ նրանք համաձայնվել են իրենց գործառուղ անձանց հետ
- Հասկանալ նրանց առողջական խնդիրները և հնարավորինս մասնակցել բուժման փոխադարձ համաձայնեցված նպատակների մշակման
- Առողջական խնամքի խարդախությունը կամ իրավախախտումները տեղեկագրել L.A. Care-ին: Դուք սա կարող եք անել առանց Ձեր անունը տալու՝ զանգահարելով L.A. Care-ի Համապատասխանության թեժ հեռախոսագծի անվճար համարով՝ **1-800-400-4889**, այցելելով **lacare.ethicspoint.com** կայքը, կամ զանգահարելով Կալիֆորնիայի Առողջական խնամքի սպասարկման բաժին՝ Medi-Cal-ի Խարդախությունների և չարաշահումների թեժ հեռախոսագծի հետևյալ անվճար համարով՝ **1-800-822-6222**



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Ոչ խտրականության ծանուցագիր

Խտրականությունը դեմ է օրենքին: L.A. Care-ը հետևում է նահանգային և Դաշնային քաղաքացիական իրավունքների օրենքներին: L.A. Care-ը ապօրինաբար խտրականություն չի գործադրում, անձանց չի բացառում կամ նրանց հետ տարբեր չի վարվում սեռի, ցեղի, գույնի, կրոնի, նախնիների, ազգային ծագման, ազգային խմբերի նույնականացման, տարիքի, հոգեկան հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության, բժշկական վիճակի, գենետիկական տեղեկությունների, ամուսնական կարգավիճակի, գենտերի, սեռական ինքնության կամ սեռական հակումների պատճառով:

L.A. Care-ը մատուցում է՝

- Անվճար օգնություններ և ծառայություններ հաշմանդամներին, որպեսզի օգնի, որ ավելի լավ հաղորդակցեն, ինչպես՝
 - խուլուհամրերի լեզվի որակյալ բանավոր թարգմանիչներ
 - Գրավոր տեղեկություն այլ ձևաչափերով (խոշոր տառատեսակ, ձայնագրություն, էլեկտրոնային մատչելի ձևաչափեր և այլ ձևաչափեր)
- Անվճար լեզվական ծառայություններ անձանց, ում առաջնային լեզուն անգլերենը չէ, ինչպես՝
 - Որակյալ բանավոր թարգմանիչներ
 - Ուրիշ լեզուներով գրված տեղեկություն

Եթե կարիքն ունեք այս ծառայությունների, կապ հաստատեք **Անդամների սպասարկման** հետ, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը, զանգահարելով **1-888-839-9909 (TTY 711)** համարով: Կամ, եթե չեք կարող լավ լսել կամ խոսել, խնդրում ենք զանգահարել 711 համարով՝ օգտագործելու Կալիֆորնիայի փոխանցման ծառայությունը:

Ինչպես ներկայացնել բողոքը

Եթե համոզված եք, որ L.A. Care-ին չի հաջողվել այս ծառայությունները մատուցել, կամ ապօրինաբար խտրականություն է գործադրել մի ուրիշ ճանապարհով՝ սեռի, ցեղի, գույնի, կրոնի, նախնիների, ազգային ծագման, ազգային խմբերի նույնականացման, տարիքի, հոգեկան հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության, բժշկական վիճակի, գենետիկական տեղեկությունների, ամուսնական կարգավիճակի, գենտերի, սեռական ինքնության կամ սեռական հակումների հիմքի վրա, կարող եք բողոք ներկայացնել L.A. Care-ի Քաղաքացիական իրավունքների համակարգողին: Բողոքը կարող եք ներկայացնել գրավոր, անձամբ, կամ էլեկտրոնային միջոցով՝



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
 հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

- **Հեռախոսով՝** Կապ հաստատեք կ.ա. 8-ից կ.հ. 5-ը զանգահարելով **1-213-694-1250**, լրացուցիչ հեռախոսահամար՝ **4292**: Կարող եք նաև զանգահարել **Անդամների սպասարկում 1-888-839-9909** համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Այս հեռախոսազանգն անվճար է: Կամ, եթե չեք կարող լավ լսել կամ խոսել, խնդրում ենք զանգահարել (TTY **711**)՝ օգտագործելու Կալիֆորնիայի փոխանցման ծառայությունը:
- **Գրավոր՝** Լրացրեք գանգատի ձևաթուղթ կամ նամակ գրեք և ուղարկեք այս հասցեով՝

Civil Rights Coordinator
c/o Appeals & Grievances Department
L.A. Care Health Plan
1055 West 7th Street, 10th Floor
Los Angeles, CA 90017
1-213-694-1250 լրացուցիչ համար 4292 (TTY **711**)
Էլ. փոստ՝ civilrightscoordinator@lacare.org

- **Անձամբ՝** Այցելեք Ձեր բժշկի գրասենյակը կամ L.A. Care և հայտնեք, որ ուզում եք բողոք ներկայացնել:
- **Էլեկտրոնային միջոցով՝** Այցելեք L.A. Care-ի կայքը՝ lacare.org:

Քաղաքացիական իրավունքների գրասենյակ – Կալիֆորնիայի Առողջական խնամքի սպասարկման բաժին

Կարող եք նույնպես քաղաքացիական իրավունքների գանգատ ներկայացնել Կալիֆորնիայի Առողջական խնամքի սպասարկման բաժնի (Department of Health Care Services) Քաղաքացիական իրավունքների գրասենյակ (Office of Civil Rights) հեռախոսով, գրավոր, կամ էլեկտրոնային միջոցով՝

- **Հեռախոսով՝** Զանգահարեք **916-440-7370** համարով: Եթե չեք կարող լավ խոսել կամ լսել, խնդրում ենք զանգահարել **711** համարով (Հեռահաղորդակցությունների փոխանցման ծառայություն [Telecommunications Relay Service]):
- **Գրավոր՝** Լրացրեք գանգատի ձևաթուղթ կամ նամակ ուղարկեք հետևյալ հասցեին՝
Deputy Director, Office of Civil Rights
Department of Health Care Services
Office of Civil Rights
P.O. Box 997413, MS 0009
Sacramento, CA 95899-7413
Գանգատի ձևաթղթերը տրամադրելի են հետևյալ կայքում՝
https://www.dhcs.ca.gov/Pages/Language_Access.aspx:
- **Էլեկտրոնային միջոցով՝** Էլ. նամակ ուղարկեք հետևյալին՝ CivilRights@dhcs.ca.gov:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Քաղաքացիական իրավունքների գրասենյակ – ԱՄՆ Առողջապահության և մարդու ծառայությունների նախարարություն

Եթե համոզված եք, որ Ձեզ դեմ խտրականություն է գործադրվել ցեղի, գույնի, ազգային ծագման, տարիքի, հաշմանդամության կամ սեռի հիմքի վրա, կարող եք նաև քաղաքացիական իրավունքների գանգատ ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և մարդու ծառայությունների նախարարության (U.S. Department of Health and Human Services) Քաղաքացիական իրավունքների գրասենյակ հեռախոսով, գրավոր, կամ էլեկտրոնային միջոցով՝

- **Հեռախոսով՝** Զանգահարեք **1-800-368-1019** համարով: Կամ, եթե չեք կարող լավ լսել կամ խոսել, խնդրում ենք զանգահարել TTY **1-800-537-7697** կամ **711** համարով՝ օգտագործելու Կալիֆորնիայի փոխանցման ծառայությունը:

- **Գրավոր՝** Լրացրեք գանգատի ձևաթուղթ կամ նամակ ուղարկեք հետևյալ հասցեին՝

U.S. Department of Health and Human Services
200 Independence Avenue, SW
Room 509F, HHH Building
Washington, D.C. 20201

Գանգատի ձևերը գտնվում են <https://www.hhs.gov/ocr/complaints/index.html> կայքում:

- **Էլեկտրոնային միջոցով՝** Այցելեք Քաղաքացիական իրավունքների գանգատի կայքամուտք՝ <https://ocrportal.hhs.gov/ocr/cp>:

Որպես անդամ ներգրավվելու եղանակներ

L.A. Care-ը ցանկանում է լսել Ձեզանից: Ամեն ամիս, L.A. Care-ը հանդիպումներ է ունենում քննարկելու համար, թե ինչն է հաջող ընթանում և L.A. Care-ը ինչպես կարող է բարելավել: Անդամները հրավիրվում են մասնակցելու: Եկեք հանդիպման:

L.A. Care-ի Տարածաշրջանային համայնքային խորհրդատու հանձնաժողովներ

L.A. Care-ը ունի տասնմեկ Տարածաշրջանային համայնքային խորհրդատու հանձնաժողով (Regional Community Advisory Committee, RCAC) Լոս Անջելես վարչաշրջանում (RCAC-ը արտասանվում է «ռաք»): Այս խումբը բաղկանում է L.A. Care-ի անդամներից, մատակարարներից և առողջական խնամքի պաշտպաններից: Նրանց նպատակն է իրենց համայնքների ձայնը հասցնել L.A. Care-ի Կառավարիչների խորհրդին, որը ուղղություն է տալիս առողջական խնամքի ծրագրերին՝ մեր անդամներին ծառայելու համար: Այս խմբին կարող եք միանալ ցանկանալու դեպքում: Խումբը քննարկում է ինչպես բարելավել L.A. Care-ի քաղաքականությունները և պատասխանատու է հետևյալին՝



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

- Օգնել, որ L.A. Care-ը հասկանա Ձեր տարածքում բնակվող անձանց ազդող առողջական խնամքի հարցերը
- Գործել որպես աչքերն ու ականջները L.A. Care-ի՝ 11 RCAC շրջաններում, Lnu Անջելես վարչաշրջանի ողջ տարածքում
- Առողջապահական տեղեկություններ մատուցել Ձեր համայնքի անձանց

Եթե ցանկանում եք մաս կազմել այս խմբին, զանգահարեք **1-888-522-2732** համարով: Կարող եք նաև հավելյալ տեղեկություն գտնել առցանց՝ lacare.org կայքում:

L.A. Care-ի Կառավարիչների խորհրդի նիստեր

Կառավարիչների խորհուրդը սահմանում է L.A. Care-ի քաղաքականությունը: Որևէ անձ կարող է մասնակցել նիստերին: Կառավարիչների խորհրդի նիստերն անցկացվում են յուրաքանչյուր ամսվա առաջին հինգշաբթին, կ.հ. 2-ին: Կառավարիչների խորհրդի նիստերի և ժամանակացույցների թարմացումների վերաբերյալ հավելյալ տեղեկություն կարող եք գտնել lacare.org կայքում:

Գաղտնիության գործելակերպի ծանուցագիր

Մի հայտարարություն, ինչը նկարագրում է բժշկական արձանագրությունների գաղտնիությունը պահպանելու համար L.A. Care-ի քաղաքականություններն ու ընթացակարգերը, տրամադրելի է և Ձեզ կտրվի այն խնդրելուց հետո:

ԱՅՍ ԾԱՆՈՒՑԱԳԻՐԸ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՁԵՐ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՁԵՁ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ, ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ԱՅՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ: **ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԱՅՆ ՈՒՇԱԴԻՐ ՔՆՆԵԼ:**

Lnu Անջելես վարչաշրջանի Տեղական նախաձեռնության առողջապահական իշխանությունը (Local Initiative Health Authority for Los Angeles County), մի հանրային էություն, որը գործում և գործարարությամբ է զբաղվում որպես L.A. Care, Ձեր առողջական խնամքի նպաստներն ու ապահովագրությունը մատուցում է նահանգային, Դաշնային և առևտրական ծրագրերի միջոցով: Ձեր պաշտպանված առողջական տեղեկության (Protected Health Information, PHI) անվտանգ պահպանումը կարևոր է մեզ համար: L.A. Care-ը պարտավոր է Ձեզ տալ այս ծանուցագիրը Ձեր իրավունքների և մի շարք պարտավորությունների մասին՝ անվտանգ պահելու համար Ձեր PHI-ը, ներառյալ՝ Կալիֆորնիա նահանգի գործելակերպի ծանուցագիրը և Առողջական ապահովագրության դյուրակրության և հաշվետվության օրենքի (Health Insurance Portability and Accountability Act, HIPAA) գործելակերպի ծանուցագիրը: Այս ծանուցագիրը բացատրում է, թե ինչպես կարող ենք օգտագործել և կիսել Ձեր PHI-ը: Այն նաև բացատրում է, թե ինչ են Ձեր իրավունքները: Հնարավոր է, որ նահանգային օրենքի ներքո ունենաք հավելյալ կամ ավելի խիստ գաղտնիության իրավունքներ:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

I. Ձեր PHI-ը անձնական և գաղտնի է:

L.A. Care-ը ստանում է PHI, որը նույնականացնում է Ձեզ, ինչպես՝ Ձեր անունը, կապի տեղեկությունը, անձնական իրողությունները և ֆինանսական տեղեկությունները մի քանի աղբյուրներից, ինչպես՝ նահանգային, Դաշնային և տեղական գործակալություններից, այն բանից հետո, երբ իրավասու եք դառնում, նշանակվում եք, և/կամ անդամագրվում եք L.A. Care ծրագրին: Մենք նույնպես ստանում ենք Ձեզ վերաբերող PHI, որը Դուք եք տրամադրում մեզ: Նույնպես, մենք PHI ենք ստանում առողջական խնամքի մատակարարներից, ինչպես՝ բժիշկներից, կլինիկաներից, հիվանդանոցներից, լաբորատորիաներից, և ապահովագրության ընկերություններից ու վճարողներից: Մենք այս տեղեկություններն օգտագործում ենք համակարգելու, վավերացնելու, վճարելու և բարելավելու Ձեր առողջական խնամքը, ինչպես նաև հաղորդակցելու Ձեզ հետ: Մենք Ձեր գենետիկական տեղեկությունները չենք կարող օգտագործել որոշելու Ձեզ առողջական խնամքի ապահովագրություն տալը կամ այդ ապահովագրության գինը: Երբեմն, մենք կարող ենք ստանալ Ձեզ վերաբերող ցեղային, ազգային և լեզվական տեղեկություններ: Մենք այս տեղեկությունները կարող ենք օգտագործել Ձեզ օգնելու, Ձեզ հետ հաղորդակցելու և Ձեր կարիքները պարզելու համար, ինչպես՝ Ձեր նախընտրած լեզվով Ձեզ կրթական նյութեր մատուցելը և Ձեզ անվճար բանավոր թարգմանչական ծառայություններ առաջարկելը: Մենք այս տեղեկություններն օգտագործում և կիսում ենք այնպես, ինչպես ներկայացվում է այս ծանուցագրում: Մենք այս տեղեկությունները չենք օգտագործում որոշելու Ձեզ առողջական խնամքի ապահովագրություն տալը կամ այդ ապահովագրության գինը:

II. Ինչպես ենք պաշտպանում Ձեր PHI-ը

L.A. Care-ը հանձն է առել պաշտպանել Ձեր PHI-ը: Մենք մեր ընթացիկ և նախկին անդամների PHI-ը պահում ենք գաղտնի և ապահով, ինչպես պահանջվում է օրենքով և հավատարմագրման չափանիշներով: Մենք ֆիզիկական և էլեկտրոնային պաշտպանություններ ենք օգտագործում և մեր անձնակազմը կանոնավորապես մարզվում է PHI-ի օգտագործման և կիսման կապակցությամբ: PHI-ը անվտանգ պահելու մի քանի եղանակներից են գրասենյակների ապահովումը և գրասենյակներն ու թղթածրարների պահարանները կողպելը, համակարգիչներն ու էլեկտրոնային սարքերը գաղտնաբառերով պաշտպանելը, և մատչելի դարձնելը միայն այն տեղեկությունների, որոնք անձնակազմին անհրաժեշտ են իր աշխատանքը կատարելու համար: Որտեղ օրենքն է պահանջում, երբ մեր առևտրական գործընկերները գործում են մեզ հետ, նրանք ևս պարտավոր են պաշտպանել գաղտնիությունը որևէ PHI-ի, որը կիսում ենք նրանց հետ, և նրանց չի թույլատրվում PHI-ը տալ ուրիշների, բացառությամբ օրենքներով և այս ծանուցագրով թույլատրվածների: Ինչպես օրենքն է պահանջում, մենք Ձեզ կիմացնենք Ձեր չապահովված PHI-ի խախտման դեպքերը: Մենք կհետևենք այս ծանուցագրին և չենք օգտագործի և կիսի Ձեր տեղեկությունները, բացի այս ծանուցագրում նկարագրված եղանակից, կամ նահանգային և Դաշնային օրենքների ենթարկվելով, կամ ըստ Ձեր արտոնության:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

III. Գաղտնիության գործելակերպի այս ծանուցագրի փոփոխությունները

L.A. Care-ը պարտավոր է կառչած մնալ ներկայումս իր օգտագործած ծանուցագրին: Մենք իրավունք ունենք այս գաղտնիության գործելակերպի ծանուցագիրը փոխելու որևէ ժամանակ: Կատարված որևէ փոփոխություն կտարածվի Ձեր բոլոր PHI-երի վրա, ներառած՝ փոփոխությունից առաջ մեր ունեցած տեղեկությունը: Մենք տեղեկատու թերթիկի, նամակի կամ մեր կայքի միջոցով Ձեզ կհմացնենք երբ փոխենք այս ծանուցագիրը: Կարող եք նաև մեզանից խնդրել պատճենը նոր ծանուցագրի. խնդրում ենք ստորև տեսնել մեզ դիմելու եղանակը:

IV. Ինչպես կարող ենք օգտագործել և բացահայտել Ձեզ վերաբերող PHI-ը

L.A. Care-ը հավաքում, օգտագործում և կիսում է PHI-ը, ինչպես թույլատրվում է օրենքով, բուժման, վճարման և առողջական խնամքի գործողությունների համար, որոնք առնչվում են Ձեր անդամագրված ծրագրին: Մեր օգտագործած և կիսած PHI-ը ընդգրկում է, առանց դրանցով սահմանափակվելու՝

- Անուն.
- Հասցե.
- Ստացված խնամք և բուժում.
- Առողջական պատմություն. և
- Խնամքի համար ծախսեր/վճարումը:

Ինչպիսի եղանակներով ենք մենք սովորաբար օգտագործում և կիսում PHI-ը՝

Մենք PHI-ը ընդհանրապես օգտագործում և կիսում ենք հետևյալ եղանակներով՝

- **Բուժում՝ Մենք բուժում չենք մատուցում,** բայց կարող ենք PHI-ը օգտագործել և կիսել առողջական խնամքի և այլ ծառայության մատակարարների հետ, ինչպես՝ բժիշկներ, հիվանդանոցներ, տևական օգտագործման բժշկական սարքեր հայթայթողներ և ուրիշներ՝ Ձեզ խնամք և բուժում և այլ ծառայություններ, ինչպես նաև Ձեզ օգտակար տեղեկություններ առաջարկելու համար:
- **Վճարում՝** Մենք կարող ենք PHI-ը օգտագործել և կիսել առողջական խնամքի մատակարարների, ծառայություններ մատուցողների և այլ ապահովագրողների և վճարողների հետ, ընթացքի մեջ դնելու վճարման խնդրանքներն ու վճարելու Ձեզ մատուցված առողջական ծառայությունների համար:
- **Առողջական խնամքի գործողություններ՝** Մենք կարող ենք PHI-ը օգտագործել և կիսել մեր կազմակերպությունը վարելու և ըստ անհրաժեշտության Ձեզ հետ կապ հաստատելու համար, օրինակ՝ հաշվեքննությունների, որակի բարելավման, խնամքի կառավարման, խնամքի համակարգման և առօրյա գործառույթների համար: Մենք նաև կարող ենք PHI-ը օգտագործել և կիսել նահանգային, Դաշնային և Վարչաշրջանային ծրագրերի հետ՝ մասնակցության և ծրագրի վարման համար:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711):**
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
 հեռախոսագիծ՝ **711:** Այցելեք առցանց՝ lacare.org:

• **PHI-ի օգտագործման եղանակների օրինակներ՝**

- Տեղեկություն տալու մի բժշկի կամ հիվանդանոցի, հաստատելու Ձեր նպաստները, համավճարը կամ հանելիները:
- Նախօրոք վավերացնելու խնամքը:
- Ընթացքի մեջ դնելու և վճարելու պահանջները Ձեր ստացած առողջական խնամքի ծառայությունների և բուժման համար:
- Ձեր բժշկին կամ հիվանդանոցին տալու PHI-ը, որպեսզի կարողանան բուժել Ձեզ:
- Վերանայելու Ձեր ստացած խնամքի և ծառայությունների որակը:
- Օգնելու Ձեզ և Ձեզ մատուցելու կրթական և առողջության բարելավման տեղեկություններ և ծառայություններ, ինչպես՝ շաքարախտի նման վիճակների համար:
- Ձեզ տեղեկացնելու հավելյալ ծառայությունների և ծրագրերի մասին, որոնք կարող են Ձեզ հետաքրքրել և/կամ օգնել, ինչպես՝ ամրակազմության դասընթացները L.A. Care-ի Համայնքային աղբյուրների կենտրոնում:
- Հիշեցնելու Ձեզ, որ ենթարկվեք կանոնավոր առողջական գնահատումների, զննումների կամ ստուգումների:
- Մշակելու որակի բարելավման ծրագրեր և նախաձեռնություններ, ներառյալ՝ ստեղծումը, օգտագործումը կամ կիսումը ապանույնականացված տվյալների, ինչպես թույլատրվում է HIPAA-ի կողմից:
- Օգտագործելու և կիսելու տեղեկություններ, ուղղակի կամ անուղղակի կերպով, առողջապահական տեղեկատու կենտրոնների հետ՝ բուժման, վճարման և առողջական խնամքի գործողությունների համար:
- Հետաքննելու և դատելու գործեր, ինչպես՝ խարդախությունը, վատնումն ու չարաշահումը:

V. Ուրիշ ինչպիսի եղանակներով կարող ենք օգտագործել և կիսել PHI-ը՝

Մեզ թույլատրվում է կամ մեզանից պահանջվում՝ Ձեր PHI-ը կիսել այլ եղանակներով, սովորաբար մասնակցելու հանրային բարիքին, ինչպես՝ հանրային առողջապահության և հետազոտության: Մենք կարող ենք PHI-ը օգտագործել և կիսել հետևյալ հավելյալ նպատակներով՝

- Ենթարկվելու նահանգային, Դաշնային և տեղական օրենքների:
- Ենթարկվելու իրավապահ գործակալության մի պահանջի, ինչպես՝ ոստիկանությունը, ռազմական կամ ազգային անվտանգության գործակալությունը, կամ Դաշնային, նահանգային կամ տեղական ինքնակառավարման գործակալության կամ մարմնի, ինչպես՝ աշխատավորների փոխհատուցման խորհուրդը կամ առողջապահության վերահսկման գործակալությունը, օրենքով լիազորված և դատական կամ վարչական հրահանգով գործունեությունների համար:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

- Ընդառաջելու Առողջապահության և մարդու սպասարկման նախարարության, եթե նա ցանկանում է ստուգել, որ ենթարկվում ենք դաշնային գաղտնիության օրենքներին:
- Օգնելու արտադրանքների հետկոչման:
- Տեղեկագրելու դեղամիջոցների անբարենպաստ հակազդեցությունները:
- Տեղեկագրելու կասկածելի չարաշահումը, անտեսումը կամ տնային բռնարարքը, ինչպես պահանջվում կամ թույլատրվում է օրենքի ներքո:
- Առողջապահության և հետազոտության համար:
- Ընդառաջելու օրգանի և հյուսվածքի նվիրման խնդրանքների, և գործակցելու բժշկական քննչի կամ հուղարկավորության տնօրենի հետ:
- Գանգատների, հետաքննությունների, դատավարությունների և օրինական գործողությունների կապակցությամբ:
- Կանխարգելելու կամ մեղմացնելու որևէ անձի առողջության կամ անվտանգության ուղղված լուրջ սպառնալիքը:

VI. Ձեզ հետ հաղորդակցելը

Մենք PHI-ը կարող ենք օգտագործել հաղորդակցելու Ձեզ կամ Ձեր նշանակած անձի հետ՝ Ձեր նպաստների, ծառայությունների, Ձեր առողջական խնամքի մատակարարի ընտրության և վճարելի հաշիվների և վճարումների մասին: L.A. Care-ը Ձեզ հետ հաղորդակցելիս կենթարկվի կիրառելի օրենքներին, ներառյալ՝ Հեռախոսի սպառողի պաշտպանության օրենքը (Telephone Consumer Protection Act, TCPA): Մենք Ձեզ հետ կարող ենք հաղորդակցել նամակների, տեղեկատու թերթիկների, գրքույկների միջոցով, և ըստ հետևյալի՝

- **Հեռախոսազանգեր:** Եթե Ձեր հեռախոսի համարը տվել եք մեզ (ներառյալ՝ եթե խնամատարը կամ նշանակված անձը տվել է իր հեռախոսի համարը), ներառյալ՝ Ձեր բջջային հեռախոսի համարը, ապա մենք, ինչպես նաև մեր գործակիցներն ու ենթակապալառուները մեր անունից, կարող ենք զանգահարել Ձեզ, այդ թվում և օգտագործելով հեռախոսով զանգահարելու ինքնաշխատ համակարգ/կամ արհեստական ձայն, կիրառելի օրենքների համաձայն: Ձեր դյուրակիր բջջային հեռախոսի ընկերությունը թերևս գանձում կատարի Ձեր ստացած զանգերի համար. խնդրում ենք այս տեղեկության համար դիմել Ձեր բջջային հեռախոսի ընկերության: Եթե չեք ցանկանում, որ Ձեզ հետ կապ հաստատվի այս եղանակով, խնդրում ենք զանգահարողին իմացնել, կամ դիմել մեզ՝ մեր Մի զանգահարեք (Do Not Call) ցուցակում ընդգրկվելու համար:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
 հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

- Տեքստային հաղորդակցություն:** Եթե ստորագրել եք L.A. Care-ի տեքստային հաղորդակցության համաձայնության ձևաթղթերը և Ձեր հեռախոսի համարը տվել եք մեզ (ներառյալ՝ եթե խնամատարը կամ նշանակված անձը տվել է իր հեռախոսի համարը), ապա որոշակի նպատակներով, ինչպես՝ հիշեցումները, բուժման ընտրանքները, ծառայությունները և ապահովագնի վճարման հիշեցումները կամ հաստատումները, մենք, ինչպես նաև մեր գործակիցներն ու ենթակապալառուները մեր անունից, կարող ենք տեքստ ուղարկել Ձեզ, կիրառելի օրենքների համաձայն: Ձեր դյուրակիր բջջային հեռախոսի ընկերությունը թերևս գանձում կատարի Ձեր ստացած տեքստերի համար, խնդրում ենք այս տեղեկության համար դիմել Ձեր բջջային հեռախոսի ընկերության: Եթե որևէ ժամանակ չեք ցանկանում տեքստային պատգամներ ստանալ, խնդրում ենք հետևել պատգամի ապաբաժանորդագրման տեղեկության, կամ խնդրում ենք պատասխանել «ԴԱԴԱՐԵՑՆԵԼ» (STOP), որպեսզի այնուհետև չստանաք այդպիսի պատգամներ:
- Էլեկտրոնային փոստ:** Եթե Ձեր էլ. փոստի հասցեն տվել եք մեզ (ներառյալ՝ եթե խնամատարը կամ նշանակված անձը տվել է իր էլ. փոստի հասցեն), ապա մի շարք սահմանափակ նպատակներով, ինչպես՝ Ձեզ անդամագրումներ, անդամի, մատակարարի և կրթական նյութեր ուղարկելը, կամ հիշեցումները կամ վճարման հաստատումները, եթե համաձայնվեք էլեկտրոնային միջոցով ստանալ դրանք, ապա մենք կարող ենք էլ. փոստ ուղարկել Ձեզ: Հնարավոր է, որ Ձեր համացանցի կամ էլ. փոստի կամ բջջային հեռախոսի ընկերությունը գանձում կատարի Ձեզանից՝ էլ. փոստ ընդունելու համար. խնդրում ենք այս տեղեկության համար դիմել Ձեր համացանցի կամ էլ. փոստի կամ բջջային հեռախոսի ընկերության: Դուք հաստատում և համաձայնվում եք, որ եթե օգտագործեք չծածկագրված էլ. փոստի հասցե և/կամ համակարգիչ, կամ եթե Ձեր էլ. փոստին մատչեք դյուրակիր սարքով, կամ կիսեք մի էլ. փոստ, կամ համակարգիչ, կամ բջջային հեռախոս, ապա առկա է վտանգ, որ Ձեր PHI-ը ընթերցի մի երրորդ կողմ և Դուք ընդունում եք այդպիսի վտանգը և հրաժարվում եք օրենքի ներքո Ձեր ունեցած որևէ պաշտպանությունից: Եթե որևէ ժամանակ չեք ցանկանում էլ. փոստով պատգամներ ստանալ, խնդրում ենք հետևել պատգամի ներքև գտնվող «Ապաբաժանորդագրեք» (Unsubscribe) հրահանգներին, որպեսզի այնուհետև չստանաք էլ. փոստով հաղորդակցություններ:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711):**
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
 հեռախոսագիծ՝ **711:** Այցելեք առցանց՝ lacare.org:

VII. Գրավոր արտոնություն

Եթե ցանկանանք Ձեր PHI-ը օգտագործել կամ կիսել որևէ նպատակով, որը չի նշվել այս ծանուցագրում, այդ դեպքում մենք կստանանք Ձեր գրավոր արտոնությունը: Օրինակ, շուկայահանման կամ վաճառքի կարիքների նպատակով PHI-ի օգտագործումը կամ կիսումը պահանջում է Ձեր գրավոր արտոնությունը: Եթե օգտագործենք կամ կիսենք հոգեբուժական գրառումներ, նույնպես թերևս մեզ հարկավոր լինի Ձեր արտոնությունը: Ձեր արտոնությունը մեզ տալու դեպքում այն գրավոր կարող էք ջնջել որևէ ժամանակ, և մենք այդ նպատակով Ձեր խնդրանքն ընթացքի մեջ դնելու թվականից հետո չենք օգտագործի կամ կիսի Ձեր PHI-ը: Սակայն եթե արդեն օգտագործել կամ կիսել ենք Ձեր PHI-ը Ձեր արտոնությամբ, ապա մենք չենք կարողանա չեղարկել որևէ գործողություն, որը կատարվել է Ձեր արտոնությունը ջնջելուց առաջ:

VIII. Ձեր իրավունքները

Դուք Ձեր PHI-ի և նրա օգտագործման կամ կիսման վերաբերյալ ունեք որոշակի իրավունքներ: Դուք իրավունք ունեք՝

- **Ստանալու Ձեր առողջական և հայցերի արձանագրությունների պատճենը:**

Կարող եք խնդրել, որ տեսնեք կամ ստանաք պատճենը Ձեր PHI-ի: Մենք Ձեր առողջության և հայցերի արձանագրությունների պատճենը կամ ամփոփումը կտանք Ձեզ: Հնարավոր է, որ մենք չբացահայտենք մի շարք տեղեկություններ և արձանագրություններ, ինչպես օրենքն է թույլատրում, կամ չկարողանանք տալ որոշակի տեղեկություն մի շարք ձևերով, ձևաչափերով կամ մեդիայով: Թերևս տրամաբանական վճար գանձենք Ձեր PHI-ի կրկնօրինակման և փոստով առաքման համար:

L.A. Care-ը Ձեր բժշկական արձանագրությունների ամբողջական պատճենը չի պահում, խնդրում ենք դիմել Ձեր առողջական խնամքի մատակարարին, եթե ցանկանում եք աչքի անցկացնել կամ ստանալ պատճենը Ձեր բժշկական արձանագրությունների, կամ փոխել նրանցում գտնվող մի սխալ:

- **Մեզանից խնդրելու, որ ուղղենք առողջական և հայցերի արձանագրությունները:**

Եթե համոզված եք, որ Ձեր PHI-ում կա մի սխալ, կարող եք մեզանից խնդրել, որ ուղղենք այն: Հնարավոր է, որ լինեն մի շարք տեղեկություններ, որոնք չկարողանանք փոխել, օրինակ՝ բժշկի ախտորոշումը, և մենք դա գրավոր կիմացնենք Ձեզ: Եթե մեկ ուրիշն է տեղեկությունը տվել մեզ, օրինակ՝ Ձեր բժիշկը, ապա մենք Ձեզ կիմացնենք, որպեսզի նրանից խնդրեք դրա ուղղումը:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
 հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

- **Խնդրելու, որ գաղտնորեն հաղորդակցենք Ձեզ հետ:** Կարող եք մեզանից խնդրել, որ Ձեզ հետ շփվենք մի որոշակի եղանակով (օրինակ՝ տան կամ գրասենյակի հեռախոսով) կամ նամակներն առաքենք տարբեր հասցեով: Ոչ բոլոր խնդրանքներին հնարավոր կլինի համաձայնել, սակայն կընդառաջենք տրամաբանական խնդրանքի, օրինակ՝ եթե հայտնեք, որ վտանգի կենթարկվեք եթե այդպես չանենք:
- **Խնդրելու, որ սահմանափակենք այն, ինչ օգտագործում կամ կիսում ենք:** Կարող եք մեզանից խնդրել, որ չօգտագործենք կամ չկիսենք որոշակի առողջական տեղեկություններ բուժման, վճարման կամ մեր գործողությունների համար: Ըստ օրենքի, մենք պարտավոր չենք համաձայնվել Ձեր խնդրանքին, և կարող ենք «ոչ» ասել, եթե այն կազդի Ձեր խնամքին, պահանջների վճարման, գլխավոր գործողությունների, կամ չի համապատասխանում կանոնների, կանոնակարգերի կամ կառավարական գործակալության, կամ իրավապահական խնդրանքների, կամ դատարանի կամ վարչական հրահանգի:
- **Ստանալու ցուցակը նրանց, ում հետ կիսել ենք Ձեր PHI-ը** Կարող եք մեզանից խնդրել ցուցակը (հաշվարկը), թե երբ ենք կիսել Ձեր առողջական տեղեկությունները, ում հետ ենք կիսել, և դրդապատճառների ամփոփ նկարագրությունը: Մենք Ձեզ կտանք ցուցակը Ձեր խնդրած ժամանակահատվածի համար: Ըստ օրենքի, մենք ցուցակը կտանք Ձեր գրավոր խնդրանքի ամսաթվին նախորդող առավելագույնը վեց (6) տարիների: Մենք կընդգրկենք բոլոր բացահայտումները բուժման, վճարման և առողջական խնամքի գործողությունների համար, և որոշակի այլ բացահայտումների, ինչպես՝ երբ տեղեկությունները կիսել ենք Ձեզ հետ, կամ Ձեր արտոնությամբ: Մենք կտանք տարեկան մեկ անվճար համարատվություն, բայց կարող ենք տրամաբանական վճար գանձել որևէ հավելյալ խնդրանքի համար:
- **Ստանալու պատճենը այս գաղտնիության ծանուցագրի:** Կարող եք այս ծանուցագրի թղթյա պատճենն ստանալ զանգահարելով մեզ:
- **Ընտրելու մի անձի, որ գործի Ձեր անունից:** Եթե ինչ-որ անձի բժշկական լիազորագիր եք տվել կամ ինչ-որ անձ Ձեր օրինավոր խնամակալն է, այդ անձը կարող է Ձեր իրավունքները գործադրել և ընտրանքներ կատարել Ձեր PHI-ի վերաբերյալ: Կարող ենք խնդրել, որ Դուք կամ Ձեր նշանակած անձը մի շարք տեղեկություններ կամ փաստաթղթեր տաք մեզ, օրինակ՝ խնամակալությունը շնորհող դատարանի հրահանգի պատճենը: Դուք կամ Ձեր խնամակալը պարտավոր կլինեք լիազորագիր լրացնել. խնդրում ենք դիմել մեզ ստորև նշված համարով՝ իմանալու համար դա անելու կերպը:

Խնդրում ենք զանգահարել մեզ Ձեր ճանաչողական քարտի վրա գտնվող համարով, կամ գրել մեզ՝ պարզելու համար ինչպես խնդրել վերոհիշյալը: Պարտավոր կլինեք Ձեր խնդրանքը գրավոր ներկայացնել և որոշակի տեղեկություններ հայտնել մեզ: Կարող ենք ձևաթուղթ(եր)ը ուղարկել Ձեզ:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
 հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

IX. Գանգատներ

Եթե գտնում եք, որ չենք պաշտպանել Ձեր PHI-ը, իրավունք ունեք գանգատ ներկայացնելու մեր դեմ, ըստ հետևյալի դիմելով մեզ՝

Member Services

1055 West 7th Street, 10th Floor
Los Angeles, CA 90017
Հեռախոս՝ **1-888-839-9909**
TTY՝ **711**

Կարող եք նաև դիմել այստեղ՝

U.S. Department of Health and Human Services
Office for Civil Rights
Attention: Regional Manager
90 7th Street, Suite 4-100
San Francisco, CA 94103
Հեռախոս՝ **1-800-638-1019**
Ֆաքս՝ **1-415-437-8329**
TTY՝ **1-800-537-7697**
www.hhs.gov/ocr/privacy/hipaa/complaints/

Medi-Cal-ի Անդամները կարող են նաև դիմել այստեղ՝

California Department of Health Care Services
Office of HIPAA Compliance
Privacy Officer
1501 Capitol Avenue, MS0010
P.O. Box 997413
Sacramento, CA 95899-7413
www.dhcs.ca.gov

X. Ձեր իրավունքներն օգտագործեք առանց վախի

L.A. Care-ը ոչ մի քայլի չի դիմի Ձեր դեմ՝ այս ծանուցագրի գաղտնիության իրավունքներից օգտվելու կամ գանգատ ներկայացնելու պատճառով:

XI. Գործուն ամսաթիվ

Այս ծանուցագրի սկզբնական գործուն ամսաթիվն է՝ ապրիլի 14, 2003: Այս ծանուցագրի վերջին վերամշակումը կատարվել է հոկտեմբերի 1, 2019 թվին:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

XII. Մեզ դիմելը, կամ Հարցեր, կամ եթե այս ծանուցագիրը ցանկանում եք ուրիշ լեզվով կամ ձևաչափով՝

Եթե հարցեր ունեք այս ծանուցագրի վերաբերյալ, կամ Ձեր իրավունքների կիրառման համար օգնություն եք ցանկանում, կամ այս ծանուցագիրն ուզում եք անվճար ստանալ տարբեր լեզվով (արաբերեն, հայերեն, չինարեն, պարսկերեն, իսպաներեն, կորեերեն, ռուսերեն, իսպաներեն, տագալերեն կամ վիետնամերեն), խոշոր տպատառերով, ձայնագրված, կամ այլընտրական ձևաչափով (խնդրվելուց հետո), խնդրում ենք զանգահարել կամ գրել մեզ ըստ հետևյալի՝

Member Services

1055 West 7th Street, 10th Floor
 Los Angeles, CA 90017
 Հեռախոս՝ **1-888-839-9909**
 TTY՝ **711**

կամ

L.A. Care Privacy Officer

L.A. Care Health Plan
 1055 West 7th Street, 10th Floor
 Los Angeles, CA 90017

Օրենքների մասին ծանուցագիր

Շատ օրենքներ են կիրառվում այս Անդամի տեղեկագրի նկատմամբ: Այս օրենքները կարող են ազդել Ձեր իրավունքների և պարտավորությունների վրա, նույնիսկ եթե օրենքներն այս տեղեկագրում չեն ներառված կամ չեն բացատրված: Այս տեղեկագրին վերաբերող հիմնական օրենքները Medi-Cal ծրագրերին վերաբերող նահանգային և դաշնային օրենքներն են: Այլ դաշնային և նահանգային օրենքներ նույնպես կարող են կիրառվել:

Ծանուցագիր Medi-Cal-ի՝ որպես վերջին ելքի վճարողի, այլ առողջապահական ապահովագրության և վնասի վերականգնման վերաբերյալ

Medi-Cal ծրագիրը ենթարկվում է նահանգային և դաշնային օրենքներին և կանոնակարգերին, որոնք վերաբերում են անդամների առողջական խնամքի համար երրորդ կողմի իրավական պարտավորություններին: L.A. Care-ը կդիմի բոլոր տրամաբանական միջոցներին՝ վստահ լինելու, որ Medi-Cal ծրագիրը լինում է վերջին ելքի վճարողը:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
 հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Medi-Cal-ի անդամները կարող են ունենալ Ուրիշ առողջական ապահովագրություն (Other Health Coverage, OHC), որը նաև կոչվում է մասնավոր առողջական ապահովագրություն: Որպես Medi-Cal-ի իրավասության պայման, Դուք պարտավոր եք դիմել և/կամ պահպանել որևէ տրամադրելի OHC, երբ Ձեզ համար որևէ ծախս չկա:

Դաշնային և Նահանգային օրենքները պահանջում են, որ Medi-Cal-ի անդամները տեղեկացնեն OHC-ն կամ OHC-ի որևէ փոփոխություն: OHC-ն անմիջապես չտեղեկացնելու դեպքում, թերևս հարկադրվեք DHCS-ին հատուցել սխալմունքով վճարված որևէ նպաստի համար: Ձեր OHC-ն ներկայացրեք առցանց <http://dhcs.ca.gov/OHC> կայքում: Եթե համացանցը մատչելի չէ Ձեզ, կարող եք OHC-ն տեղեկացնել Ձեր առողջապահական ծրագրին կամ զանգահարել հետևյալ համարներով՝ **1-800-541-5555** (TTY **1-800-430-7077** կամ **711**. Կալիֆորնիայի ներսում), կամ **1-916-636-1980** (Կալիֆորնիայից դուրս): DHCS-ը իրավունք և պարտավորություն ունի գումարը գանձելու ապահովագրված Medi-Cal-ի ծառայությունների համար, որոնց համար Medi-Cal-ը չէ առաջին վճարողը: Օրինակի համար, եթե վնասվածք եք ստացել ավտովթարի կամ աշխատանքի ժամանակ, մեքենայի կամ աշխատողների փոխհատուցման ապահովագրությունը թերևս հարկադրվի նախ վճարել կամ փոխհատուցել Medi-Cal-ին:

Եթե վնասվել եք և ուրիշ կողմ է պատասխանատու վնասվածքի համար, Դուք կամ Ձեր օրինական ներկայացուցիչը պարտավոր եք DHCS-ին տեղեկացնել օրինական գործողության կամ հայցի դիմելուց հետո 30 օրվա ընթացքում: Ձեր ծանուցագիրը առցանց ներկայացրեք հետևյալին՝

- Անձնական վնասվածքի ծրագիր (Personal Injury Program) <http://dhcs.ca.gov/PI>
- Աշխատավորների փոխհատուցման վերականգնման ծրագիր (Workers Compensation Recovery Program) <http://dhcs.ca.gov/WC>

Ավելին իմանալու համար զանգահարեք **1-916-445-9891** համարով:

Ծանուցագիր անշարժ գույքի միջոցով վճարված գումարի վերադարձման վերաբերյալ

Medi-Cal ծրագիրը պարտավոր է կատարված վճարումների համար պահանջել վերադարձվելը գումարների Medi-Cal-ի որոշակի մահացած անդամների ունեցվածքից, ներառյալ՝ կառավարվող խնամքի ապահովագները բուժքույրական հաստատության ծառայությունների, տանը մատուցվող և համայնքային հիմքով ծառայությունների, ինչպես նաև առնչակից հիվանդանոցի և դեղատոմսային դեղերի ծառայությունների համար, որոնք մատուցվել են Medi-Cal-ի մահացած անդամին՝ 55th տարեկան դառնալու օրը կամ նրանից հետո: Եթե մահացած անդամը չի թողել ունեցվածք կամ մահվան պահին ոչինչ չունի, այդ դեպքում ոչ մի պարտք չի լինի:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
 Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Անշարժ գույքի միջոցով վճարված գումարի վերադարձման վերաբերյալ հավելյալ տեղեկության համար գնացեք <http://dhcs.ca.gov/er> կայքը: Կամ զանգահարեք **1-916-650-0490** համարով կամ ստացեք օրինական խորհուրդ:

Գործողության ծանուցագիր

L.A. Care-ը Ձեզ Գործողության ծանուցագրի (NOA) նամակ կուղարկի ամեն անգամ, որ L.A. Care-ը մերժի, ուշացնի, դադարեցնի կամ բարեփոխի առողջական խնամքի ծառայությունների համար խնդրանքը: Եթե դուք չհամաձայնվեք ծրագրի որոշման հետ, կարող եք միշտ L.A. Care-ին բողոքարկում ներկայացնել: Վերևում տեսեք Բողոքարկումների բաժինը՝ Ձեր բողոքարկումը ներկայացնելու վերաբերյալ կարևոր տեղեկության համար: Երբ L.A. Care-ը Ձեզ NOA ուղարկի, այն Ձեզ կիմացնի Ձեր բոլոր իրավունքները՝ եթե համաձայն չգտնվեք մեր կայացրած որոշման:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

8. Կարևոր թվանշաններ և բառեր, որոնք պետք է իմանալ

Կարևոր հեռախոսահամարներ

- L.A. Care-ի Անդամների սպասարկում
L.A. Care **Member Services 1-888-839-9909** (TTY 711)
- Medi-Cal Rx **800-977-2273** (TTY **800-977-2273** և սեղմել 5 կամ **711**)
- L.A. Care-ի 24-ժամյա Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ
L.A. Care's 24-Hour **Nurse Advice Line 1-800-249-3619** (TTY 711)
- L.A. Care-ի Համապատասխանության թեժ հեռախոսագիծ
L.A. Care Compliance Helpline **1-800-400-4889**
- L.A. Care-ի Ընտանիքի աղբյուրների կենտրոններ
L.A. Care Community Resource Centers – **1-877-287-6290**
- L.A. Care-ի Ընտանիքի աղբյուրների կենտրոն – Boyle Heights
L.A. Care Family Resource Center – Boyle Heights **1-213-294-2840**
- L.A. Care/Blue Shield Promise Health Plan-ի Համայնքային աղբյուրների կենտրոն – East L.A.
L.A. Care/Blue Shield of California Promise Health Plan Community Resource Center – East L.A.
1-213-438-5570
- L.A. Care/Blue Shield Promise Health Plan-ի Համայնքային աղբյուրների կենտրոն – Inglewood
L.A. Care/Blue Shield of California Promise Health Plan Community Resource Center – Inglewood
1-310-330-3130
- L.A. Care/Blue Shield Promise Health Plan-ի Համայնքային աղբյուրների կենտրոն – Lynwood
L.A. Care/Blue Shield of California Promise Health Plan Community Resource Center – Lynwood
1-310-661-3000



Ջանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY 711):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

8 | Կարևոր թվանշաններ և բառեր, որոնք պետք է իմանալ

- L.A. Care/Blue Shield Promise Health Plan-ի Համայնքային աղբյուրների կենտրոն – Metro L.A.
L.A. Care/Blue Shield of California Promise Health Plan Community Resource Center – Metro L.A.
1-877-287-6290
- L.A. Care-ի Ընտանիքի աղբյուրների կենտրոն – Pacoima
L.A. Care Family Resource Center – Pacoima **1-213-438-5497**
- L.A. Care/Blue Shield Promise Health Plan-ի Համայնքային աղբյուրների կենտրոն – Palmdale
L.A. Care/Blue Shield of California Promise Health Plan Community Resource Center – Palmdale
1-213-438-5580
- L.A. Care/Blue Shield Promise Health Plan-ի Համայնքային աղբյուրների կենտրոն – Pomona
L.A. Care/Blue Shield of California Promise Health Plan Community Resource Center – Pomona
1-909-620-1661
- Հաշմանդամության ծառայություններ
 - Կալիֆորնիայի փոխանցման ծառայություն
California Relay Service (CRS) – (TTY **711**)
 - **1-888-877-5379**
 - **1-800-735-2922**
 - Հաշմանդամ ամերիկացիների օրենքի մասին տեղեկություն
Americans with Disabilities Act (ADA) Information **1-800-514-0301** (TTY **1-800-514-0383**)
- Երեխաների ծառայություններ
 - Կալիֆորնիայի Երեխաների ծառայություններ
California Children’s Services (CCS) **1-800-288-4584**
 - Երեխայի առողջություն և հաշմանդամության կանխում
Child Health and Disability Prevention (CHDP) **1-800-993-2437** (**1-800-993-CHDP**)
- Կալիֆորնիայի նահանգային ծառայություններ
 - Կալիֆորնիայի առողջական խնամքի սպասարկման բաժին
California State Department of Health Services (DHCS) **1-916-445-4171**
 - Medi-Cal-ի Կառավարվող խնամքի Իրավապաշտպանի գրասենյակ
Medi-Cal Managed Care Office of the Ombudsman **1-888-452-8609**
 - Medi-Cal Dental Program (Denti-Cal) **1-800-322-6384** (TTY/TDD **1-800-735-2922**)
 - Կալիֆորնիայի Սոցիալական սպասարկությունների բաժին
California Department of Social Services (CDSS) **1-800-952-5253**
 - Կառավարվող առողջական խնամքի բաժին
Department of Managed Health Care (DMHC) **1-888-466-2219** (**1-888-HMO-2219**)
(TTY/TDD **1-877-688-9891**)



Ջանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

- Առողջական խնամքի ընտրանքներ՝
 - Արաբերեն **1-800-576-6881**
 - Հայերեն **1-800-840-5032**
 - Կամբոջերեն/Խմերերեն **1-800-430-5005**
 - Կանտոներեն **1-800-430-6006**
 - Անգլերեն **1-800-430-4263**
 - Պարսկերեն **1-800-840-5034**
 - Հմոնգերեն **1-800-430-2022**
 - Կորեերեն **1-800-576-6883**
 - Լաոսերեն **1-800-430-4091**
 - Մանդարին **1-800-576-6885**
 - Ռուսերեն **1-800-430-7007**
 - Իսպաներեն **1-800-430-3003**
 - Տազալերեն **1-800-576-6890**
 - Վիետնամերեն **1-800-430-8008**
 - TTY/TDD՝ **1-800-430-7077**
 - ԱՄՆ Քաղաքացիական իրավունքների գրասենյակ
U.S. Office for Civil Rights **1-866-627-7748**
 - Սոցիալական ապահովության վարչության Լրացուցիչ սոցիալական եկամուտ
Social Security Administration Supplemental Social Income (SSI) **1-800-772-1213**
 - Լոս Անջելես վարչաշրջան - Հանրային Սոցիալական սպասարկման բաժին
Los Angeles County - Department of Public Social Services (DPSS)՝
Հաճախորդի սպասարկման կենտրոն Customer Service Center
1-866-613-3777 (TTY/TDD **1-800-660-4026**)
 - Լոս Անջելես վարչաշրջանի Առողջապահական սպասարկության բաժին
Los Angeles County Department of Health Services **1-213-240-8101**
 - Լոս Անջելես վարչաշրջանի Հոգեկան առողջության բաժին
Los Angeles County Department of Mental Health **1-800-854-7771**
 - Կանայք, նորածիններ և երեխաներ
Women, Infant and Children Program (WIC) **1-888-942-9675**



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Բառեր, որոնք պետք է իմանալ

Ակտիվ երկունք՝ Այն ժամանակամիջոցը, երբ կինը գտնվում է ծննդաբերության երեք փուլերում և կամ հնարավոր չէ նրան ժամանակին անվտանգ փոխադրել մի ուրիշ հիվանդանոց ծննդաբերությունից առաջ, կամ փոխադրությունը կարող է վնասել կնոջ կամ չծնված երեխայի առողջության և անվտանգության:

Ամբուլատոր խնամք՝ Երբ պարտավոր չեք գիշերել հիվանդանոցում կամ այլուր Ձեզ անհրաժեշտ բժշկական խնամքի համար:

Ամերիկյան հնդկացի՝ Մի անհատ, ով սահմանվել է U.S.C. Տիտղոս 25-ի հետևյալ բաժիններում՝ 1603(c), 1603(f), 1679(b) կամ ով իրավասու է որոշել, որպես հնդկացի, համաձայն 42 C.F.R. 136.12-ի կամ Հնդկացիների առողջական խնամքի բարելավման օրենքի (Indian Health Care Improvement Act) Տիտղոս Title V-ի, առողջական խնամքի ծառայություններ ստանալ Հնդկացիների առողջական խնամքի մատակարարներից (Հնդկացիների առողջապահական ծառայություն [Indian Health Service], Հնդկացիների ցեղախումբ [Indian Tribe], Ցեղախմբային կազմակերպություն [Tribal Organization] կամ Քաղաքային հնդկացիների կազմակերպություն [Urban Indian Organization]–I/T/U) կամ ուղղորդման միջոցով՝ Պայմանագրային առողջապահական ծառայությունների (Contract Health Services) ներքո:

Ամերիկյան հնդկացիների առողջապահական մատակարար (Indian Health Care Provider, IHCP)՝ Առողջապահական կլինիկա, որը բանեցվում է Հնդկացիների առողջապահական ծառայության (Indian Health Service, IHS) կամ Հնդկացիների ցեղախմբի, Ցեղախմբային կազմակերպության կամ Քաղաքային հնդկացիների կազմակերպության կողմից:

Անբուժելի հիվանդների խնամք՝ Մահացու հիվանդություն ունեցող անդամի համար ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգևոր անհանգստությունները նվազեցնող խնամք: Մահացու հիվանդի խնամքը տրամադրելի է, երբ անդամն ունի 6 ամիս կամ նվազ ապրելու ակնկալություն:

Անդամ՝ Որևէ իրավասու Medi-Cal-ի նպաստառու, ով անդամագրվել է L.A. Care-ին և իրավունք ունի ստանալու ապահովագրված ծառայություններ:

Անդամագրյալ՝ Անձ, ով անդամ է առողջապահական ծրագրին և ծառայություններ է ստանում ծրագրի միջոցով:

Անկախ ծննդաբերության կենտրոններ (Freestanding Birth Center, FBC)՝ Առողջապահական հաստատություններ, որտեղ նախատեսվում է ծննդաբերություն իրականացնել հղի կնոջ բնակության վայրից դուրս, որոնք նահանգի կողմից արտոնագրվել կամ այլ կերպ վավերացվել են՝ մատուցելու նախածնական երկունք և ծննդաբերություն կամ հետծննդաբերական խնամք և ծրագրում ընդգրկված ուրիշ ամբուլատոր ծառայություններ: Այս հաստատությունները հիվանդանոցներ չեն:



Ջանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Ապահովագրություն (ապահովագրված ծառայություններ)՝ Առողջապահական ծառայությունները, որոնք մատուցվում են L.A. Care-ի անդամներին՝ համաձայն Medi-Cal-ի ընդհանուր դրույթների, պայմանների, սահմանափակումների և բացառությունների, և ըստ այս Ապահովագրության ապացույցում (Evidence of Coverage, EOC) նշված որևէ բարեփոխման:

Ապանդամագրել՝ Այս ծրագրի օգտագործման դադարեցումը, քանի որ այլևս չեք որակավորվում դրա համար կամ անցել եք մի նոր առողջապահական ծրագիր: Պարտավոր եք ստորագրել մի ձևաթուղթ, որը նշում է, որ այլևս չեք ուզում օգտվել այս ծրագրից, կամ զանգահարել HCO և ապանդամագրվել հեռախոսի միջոցով:

Առաջնային խնամք՝ Անցեք «Սովորական խնամք»:

Առաջնային խնամքի մատակարար (Primary Care Provider, PCP)՝ Արտոնագրված մատակարարը, ում ունեք Ձեր հիմնական առողջական խնամքի համար: Ձեր PCP-ն կօգնի Ձեզ, որ ստանաք Ձեզ անհրաժեշտ խնամքը: Մի շարք խնամքի կարիքներ պետք է առաջուց վավերացվեն, բացի այն դեպքերից, երբ՝

- Ունեք արտակարգ իրավիճակ
- Ձեզ անհրաժեշտ է Մանկաբարձ/Գինեկոլոգի խնամք
- Ձեզ անհրաժեշտ են զգայուն ծառայություններ
- Ձեզ անհրաժեշտ են ընտանիքի ծրագրման ծառայություններ/ծննդյան հսկողություն

Ձեր PCP-ն կարող է լինել՝

- Ընդհանուր բժշկության մասնագետ
- Ներքին հիվանդությունների մասնագետ
- Մանկաբույժ
- Ընտանեկան բժշկության մասնագետ
- Մանկաբարձ/Գինեկոլոգ
- Ամերիկյան հնդկացիների առողջապահական մատակարար (Indian Health Care Provider, IHCP)
- Դաշնային որակավորման առողջապահական կենտրոն (Federally Qualified Health Center, FQHC)
- Գյուղական առողջապահական կլինիկա (Rural Health Clinic, RHC)
- Առաջնային խնամք տրամադրող բուժքույր
- Օգնական բժիշկ
- Կլինիկա



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Առողջական ապահովագրություն՝ Ապահովագրական ծածկույթ, որը վճարում է բժշկական և վիրաբուժական ծախքերը, ապահովագրված անձին փոխհատուցելով հիվանդության կամ վնասվածքի պատճառած ծախքերը, կամ ուղղակի վճարելով խնամքի մատակարարին:

Առողջական խնամքի ընտրանքներ (Health Care Options, HCO)՝ Ծրագիրը, որը կարող է Ձեզ անդամագրել առողջապահական ծրագրի կամ ապանդամագրել նրանից:

Առողջական խնամքի մատակարարներ՝ Բժիշկներ կամ մասնագետներ, ինչպես՝ վիրաբույժները, քաղցկեղ բուժող բժիշկները, կամ այն բժիշկները, ովքեր բուժում են մարմնի հատուկ մասեր և գործում են L.A. Care-ի հետ կամ գտնվում են L.A. Care-ի ցանցում: L.A. Care-ի ցանցի մատակարարները պարտավոր են արտոնագիր ունենալ Կալիֆորնիայում գործելու համար և Ձեզ մատուցել L.A. Care-ի ապահովագրած մի ծառայություն:

Ձեզ սովորաբար ուղեգիր է հարկավոր Ձեր PCP-ից՝ մասնագետի գնալու համար: Ձեր PCP-ն պարտավոր է նախավավերացում ստանալ L.A. Care-ից, նախքան Դուք խնամք կստանաք մասնագետից:

Ձեզ Ձեր PCP-ից ուղեգիր անհրաժեշտ **չէ** որոշ տեսակի ծառայությունների համար, ինչպես՝ ընտանիքի ծրագրումը, շտապ օգնությունը, Մանկաբարձ/Գինեկոլոգի խնամքը կամ զգայուն ծառայությունները:

Արտակարգ իրավիճակի բժշկական վիճակ՝ Մի բժշկական կամ հոգեկան վիճակ այնպիսի սուր ախտանիշներով, ինչպես՝ ակտիվ երկունքը (սահմանումը տեսնել վերևում), կամ սուր ցավը, որը առողջապահական և բժշկական գիտելիքների տեր տրամաբանող պարզ անձին կարող է հավատացնել, որ անմիջական բժշկական խնամք չստանալը կարող է՝

- Ձեր կամ Ձեր չժնված երեխայի առողջությունը ենթարկել լուրջ վտանգի
- Խանգարում պատճառել մարմնական գործառույթի
- Պատճառ դառնալ, որ մարմնի մասը կամ օրգանը լավ չգործի

Արտակարգ իրավիճակի բժշկական փոխադրություն՝ Հիվանդակառքով կամ արտակարգ իրավիճակի մեքենայով փոխադրություն դեպի շտապ օգնության կայան՝ արտակարգ իրավիճակի բժշկական խնամք ստանալու համար:

Արտատարածքային ծառայություններ՝ Ծառայություններ՝ երբ անդամը գտնվում է սպասարկման տարածքից դուրս որևէ վայրում:

Արտացանցային մատակարար՝ L.A. Care-ի ցանցին մաս չկազմող մատակարար:

Բացառված ծառայություններ՝ Ծառայություններ, որոնք չեն ապահովագրվում Կալիֆորնիայի Medi-Cal ծրագրով:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711):**
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711:** Այցելեք առցանց՝ lacare.org:

Բժշկական տուն՝ Խնամքի մոդել, որը ավելի լավորակ խնամք կմատուցի, կբարելավի անդամների՝ իրենց սեփական խնամքի ինքնատնօրինումը և կնվազեցնի անտեղի ծախսերը ժամանակի ընթացքում:

Բժշկական փոխադրություն՝ Փոխադրություն՝ երբ չեք կարող ապահովագրված բժշկական ժամադրության գնալ և/կամ դեղատոմսային դեղեր վերցնել մարդատար մեքենայով, ավտոբուսով, գնացքով կամ տաքսիով: L.A. Care-ը վճարում է ամենից էժան փոխադրությունը Ձեր բժշկական կարիքների համար, երբ Ձեզ փոխադրություն է հարկավոր Ձեր ժամադրության համար:

Բժշկականորեն անհրաժեշտ (կամ բժշկական անհրաժեշտություն)՝ Բժշկականորեն անհրաժեշտ խնամքը ներկայացնում է կարևոր ծառայություններ, որոնք տրամաբանական են և պաշտպանում են կյանքը: Այս խնամքն անհրաժեշտ է արգելելու համար հիվանդների լուրջ հիվանդ կամ հաշմանդամ դառնալը: Այս խնամքը նվազեցնում է սաստիկ ցավը՝ բուժելով ախտը, հիվանդությունը կամ վնասվածքը: 21 տարեկանից փոքր անդամների համար Medi-Cal-ի բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները ներառում են բժշկականորեն անհրաժեշտ խնամքը՝ ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ վիճակը ուղղելու կամ օգնելու համար, ներառյալ թմրանյութի օգտագործման խանգարումները, ինչպես սահմանվել է Միացյալ Նահանգների օրենսգրքի 42-րդ Տիտղոսի 1396d(r) բաժնում:

Բժշկի ծառայություններ՝ Ծառայություններ, որոնք մատուցվում են նահանգային օրենքի ներքո բժշկություն կամ կմախսամկանային թերապիա կիրառելու նպատակով արտոնագրված անձի կողմից, առանց ներառելու ծառայությունները, որոնք մատուցվում են բժշկի կողմից, երբ Ձեզ ընդունել են հիվանդանոց և դրանց համար ծախս է ներկայացվել հիվանդանոցի հաշվում:

Բողոք՝ Անդամի դժգոհության բանավոր կամ գրավոր արտահայտությունը L.A. Care-ի, մատակարարի կամ մատուցված ծառայությունների նկատմամբ: Գանգատը բողոքի օրինակ է:

Բողոքարկում՝ Անդամի խնդրանք է, որ L.A. Care-ը վերանայի և փոխի մի որոշում, որը մենք կայացրել ենք խնդրված ծառայության ապահովագրման վերաբերյալ:

Գանգատ՝ Անդամի դժգոհության բանավոր կամ գրավոր արտահայտությունը L.A. Care-ի, մատակարարի կամ մատուցված ծառայությունների որակի նկատմամբ: Գանգատը նույնն է ինչ՝ բողոքը:

Գյուղական առողջապահական կլինիկա (Rural Health Clinic, RHC)՝ Առողջապահական կենտրոն մի վայրում, որտեղ չկան առողջական խնամքի բազմաթիվ մատակարարներ: RHC-ում կարող եք ստանալ առաջնային և կանխարգելիչ խնամք:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Գործի կառավարիչ՝ Գրանցված բուժքույրեր, արտոնագրված զբաղմունքային բուժքույրեր կամ սոցիալական աշխատողներ, ովքեր կարող են օգնել, որ հասկանաք գլխավոր առողջական խնդիրներ և խնամք դասավորեք Ձեր մատակարարների հետ:

Դաշնային որակավորման առողջապահական կենտրոն (Federally Qualified Health Center, FQHC)՝ Առողջապահական կենտրոն մի վայրում, որտեղ չկան առողջական խնամքի բազմաթիվ մատակարարներ: FQHC-ում կարող եք ստանալ առաջնային և կանխարգելիչ խնամք:

Դեղատոմսային դեղեր՝ Մի դեղ, որը օրինականորեն պահանջում է արտոնագրված մատակարարից պատվեր՝ բաշխվելու համար:

Դեղատոմսային դեղերի ապահովագրություն՝ Ապահովագրություն մատակարարի կողմից նշանակված դեղերի համար:

Դեղացանկ՝ Ցանկը դեղերի և իրերի, որոնք համապատասխանում են որոշակի չափանիշների և վավերացվել են անդամների համար:

DHCS՝ Կալիֆորնիայի Առողջական խնամքի սպասարկման բաժնի ծառայություններ: Սա նահանգային գրասենյակն է, որը վերահսկում է Medi-Cal ծրագիրը:

DMHC՝ Կալիֆորնիայի Կառավարվող առողջական խնամքի բաժին: Սա նահանգային գրասենյակն է, որը վերահսկում է կառավարվող խնամքի առողջապահական ծրագրերը:

Երեխայի առողջություն և հաշմանդամության կանխում (Child Health and Disability Prevention, CHDP): Հանրային առողջապահական ծրագիր, որը փոխհատուցում է հանրային և մասնավոր առողջական խնամքի մատակարարներին վաղ առողջական գնահատումների համար, որպեսզի հայտնաբերվեն կամ կանխարգելվեն հիվանդություններն ու հաշմանդամությունը երեխաների և պատանիների մոտ: Ծրագիրը օգնում է երեխաների և պատանիների, որ իրենց մատչելի լինի սովորական առողջական խնամքը: Ձեր PCP-ն կարող է մատուցել CHDP-ի ծառայություններ:

Երկարաժամկետ խնամք՝ Հաստատությունում ընդունման ամսից ավելի երկար ժամանակով խնամք:

Զգայուն ծառայություններ՝ Ծառայություններ ընտանիքի ծրագրման, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (Sexually Transmitted Infection, STI), ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, սեռական բռնության և վիժումների համար:

Ընտանիքի ծրագրման ծառայություններ՝ Հղիությունը կանխարգելելու կամ ուշացնելու ծառայություններ:

Լուրջ հիվանդություն՝ Հիվանդություն կամ վիճակ, որը պետք է բուժել և կարող է մահացություն պատճառել:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Խարդախություն՝ Խաբելու կամ ապակողմնորոշելու միտումնավոր արարք անձի կողմից, ով գիտի, որ խաբեությունը կարող է հանգեցնել չլիազորված նպաստի տվյալ անձի կամ ուրիշի համար:

Խնամքի շարունակում՝ Ծրագրի անդամի կարողությունը՝ շարունակելու Medi-Cal-ի ծառայություններն ստանալ իր ընթացիկ մատակարարից մինչև 12 ամիս, առանց ծառայությունների ընդմիջման, եթե մատակարարն ու L.A. Care-ը համաձայնվեն:

Ծրագիր՝ Անցեք «Կառավարվող խնամքի ծրագիր»:

Կալիֆորնիայի Երեխաների Ծառայություններ (California Children’s Services, CCS)՝ Medi-Cal-ի մի ծրագիր, որը ծառայություններ է մատուցում մինչև 21 տարեկան երեխաների, ովքեր ունեն որոշակի հիվանդություններ և առողջական խնդիրներ:

Կառավարվող խնամքի ծրագիր՝ Medi-Cal-ի ծրագիր, որն օգտվում է միայն որոշակի բժիշկներից, մասնագետներից, կլինիկաներից, դեղատներից և հիվանդանոցներից՝ ծրագրին անդամագրված Medi-Cal ընդունողների համար: L.A. Care-ը կառավարվող խնամքի ծրագիր է:

Կլինիկա՝ Մի հաստատություն, որը անդամները կարող են ընտրել որպես իրենց Առաջնային խնամքի մատակարար (Primary Care Provider, PCP): Այն կարող է լինել Դաշնային որակավորման առողջապահական կենտրոն (Federally Qualified Health Center, FQHC), համայնքային կլինիկա, Գյուղական առողջապահական կլինիկա (Rural Health Clinic, RHC), Հնդկացիների առողջապահության մատակարար (Indian Health Care Provider, IHCP) կամ առաջնային խնամքի այլ հաստատություն:

Համայնքային հիմքով չափահասի սպասարկում (Community-Based Adult Services, CBAS)՝ Ամբուլատոր, հաստատությունում տրամադրվող ծառայություններ հմուտ բուժքույրական խնամքի համար, սոցիալական ծառայություններ, թերապիաներ, անձնական խնամք, ընտանիքի անդամի և խնամակալի վերապատրաստում և աջակցություն, սննդային ծառայություններ, փոխադրություններ և այլ ծառայություններ որակավորվող անդամների համար:

Համավճար՝ Ձեր կատարած վճարումը, ընդհանրապես ծառայության պահին, ի հավելումն ապահովագրող կողմի վճարման:

Հանրային առողջապահական ծառայություններ՝ Առողջապահական ծառայություններ, որոնք ուղղված են ողջ բնակչության: Սրանք ընդգրկում են, ուրիշների կարգին, առողջական վիճակի վերլուծում, առողջության հսկում, առողջության խթանում, կանխարգելիչ ծառայություններ, վարակիչ հիվանդության կառավարում, միջավայրի պաշտպանություն և առողջագիտություն, աղետի պատրաստվածություն և հակազդում, և աշխատանքային առողջապահություն:



Ջանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711):**
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Հաստատված հիվանդ՝ Մի հիվանդ, ով առկա հարաբերություն ունի մի մատակարարի հետ և այդ մատակարարին տեսել է ծրագրի կողմից հաստատված որոշակի ժամանակի ընթացքում:

Հետազոտական բուժում՝ Բուժման դեղ, կենսաբանական արտադրանք կամ սարք, որը հաջողությամբ ավարտել է FDA-ի կողմից վավերացված կլինիկական հետազոտության առաջին փուլը, բայց որը հաստատված չէ FDA-ի կողմից ընդհանուր օգտագործման համար և մնում է հետազոտության տակ՝ FDA-ի կողմից վավերացված կլինիկական հետազոտության մեջ:

Հետևման խնամք՝ Բժշկի սովորական խնամք՝ ստուգելու հիվանդի բարելավումը հիվանդանոցային բուժումից հետո կամ բուժման ընթացքում:

Հետ-կայունացման ծառայություններ՝ Ապահովագրված ծառայություններ, որոնք կապ ունեն արտակարգ իրավիճակի բժշկական վիճակի հետ և մատուցվում են անդամի կայունացումից հետո, որպեսզի պահպանեն կայունացված վիճակը: Հետ-կայունացման խնամքի ծառայությունները ապահովագրվում են և վճարվում: Արտացանցային հիվանդանոցներին նախավավերացում կարող է պետք լինել:

Հիվանդանոց՝ Վայր, որտեղ կարող եք բժշկներից և բուժքույրերից ստանալ ստացիոնար և ամբուլատոր խնամք:

Հիվանդանոցային բուժում՝ Հիվանդանոց ընդունում՝ որպես ստացիոնար հիվանդ բուժման համար:

Հիվանդանոցի ամբուլատոր խնամք՝ Բժշկական կամ վիրաբուժական խնամք, որը հիվանդանոցում իրականացվում է առանց այնտեղ որպես ստացիոնար ընդունվելու:

Հմուտ բուժքույրական խնամք՝ Ապահովագրված ծառայություններ, որոնք մատուցվում են արտոնագրված բուժքույրերի, տեխնիկների և/կամ թերապևտների կողմից հմուտ բուժքույրական հաստատությունում կեցության ընթացքում կամ անդամի տանը:

Հմուտ բուժքույրական հաստատություն՝ Վայր, որը մատուցում է 24-ժամյա բուժքույրական խնամք, որը կարող են տալ միայն պատրաստված առողջապահական մասնագետները:

Հոգեբուժական արտ ակարգ իրավիճակի վիճակ՝ Հոգեկան խանգարում, որտեղ ախտանիշներն այնքան են լուրջ կամ սաստիկ, որ առաջացնում են կա՛մ անմիջական վտանգ Ձեր անձին կամ ուրիշների նկատմամբ, կա՛մ էլ անմիջականորեն անկարող եք ապահովել կամ օգտագործել սնունդ, ապաստան կամ հագուստեղեն՝ հոգեկան խանգարման հետևանքով:



Ջանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ՝ Ամբուլատոր ծառայություններ անդամների համար, ովքեր ունեն մեղմից չափավոր հոգեկան առողջության վիճակներ, ներառյալ՝

- Անհատական կամ խմբային հոգեկան առողջության գնահատում և բուժում (հոգեբուժություն)
- Հոգեբանական ստուգում, երբ կլինիկապես ցուցադրված է՝ հոգեկան առողջության վիճակը գնահատելու համար
- Ամբուլատոր ծառայություններ, որոնք նպատակ ունեն դեղաբուժումը հսկել
- Հոգեբուժական խորհրդատվություն
- Ամբուլատոր լաբորատորային անալիզներ, պաշարներ և լրացուցիչներ

Հոգեկան առողջության ծառայությունների մատակարար՝ Արտոնագրված անհատներ, ովքեր հիվանդներին մատուցում են հոգեկան առողջության և վարքագծային առողջության ծառայություններ:

Հրատապ խնամք (կամ հրատապ ծառայություններ)՝ Ծառայություններ, որոնք մատուցվում են բժշկական խնամք պահանջող ոչ-արտակարգ իրավիճակի հիվանդության, վնասվածքի կամ վիճակի համար: Հրատապ խնամքը կարող էք ստանալ արտացանցային մատակարարից, եթե ցանցի մատակարարները ժամանակավորապես տրամադրելի կամ մատչելի չեն:

Մահացու հիվանդություն՝ Բժշկական վիճակ, որը հնարավոր չէ շրջել և շատ հավանական է, որ մահացնի մեկ կամ նվազ տարվա ընթացքում, եթե հիվանդությունը հետևի իր բնական ընթացքին:

Մանկաբարձական ծառայություններ՝ Նախածնական, ծննդաբերության ընթացքում և հետծննդաբերական խնամքը, ներառյալ՝ ընտանիքի ծրագրման խնամքը մոր և անմիջական խնամքը նորածնի համար, որը մատուցվում է վկայագրված բուժքույր-մանկաբարձների (Certified Nurse Midwife, CNM) և արտոնագրված մանկաբարձների (Licensed Midwife, LM) կողմից:

Մասնագետ (կամ մասնագիտացած բժիշկ)՝ Բժիշկ, ով բուժում է որոշ տեսակի առողջական խնամքի խնդիրներ: Օրինակ, ոսկրաբույժ վիրաբույժը բուժում է կոտրած ոսկորները. ավերգիաների մասնագետը բուժում է ավերգիաները. և սրտաբանը բուժում է սրտի խնդիրները: Հիմնականում, մասնագետի այցելելու համար Ձեզ անհրաժեշտ է Ձեր PCP-ից մի ուղեգիր:

Մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններ՝ Ծառայություններ անդամների համար, ովքեր ունեն հոգեկան առողջության ծառայությունների կարիքներ, որոնք մեղմից կամ չափավորից ավելի բարձր մակարդակի խանգարում են ներկայացնում:



Ջանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Մասնակից հիվանդանոց՝ Արտոնագրված հիվանդանոց, որը պայմանագիր է կնքել L.A. Care-ի հետ, որպեսզի ծառայություններ մատուցի անդամին՝ անդամի խնամք ստանալու պահին: Ապահովագրված ծառայությունները, որոնք մի շարք մասնակից հիվանդանոցներ թերևս առաջարկում են անդամներին, սահմանափակվում են L.A. Care-ի օգտագործման վերանայումով և որակի երաշխավորման քաղաքականություններով կամ հիվանդանոցի հետ L.A. Care-ի ունեցած պայմանագրով:

Մասնակից մատակարար (կամ մասնակից բժիշկ)՝ Մի բժիշկ, հիվանդանոց կամ ուրիշ արտոնագրված առողջական խնամքի մասնագիտական կամ արտոնագրված առողջապահական հաստատություն, ներառյալ՝ ենթասուր խնամքի հաստատությունները, որոնք պայմանագիր ունեն L.A. Care-ի հետ՝ անդամներին առաջարկելու ապահովագրված ծառայություններ, երբ անդամը խնամք է ստանում:

Մատակարարների հասցեագիրք՝ L.A. Care-ի ցանցում գտնվող մատակարարների ցանկ:

Medi-Cal Rx՝ FFS Medi-Cal դեղատան նպաստի ծառայություն, որը հայտնի է որպես «Medi-Cal Rx», որը մատուցում է դեղատնային նպաստներ և ծառայություններ, ներառյալ դեղատոմսային դեղեր և որոշ բժշկական պաշարներ Medi-Cal-ի բոլոր նպաստառուներին:

Medicare՝ Դաշնային առողջության ապահովագրության ծրագիր՝ 65 տարեկան և ավելի տարեց անձանց, որոշ ավելի երիտասարդ հաշմանդամների, և վերջին շրջանի երիկամային հիվանդություն (մշտական երիկամային անբավարարություն, որը պահանջում է դիալիզ կամ երիկամի փոխպատվաստում, որը երբեմն կոչվում է ESRD) ունեցող անձանց համար:

Նախավավերացում (կամ նախօրոք լիազորում)՝ Ձեր PCP-ն կամ ուրիշ մատակարարներ պարտավոր են նախավավերացում ստանալ L.A. Care-ից, Ձեզ որոշակի ծառայություններ տրվելուց առաջ: L.A. Care-ը կվավերացնի միայն Ձեզ անհրաժեշտ ծառայությունները: L.A. Care-ը չի վավերացնի ոչ-մասնակից մատակարարների ծառայությունները, եթե L.A. Care-ը համոզված է, որ կարող եք համապատասխան կամ ավելի հարմար ծառայություններ ստանալ L.A. Care-ի մատակարարներից: Ուղեգիրը վավերացում չէ: Պարտավոր եք վավերացում ստանալ L.A. Care-ից:

Նախօրոք լիազորում (նախավավերացում)՝ Մի պաշտոնական գործընթաց, որի դեպքում առողջական խնամքի մատակարարից որոշակի ծառայություններ մատուցելուց կամ ընթացակարգեր իրականացնելուց առաջ պահանջվում է վավերացում ստանալ:

Նպաստներ՝ Առողջական խնամքի ծառայություններ և դեղեր, որոնք ապահովագրվում են այս առողջապահական ծրագրի ներքո:

Նպաստների համակարգում (Coordination of Benefits, COB)՝ Որոշման գործընթացը՝ թե ո՞ր ապահովագրական ծածկույթը (Medi-Cal, Medicare, առևտրային ապահովագրություն կամ այլ) ունի առաջնային բուժման և վճարման պարտավորություններ անդամների համար, ովքեր ունեն մեկից ավելի առողջական ապահովագրության ծածկույթ:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Շտապ օգնության կայանի խնամք՝ Քննություն, որը կատարում է բժիշկը (կամ օրենքի թույլատրության համաձայն բժշկի ցուցմունքի ներքո գործող անձնակազմը), պարզելու համար արտակարգ իրավիճակի բժշկական վիճակի առկայությունը: Բժշկականորեն անհրաժեշտ ծառայություններ, որոնք հարկավոր են հաստատության հնարավորությունների ծիրում Ձեր վիճակը դարձնելու կլինիկականորեն կայուն:

Ոչ բժշկական փոխադրություն՝ Փոխադրություն՝ երբ Medi-Cal-ի ապահովագրված ծառայության համար Ձեր մատակարարի լիազորումով նշանակված ժամադրության եք գնում և այնտեղից վերադառնում և երբ դեղատոմսային դեղեր և բժշկական պաշարներ եք վերցնում:

Ոչ-դեղացանկային դեղ՝ Դեղերի դեղացանկում չնշված դեղ:

Ոչ-մասնակից մատակարար՝ L.A. Care-ի ցանցում չգտնվող որևէ մատակարար:

Ոսկրահարդար՝ Մատակարար, ով ձեռային շարժումների միջոցով բուժում է ողնաշարը:

Որակյալ մատակարար՝ Բժիշկը, ով որակավորվել է Ձեր վիճակը բուժելուն հարմար հմտության մարզում:

Ուղեգիր՝ Երբ Ձեր PCP-ն հայտնում է, որ խնամքը կարող եք ստանալ ուրիշ մատակարարից: Մի շարք ապահովագրված խնամքներ և ծառայություններ պահանջում են ուղեգիր և նախավավերացում (նախօրոք լիազորում):

Ուրիշ առողջական ապահովագրություն (Other Health Coverage, OHC)՝ Ուրիշ առողջական ապահովագրությունը (OHC) նշանակում է մասնավոր առողջական ապահովագրություն և Medi-Cal-ից տարբեր վճարողներ ծառայության համար: Ծառայությունները կարող են ներառել բժշկական, ատամնաբուժական, տեսողական, դեղատան և/կամ Medicare-ի լրացուցիչ ծրագրերը (C և D Մաս):

Չապահովագրված ծառայություն՝ Ծառայություն, որը L.A. Care-ը չի ապահովագրում:

Պայմանագրային դեղերի ցանկ (Contract Drugs List, CDL)՝ Medi-Cal Rx-ի համար վավերացված ցանկը, որից Ձեր բժիշկը կարող է պատվիրել Ձեզ անհրաժեշտ ապահովագրված դեղերը:

Պրոթեզային սարք՝ Մի արհեստական սարք, որը կցվում է մարմնին՝ մարմնի բացակա մասը փոխարինելու համար:

Սովորական խնամք՝ Բժշկականորեն անհրաժեշտ ծառայություններ և կանխարգելիչ խնամք, քաջառողջ երեխայի այցեր, կամ խնամք, ինչպես՝ սովորական հետևումի խնամքը: Սովորական խնամքի նպատակն է առողջական խնդիրների կանխարգելումը:



Ձանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Սուր՝ Բժշկական վիճակ, որը հանկարծահաս է, պահանջում է արագ բժշկական ուշադրություն և երկար չի տևում:

Սպասարկման տարածք՝ L.A. Care-ի սպասարկած աշխարհագրական տարածքը: Սա ներառում է Լոս Անջելես վարչաշրջանը:

Ստացիոնար խնամք՝ Երբ պարտավոր եք գիշերել հիվանդանոցում կամ այլուր Ձեզ անհրաժեշտ բժշկական խնամքի համար:

Վաղ և պարբերաբար զննում, ախտորոշում և բուժում (Early and Periodic Screening, Diagnosis and Treatment, EPSDT)՝ EPSDT ծառայությունները նպաստ են Medi-Cal-ի 21 տարեկանից փոքր անդամների համար, նրանց առողջ պահելու համար: Անդամները պետք է անցնեն իրենց տարիքի համար ճիշտ առողջական ստուգումներ համապատասխան զննումներ՝ առողջական խնդիրներ հայտնաբերելու և հիվանդությունները վաղ բուժելու համար, ինչպես նաև որևէ բուժում՝ հոգ տանելու կամ օգնելու այն վիճակներին, որոնք կարող են հայտնաբերվել ստուգումների ժամանակ:

Վերականգնողական թերապիայի ծառայություններ և սարքեր՝ Ծառայություններ և սարքեր՝ որպեսզի վնասվածքներով, հաշմանդամությամբ կամ քրոնիկ վիճակներով անձանց օգնեն ձեռք բերել մտային և ֆիզիկական ունակություններ կամ վերատիրանալ դրանց:

Վերականգնողական ծառայություններ և սարքեր՝ Առողջական խնամքի ծառայություններ, որոնք օգնում են, որ պահեք, սովորեք կամ բարելավեք ունակությունները և գործունեությունները առօրյա կյանքի համար:

Վերականգնողական վիրաբուժություն՝ Վիրահատություն՝ ուղղելու կամ վերանորոգելու մարմնի անբնականոն կառուցվածքներ, որպեսզի բարելավի գործառույթը կամ ստեղծի հնարավորինս բնականոն տեսք: Մարմնի անբնականոն կառուցվածքները նրանք են, որոնք առաջանում են մի բնածին թերությունից, զարգացական անբնականոնություններից, տրավմայից, վարակից, նորագոյացություններից կամ հիվանդությունից:

Վկայագրված բուժքույր-մանկաբարձ (Certified Nurse Midwife, CNM)՝ Մի անհատ, ով արտոնագրվել է որպես Գրանցված բուժքույր և վկայագրվել է որպես բուժքույր-մանկաբարձ Կալիֆորնիայի Գրանցված բուժքույրերի խորհրդի կողմից: Վկայագրված բուժքույր-մանկաբարձին արտոնվում է հաճախել բնականոն ծննդաբերության դեպքերի:

Վճարովի ծառայությամբ (Fee-For-Service, FFS) Medi-Cal՝ Երբեմն Ձեր Medi-Cal ծրագիրը ծառայություններ չի ապահովագրում, բայց Դուք դեռևս կարող եք դրանք ստանալ Medi-Cal FFS-ի միջոցով, ինչպես՝ դեղատան բազմաթիվ ծառայություններ FFS Medi-Cal Rx-ի միջոցով:

Տանը մատուցվող առողջական խնամք՝ Տանը մատուցվող հմուտ բուժքույրական խնամք և այլ ծառայություններ:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

Տանը մատուցվող առողջական խնամքի մատակարարներ՝ Մատակարարներ, որոնք Ձեզ տալիս են տանը մատուցվող հմուտ բուժքույրական խնամք և այլ ծառայություններ:

Տեսակավորում (կամ զննում)՝ Ձեր առողջական վիճակի գնահատումը այն բժշկի կամ բուժքրոջ կողմից, ով հատուկ պատրաստություն ունի՝ որոշելու Ձեր խնամքի անհրաժեշտության հրատապությունը:

Տևական օգտագործման բժշկական սարքեր (Durable Medical Equipment, DME)՝ Սարք՝ որը բժշկականորեն անհրաժեշտ է և այն պատվիրել է Ձեր բժիշկը կամ ուրիշ մատակարար: L.A. Care-ը կորոշի, թե DME-ը վարձել է պետք, թե՞ գնել: Վարձի գները չպետք է գերազանցեն գնման գինը: Բժշկական սարքերի վերանորոգումն ապահովագրվում է:

Ցանց՝ Բժիշկների, կլինիկաների, հիվանդանոցների և ուրիշ մատակարարների մի խումբ, որը խնամքի մատուցման համար պայմանագիր է կնքել L.A. Care-ի հետ:

Ցանցի մատակարար (կամ ներցանցային մատակարար)՝ Անցեք «Մասնակից մատակարար»:

Ցավամոքիչ խնամք՝ Լուրջ հիվանդություն ունեցող անդամի համար ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգևոր անհանգստությունները նվազեցնող խնամք: Ցավամոքիչ խնամքը անդամից չի պահանջում ունենալ 6 ամիս կամ նվազ ապրելու ակնկալություն:

Փորձառական բուժում՝ Դեղեր, սարքավորումներ, ընթացակարգեր կամ ծառայություններ, որոնք գտնվում են փորձարկման փուլում՝ լաբորատորային և/կամ կենդանիների ուսումնասիրություններով՝ նախքան մարդկանց վրա փորձարկումը: Փորձառական ծառայությունները չեն ենթարկվում կլինիկական հետազոտության:



Քրոնիկ վիճակ՝ Մի հիվանդություն կամ ուրիշ բժշկական վիճակ, որը հնարավոր չէ լրիվ բուժել կամ որը վատանում է ժամանակի ընթացքում կամ անհրաժեշտ է այն դարմանել, որպեսզի ավելի չվատանաք:

Օրթոգային սարք՝ Որպես հենարան օգտագործվող մի սարք կամ դրսից մարմնին ամրացված ամրակ՝ նեցուկ ընծայելու կամ ուղղելու մի խիստ շատ վնասված կամ ախտահարված մարմնի մաս և որը բժշկականորեն անհրաժեշտ է անդամի բժշկական ապաքինման համար:



Զանգահարեք անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը:
Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման
հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:



 Անվճար հեռախոսահամար՝ **1.888.839.9909** | TTY 711  lacare.org

